



INFORMATION  
DISPUTES  
COUNCIL

2012

ԽՈՐՀԻՍԵՆՍԹ  
ՎԻՉՈՒՄԻՆԻ

collection of  
opinions

2012


ՆՅԱՍՆՆԵՐՈՒ  
ՎՅԱԾՎԵՐ  
ԳՆԱԿԱԿԱՆ



---

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՎԵՃԵՐԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

Կարծիքների  
ժողովածու



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Երևան 2012

Կազմեցին՝

Շուշան Դոյոյան,  
Արա Ղազարյան,  
Գևորգ Հայրապետյան



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



Տվես կարծիքների ժողովածուն մշակվել և հրատարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված կարծիքներն ու հետևությունները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետները:

ISBN 978-92-9234-160-2

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2012թ.  
© Տեղեկատվական վեճերի խորհուրդ, 2012թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	5
<b>ՏՎԽ կարծիքների առարկայական դասակարգումը.....</b>	<b>5</b>
<b>Կարծիք 1.</b> «Հրապարակ» օրաթերթի 25(695), 31(671), 45(685) համարներում հրապարակված՝ «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում», «Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից», «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով և ստորագրությամբ» վերտառությամբ հոդվածների վերաբերյալ.....	9
<b>Կարծիք 2.</b> «Երկիր» օրաթերթի 13.01.2011թ. 3/2326-րդ համարում հրապարակված՝ «131 դեմք ու դիմակ» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ.....	16
<b>Կարծիք 3.</b> «Իրավունք» թերթի 22.02.2011 թիվ 13 համարում հրապարակված՝ «Կլորիկ գումա՞ր է կրվել» վերնագրով հոդվածի վերաբերյալ.....	22
<b>Կարծիք 4.</b> «Հայկական ժամանակ» օրաթերթի 14.10.2010թ. թիվ 188 (2623) համարում հրապարակված՝ «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ.....	27
<b>Կարծիք 5.</b> «Զորորդը ինքնիշխանություն» թերթի 09.04.2011 թիվ 322 համարում և թերթի ինտերնետային կայքում հրապարակված՝ «Ճանաչել Փարավոնին» վերնագրով հոդվածի վերաբերյալ.....	45
<b>Կարծիք 6.</b> «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը դիմել է ՏՎԽ՝ խնդրելով կարծիք հայտնել օրաթերթի դեմ ՀՀ քաղաքացի Գուրգեն Աղաջանյանի ներկայացրած հայցի կապակցությամբ.....	49
<b>Կարծիք 7.</b> «Իրավունք հետաքննություն» և «Արգունենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի գործով վճռի վերաբերյալ.....	54
<b>Կարծիք 8.</b> «Հրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Ա. Գրիգորյանի հայցի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարշալ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի վերաբերյալ.....	63
<b>Կարծիք 9.</b> Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լ. Բարսեղյանի դեմ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա. Ավետիսյանի դատական հայցի վերաբերյալ.....	67
<b>Կարծիք 10.</b> Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման վերաբերյալ.....	70

<b>Կարծիք 11.</b> Գ. Հայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի ՓԲԸ» գործով դատարանի որոշման վերաբերյալ.....	<b>73</b>
<b>Կարծիք 12.</b> «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի դեմ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ.....	<b>76</b>
<b>Կարծիք 13.</b> «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի դեմ Մուրադ Ասրյանի դատական հայցի վերաբերյալ.....	<b>83</b>
<b>Հայտարարություն 14.</b> «Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի Խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգունենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի դատական գործով դատարանի կայացրած վճռի վերաբերյալ.....	<b>92</b>
<b>Կարծիք 15.</b> «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Ա. Գաբուզյանն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրեկան Եղիազարյանի դատական գործի վերաբերյալ.....	<b>94</b>
<b>Կարծիք 16.</b> «Մեկ Ազգ» կուսակցության դեմ Դանիել Իոաննիսյանի, Բայանդուր Պողոսյանի և Հասմիկ Սիմոնյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա դատարանի կայացրած վճռի վերաբերյալ.....	<b>98</b>
<b>Կարծիք 17.</b> Հայկ Բաբուխանյանի և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի կողմից ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի և լրագրող Է. Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջի հիմքով դատավարության վերաբերյալ.....	<b>102</b>
<b>Կարծիք 18.</b> «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի դեմ «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ -ի հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ.....	<b>106</b>
<b>Կարծիք 19.</b> «Խմբագիր» ՍՊԸ-ի, Էդիկ Անդրեասյանի և Աբել Միքայելյանի դեմ Հայկ Բաբուխանյանի դատական հայցի վերաբերյալ.....	<b>113</b>

## Առաջաբան

**2010** թվականի մայիսին ստեղծվեց Տեղեկատվական վեճերի խորհուրդը որպես արտադատական մարմին՝ նպատակ ունենալով հավասարակշռություն սահմանել մի կողմից՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքների և մյուս կողմից՝ մարդու արժանապատվության և անձնական կյանքի գաղտնիության միջև: Տեղեկատվական վեճերի խորհրդի (այսուհետ՝ ՏՎԽ) հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև անձի արժանապատվությունը և մասնավոր կյանքի իրավունքը՝ այդ իրավունքների իրացման ընթացքում ծագող դատական վեճերի դեպքերում եզրակացություններ կամ հայտարարություններ հրապարակելով, որոնք հիմնված են ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և էթիկայի նորմերի վրա:

Հիմնադրումից մինչ 2012 թվականի հոկտեմբերը խորհուրդը հրապարակել է 19 կարծիք մամուլի դեմ բերված դատական գործերի վերաբերյալ: Այս ժողովածուն ամփոփում է 2011-2012 թթ հրապարակած բոլոր կարծիքները, այսինքն՝ ՏՎԽ-ի մեկամյա գործունեության արդյունքը:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու և օգտագործումն առավել հեշտացնելու նպատակով կարծիքները թեմատիկ դասակարգման են ենթարկվել, ինչպես օրինակ՝ վիրավորանքի և զրպարտության սահմանումները, հանրային շահ, քաղաքական գործիչներ, փաստեր և գնահատական դատողություններ, տեղեկատվության աղբյուր, ատելություն սերմանող խոսք, լրագրողական էթիկա և այլն: Կարծում ենք՝ ժողովածուն օգտակար նյութ կլինի դատավորների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, փաստաբանների և ոլորտով հետաքրքրվող ու շահագրգիռ այլ խմբերի համար:

Ժողովածուն կազմել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ:

## ՏՎԽ կարծիքների առարկայական դասակարգում

### 1. Վիրավորանք և զրպարտություն սահմանումները

- Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- Դանիել Իոաննիսյանը, Բայանդուր Պողոսյանն ու Հասմիկ Սիմոնյանն ընդդեմ «Մեկ Ազգ» կուսակցության

### 2. Հանրային շահ

- «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ-ի
- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի
- Ռոբերտ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի
- «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի

### 3. Քաղաքական գործիչներ

- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ-ի
- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի
- Ռոբերտ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի

### 4. Փաստեր և գնահատողական դատողություններ

- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ-ի
- Ռոբերտ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի
- «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի

### 5. Հրապարակային արտահայտություն

- Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի,
- Դանիել Իոաննիսյանը, Բայանդուր Պողոսյանն ու Հասմիկ Սիմոնյանն ընդդեմ «Մեկ Ազգ» կուսակցության

## 6. Տեղեկատվության աղբյուր

- Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի

## 7. Հումորային և երգիծական ոճ, ծաղրանկարներ

- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ-ի
- Փարավոն Միրզոյանն ընդդեմ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի և Սերգեյ Գևորգի Գասպարյանի
- «Կյանքի խոսք եկեղեցի» կրոնական կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի

## 8. Ատելություն սերմանող խոսք

- «Կյանքի խոսք եկեղեցի» կրոնական կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի
- ՏՎԽ հայտարարությունը վերը նշված գործով

## 9. Բարեխիղճ հայտարարություն (fair comment) պաշտպանությունը

- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի
- Փարավոն Միրզոյանն ընդդեմ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի և Սերգեյ Գևորգի Գասպարյանի
- «Կյանքի խոսք եկեղեցի» կրոնական կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի
- Գևորգ Հայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի ՓԲԸ»-ի

## 10. Հերքում

- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ-ի
- Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն ՍՊԸ-ի
- «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Արա Գաբուլյանն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրեկան Եղիազարյանի
- «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի
- Հայկ Բաբուխանյանն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի, Էդիկ Անդրեասյանի և Արել Միքայելյանի



### 11. Պատասխանի հնարավորություն

- Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրությունը ՍՊԸ-ի
- «Գլենդել Յիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի

### 12. Հայցային վաղեմություն

- «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանն ընդդեմ Լևոն Բարսեղյանի
- Հայկ Բաբուխանյանն ու «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի
- Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի

### 13. Լրագրողական էթիկա

- Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրությունը ՍՊԸ-ի
- Գևորգ Հայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի ՓԲԸ»-ի
- «Գլենդել Յիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի
- Մուրադ Ասրյանն ընդդեմ «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի
- «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Արա Գաբուզյանն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրելյան Եղիազարյանի

### 14. Համացանց և սոցիալական ցանցեր

- Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի
- Մուրադ Ասրյանն ընդդեմ «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի
- Դանիել Իոաննիսյանը, Բայանդուր Պողոսյանն ու Հասմիկ Սիմոնյանն ընդդեմ «Մեկ Ազգ» կուսակցության
- Հայկ Բաբուխանյանն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի, Էդիկ Անդրեասյանի և Աբել Միքայելյանի

### 15. Փոխհատուցման անհամաչափ պահանջ

- Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրությունը ՍՊԸ
- Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի
- Գուրգեն Աղաջանյանն ընդդեմ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ի
- «Գլենդել Յիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի

## 16. Անմեղության կանխավարկած

- Գևորգ Չայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի ՓԲԸ»-ի

## 17. Դատական ստուգման շրջանակները և եղանակը

- Ռուբեն Չայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի
- Փարավոն Միրզոյանն ընդդեմ «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի և Սերգեյ Գևորգի Գասպարյանի
- «Կյանքի խոսք եկեղեցի» կրոնական կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգունենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթերի
- «Կյանքի խոսք եկեղեցի» կրոնական կազմակերպության գործով ՏՎԽ-ի հայտարարությունը
- «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ն ընդդեմ «Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող Նաիրա Խաչիկյանի

## 18. Նախնական գրաքննություն

- Չայկ Բաբուխանյանն ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի, Էդիկ Անդրեասյանի և Արել Միքայելյանի

## Կ Ա Ր Ծ Ի Բ 1.

«Հրապարակ» օրաթերթի 25(695), 31(671),  
45(685) համարներում հրապարակված՝  
«Քոչարյանին ոչնչացնում են,  
Ծառուկյանին՝ բացատրում»,  
«Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից»,  
«Անձամբ Քոչարյանից՝ սխալներով և  
ստորագրությամբ» վերտառությամբ  
հոդվածների վերաբերյալ

Հրապարակված է 01.06.2011-ին

## 1. Փաստերը

12.02.2011թ. «Հրապարակ» օրաթերթի 25(695)-րդ համարում հրապարակվել է «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» վերտառությամբ հոդվածը, այնուհետև դրան հաջորդել են «Հրապարակ» օրաթերթում հրապարակված ևս երկու հոդվածներ՝ «Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից», «Անծամբ Քոչարյանից՝ սխալներով և ստորագրությամբ» վերնագրերով հոդվածները (22.02.2011թ..31(671) և 12.03.2011թ./45(685):

Վերոգրյալ հոդվածներում տեղ գտած՝ պատիվն ու արժանապատվությունը արատավորող, վիրավորող և զրպարտող տեղեկությունների հերքման և վնասի հատուցման պահանջի հայցով 2011թ. մարտի 25-ին ՀՀ երկրորդ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը դիմել է ընդհանուր իրավասության դատարան: Հայցադիմումում ներկայացվել են համապատասխան հոդվածների այն հատվածները, որոնք հայցվորը դիտել է որպես վիրավորանք և զրպարտություն պարունակող: Գործը գտնվում է դատաքննության նախապատրաստական փուլում:

## 2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածները և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ընթացակարգերով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է «իրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

#### **4. Վիճարկվող հոդվածների իրավական վերլուծությունը**

Վիճարկող հոդվածների, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջների վրա:

#### **5. «Քոչարյանին ոչնչացնում են, Ծառուկյանին՝ բացատրում» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան վկայում է այն մասին, որ նման փաստական հանգամանքներով գործեր քննելիս Դատարանը հաշվի է առնում իրապարակման առարկա հանդիսացող խնդրի հանրային նշանակությունը, նպատակը և շեշտադրումը, ընդհանուր համատեքստը, հայցվորի և պատասխանողի կարգավիճակը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր հանգամանքներ, որոնք կներկայացվեն ստորև:

Վիճարկվող հողվածով վերլուծվում են Հայաստանի քաղաքական կյանքում առանցքային դեր ունեցող քաղաքական գործիչների և քաղաքական կուսակցությունների ներքին փոխհարաբերությունները և ազդեցության շրջանակները, ինչը հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող և հանրային նշանակություն ունեցող թեմա է: Ավելին, այս հրապարակումը արվել է նաև Հայաստանի ներքաղաքական կյանքում նախապատրաստվող քաղաքական իրադարձության, այն է՝ ՀՀ իշխող կուսակցությունների միջև ստորագրվելիք կոալիցիոն հուշագրի շուրջ քննարկումների լույսի ներքո, ինչը կրկին հաստատում է խնդրի առնչությունը հանրային շահերին:

Հողվածը պարունակում է նաև անմիջականորեն ՀՀ երկրորդ Նախագահ Ռ. Քոչարյանին ուղղված քննադատական արտահայտություններ, որոնք նրա կողմից վիճարկվել են դատարանում, մասնավորապես.

### 5.1

- *«... Մտքով ինչ անցներ, թե Քոչարյանը անցուդարձին չի դիմանա և իր անմտությանը ասպարեզ կիջնի...»*
- *«Իսկ Քոչարյանը, որքան էլ առանձնանում է գավառականությամբ ու արյունոտուշտությամբ, առանձնակի փայլում է անմտությամբ: Ուղղակի մտածում ես՝ ՀՀ Նախագահի աթոռում թյուրիմացաբար հայտնված այդ էակին մտածելու մարդկային ունակություն ի վերուստ տրված է, թե՞ չէ: Ինչպես մի երկու տարի առաջ դատարկախոսել էր՝ իբր աֆրիկյան սաֆարիում որսորդների հետ կենդանիներից է շատախոսել, երբ ինքն ուղղակի չզիտի ոչ մի լեզու, որով աֆրիկյան մայրցամաքում կարելի է մարդկանց հետ հաղորդակցվել, այժմ էլ՝ ոչ ավել, ոչ պակաս, հայտարարեց, թե իբր ՀՀ-ն ղեկավարները, ողջ թե մահացած, մի այնպիսի ոչնչություն էին, որ կուսակցության նախընտրական ցուցակները անուն առ անուն իր հետ էին համաձայնեցնում»:*
- *«Եթե 2007-ին Քոչարյանն իբր այնպիսի ազդեցություն ուներ, որ անուն առ անուն ՀՀ-ի ցուցակ էր ստուգում, մի կուսակցություն էլ (ՀՀԴ-ն) ուղղակի գրպանում էր պահում, երրորդ կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը որտեղի՞ց էր ծագել:*  
*Եթե ՀՀ-ն ու ՀՀԴ-ն իր վերահսկողության տակ էին, ո՞ւմ կամ ինչի՞նչ էր վստահում, որ իր բիզնես-պրոյեկտ ԲՀ-ն էր ասպարեզ իջեցնում: Միանգամայն հասկանալի է, որ ինքը ոչ մեկին էլ չի վերահսկել, ոչ մեկին էլ չի վստահել, դրա համար էլ նոր ուժ է ստեղծել ի դեմս ԲՀ-ի: Իսկ եթե տեղապահի մտքով կանցնի ճամարտակել՝ իբր ԲՀ-ն ինքը չի ստեղծել՝ գաղափարից մինչև կառույց ու անդամագրված անձինք, թող նման հեքիաթներն իր հայրենի եզերքի հավերհն ու սագերին պատմի»:*
- *«Երևի տեղապահ Քոչարյանը ոչ միայն մտքի, այլև՝ հիշողության կարծության խնդիր ունի: Երևի չի հիշում, թե 2003-ի նախագահական ընտրություններում ինքն ինչ ողորմելի վիճակում էր»:*

Վերոնշյալ արտահայտությունների իրավաչափության վերաբերյալ եզրակացության հանգելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել դրանց բնույթի վերաբերյալ:

Արտահայտվելու ազատության իրավունքի խախտումների վերաբերյալ գործերով եվրոպական դատարանը տարանջատում է կատարում փաստերի և գնահատողական դատողությունների միջև՝ համարելով, որ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունները ապացուցելի չեն. գնահատողական դատողությունների ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են հանգումունքների, նախապատվությունների ոլորտին: Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ գնահատողական դատողության և դրա փաստական հիմքի միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից:

Մատնանշված արտահայտությունների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանք հողվածի հեղինակի կողմից արված գնահատողական դատողություններ են: Որպես այդպիսիք՝ դրանք զուրկ չեն որոշակի փաստական հիմքից, այն է՝ Ռ. Քոչարյանի կողմից տարբեր ժամանակներում արված հայտարարություններից և հանրային տիրույթում շրջանառվող լուրերից, կարծիքներից և ասեկոսեներից: ՄԻԵԴ-ը նաև սահմանել է, որ «հանրային հսկող շան» իրենց դերը կատարելիս՝ լրատվամիջոցների լուսաբանումը «պատմությունների» կամ «ասեկոսեների» կամ «հանրային կարծիքի» լույսի ներքո պետք է պաշտպանվի, եթե այն լիովին անհիմն չէ:

### 5.1.1

- *«Իհարկե, այնպիսի դավաճանության, պետական ու տնտեսական հանցագործությունների ու, ամենակարևորը՝ արյան մեջ թաղված կենսագրություն, ինչպիսին իրենն է, այս երկրագնդի վրա հատուկենտ արարածներ են ունեցել: Նման գարշելի կենսագրությունները սովորաբար միայնակ էլ կերտում են»:*

Ինչ վերաբերում է վերոհիշյալ ձևակերպմանը, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո համարում ենք այն խնդրահարույց հետևյալ պատճառաբանությամբ. վերը նշված արտահայտությունը կարող է դիտվել որպես փաստերի շարադրանք (statement of fact), որով ՀՀ երկրորդ Նախագահը մեղադրվում է որոշ հանցագործությունների կատարման մեջ:

ՄԻԵԴ-ը իր կողմից քննած գործերից մեկում նշել է.

«Հողվածը գրված է այնպիսի եղանակով, որ ընթերցողի մոտ որևէ կասկած չի թողնում հրապարակված նյութի ճշմարտացիության մասին և ոչ էլ որևէ հղում է արվել աղբյուրի վրա: Հետևաբար, չի կարելի ասել, որ լրագրողը...զուտ տեղեկացրել է այն մասին, ինչ խոսում էին այլոք և որ նա զուտ կատարել է այդ տեղեկության վկայակոչում՝ իր անձը հեռու պահելով դրանից: Ընդհակառակը, վիրավորական բնույթի պնդումները նա ներկայացրել է որպես իր սեփական պնդումներ և, հետևաբար, ընկերությունը, որը հրապարակել է դրանք, պատասխանատվություն է կրում դրանց ճշմարտացիության համար»:

Փաստերի շարադրանք պարունակող արտահայտությունների հետ կապված ՄԻԵԴ-ի միանշանակ դիրքորոշումը հետևյալն է. «Արտահայտվելու ազատությունը ենթադրում է պարտավորություններ և պատասխանատվություն և 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները»: Ըստ այդմ, նմանատիպ գործերով պատասխանողից պահանջվում է ներկայացնել ապացույցներ հաստատելու իր պնդումները, այդ թվում՝ դրանց լայնորեն հայտնի փաստ լինելու հանգամանքը,

ինչպես նաև լրագրողի կողմից անկախ ուսումնասիրություն կատարելու հանգամանքը: ՄԻԵԴ-ի ձևավորված դիրքորոշման համաձայն՝ մինչ մամուլի դերը, անկասկած, ենթադրում է իրազեկման պարտականություն հանրային շահին վերաբերող հարցերում, կոնկրետ անձանց ուղղակիորեն մեղադրելը՝ նրանց անունների ու պաշտոնների մատնանշմամբ, պարտավորեցնում է պատասխանողին ներկայացնել իրենց պնդումների համար բավարար փաստական հիմքեր: ՄԻԵԴ-ի դիրքորոշումը նաև այն է, որ իրավասու մարմնի կողմից քրեական մեղադրանքը հիմնավորելու ապացուցման չափորոշիչը հազիվ թե կարելի է համեմատել այն չափորոշիչի հետ, որը պետք է պահպանվի լրագրողի կողմից հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ իր պնդումներում:

Հետևաբար, վերոհիշյալ արտահայտության վերաբերյալ վերջնական եզրակացությունը կախված կլինի պատասխանողի կողմից դատարանում ներկայացվելիք հիմնավորումներից:

## **5.2. «Ինքնակոչ նամակ Քոչարյանի անունից», «Անձամբ Քոչարյանից՝ սխալներով և ստորագրությամբ» վերտառությամբ հոդվածների վերաբերյալ**

Նշված հոդվածներից հայցադիմումում մեջբերվել են հետևյալ արտահայտությունները.

- *«Հետևաբար իմաստ չունի վկայակոչել այն ինչ գոյություն չունի՝ Քոչարյանի բարի համբավ: Ավելի գործնական կլինի օրենքի պահանջը բավարարել՝ հայտարարել, թե Քոչարյանը զբաղվում է գործարարությամբ, ունի գործարար համբավ, հոդվածն էլ դրան վնասել է: Կամ էլ համբավի թեման թողնել հանգիստ:....»*
- *«... Պարզ է, որ կյանքում Քոչարյանին անձնագիր պետք չի գալիս, արտերկիր էլ երևի մեկնում է դիվանագիտական անձնագրով: Բայց ինչ արած ... անողոր իրականություն է՝ անձնագրի ուժը կորցնելուց երեք տարի անց հնարավոր չէ այդ անձնագրով քաղաքացիական հարաբերություն ստեղծել և լիազորություններ տալ: Այնպես, որ 1998-ին անձնագիր ստանալուց և ԳԳ նախագահի թեկնածու առաջադրվելուց հետո այժմ էլ երկրորդ անգամ պետք է պրն. Քոչարյանը դիմի՝ անձնագիրը փոխի և ուժի մեջ համարվող անձնագրով լիազորագիր տա, որպեսզի կարողանա իր հոդվածի հերքում պահանջել (կամ էլ կարող է անձամբ պահանջել՝ անձնագիրը թողնելով մի կողմ):... »*
- *«... գոնե այս երկրի անունը, որի քաղաքացին, էլ չասած նախագահն ես եղել, պետք է գրել կարողանալ կամ սխալ գրված լինելը նկատել թղթին ստորագրություն դնելուց առաջ:...»:*

Վերոնշյալ արտահայտությունների, որպես գնահատողական դատողությունների, իրավաչափության վերաբերյալ ամբողջովին կիրառելի է եզրակացության 4.1.1. կետում ներկայացված վերլուծությունը:

## **6. Վերաբերելի սկզբունքներ**

ՄԻԵԴ-ը տարիներ շարունակ ընդգծել է, որ մամուլը յուրահատուկ տեղ է զբաղեցնում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության համակարգում, քանի որ մամուլը ոչ միայն իրավունք, այլ պարտավորություն ունի տեղեկություններ և գաղա-



փարներ տարածելու հանրային շահին վերաբերող ցանկացած հարցի շուրջ, իսկ հանրությունն իրավունք ունի դրանք ստանալու: Բացի այդ, «լրագրողական ազատությունը ներառում է նաև չափազանցության և նույնիսկ սադրանքի որոշակի աստիճան»: Եվ վերջապես, սանկցիայի կիրառման հանդեպ ունեցած վախը, ըստ ՄԻԵԴ-ի, «սառնեցնող ազդեցություն» ունի արտահայտվելու ազատության իրականացման վրա:

ՄԻԵԴ-ը, այնուհետև, հետևողականորեն պնդել է, որ «ընդունելի քննադատության սահմանները շատ ավելի լայն են քաղաքական գործչի պարագայում, քան մասնավոր անձի: Ի տարբերություն վերջինիս՝ առաջինն անխուսափելիորեն և գիտակցաբար բաց է իր յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման առջև ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորի հանդուրժողականության առավել բարձր աստիճան»: Բացի այդ, ՄԻԵԴ-ի համար խիստ կարևոր է նաև, թե հրապարակումը որքանով է ազդել քննադատության թիրախ դարձած գործչի քաղաքական կարիերայի և մասնագիտական կյանքի վրա:

Վերջապես, միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցումը պահանջում է, որպեսզի պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս ներպետական դատարանները հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Մասնավորապես՝ Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործում ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ, դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և հետևաբար եղել են անչափ խիստ:

Սույն գործով հայցվորի կողմից պահանջվող փոխհատուցման ու դատական ծախսերի չափը չի բխում միջամտության համաչափության պահանջից, ենթադրաբար գերազանցում է գործում ներգրավված լրատվամիջոցի եկամուտները, իսկ փաստաբանական ծառայությունների դիմաց պահանջվող վարձատրությունը ակնհայտորեն չի համապատասխանում ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ առաջադրվող խելամտության պահանջին, այլ նաև այս հարցի շուրջ ՀՀ փաստաբանների պալատի վերջերս արտահայտած դիրքորոշմանը:

## 7. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, հրապարակումների մեջ տեղ գտած զնահատողական դատողությունների մասով, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, իսկ որոշ վիճահարույց արտահայտությունների մասով միջամտության անհրաժեշտությունը կախված կլինի պատասխանողի կողմից ներկայացվելիք հիմնավորումներից:

## Կ Ա Ր Ծ Ի Ք 2.

«Երկիր» օրաթերթի 13.01.2011թ. 3/2326-րդ համարում հրապարակված՝ «131 դեմք ու դիմակ» վերտառույթյանը հողվածի վերաբերյալ

Հրապարակված է 27.06.2011-ին

## 1. Փաստերը

13.01.2011թ. «Երկիր» օրաթերթի 3/2326-րդ համարում հրապարակվել է «131 դեմք ու դիմակ» վերտառությամբ հոդվածը, որը վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին:

Վերոնշյալ հոդվածում տեղ գտած՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու և պատճառված վնասը փոխհատուցելու պահանջի հայցով Տ. Արզաքանցյանը 11.02.2011թ. դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

08.06.2011թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը սույն գործով կայացրել է վճիռ, որով Տ. Արզաքանցյանի հայցը բավարարվել է մասնակի:

## 2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...»:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրա-

վունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ընթացակարգերով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք զանգատի առարկա միջամտությունը բխում է «իրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

#### 4. Վիճարկվող հոդվածների իրավական վերլուծությունը

Վիճարկող հոդվածների, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջների վրա:

#### 5. «131 դեմք ու դիմակ» վերտառությամբ Տիգրան Արզաքանցյանին վերաբերող հոդվածի վերաբերյալ

Ընդհանուր համատեքստը և հոդվածի հանրային նշանակությունը. Վիճարկվող հոդվածը պատկանում է «Երկիր» օրաթերթի՝ «131 դեմք ու դիմակ» խորագրով հոդվածների շարքին, որոնցով օրաթերթը նպատակ է ունեցել հասարակությանը տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի 131 պատգամավորներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Մինչ Տ. Արզաքանցյանին նվիրված վիճարկվող հոդվածի հրապարակումը՝ վերոնշյալ շարքում արդեն հրապարակվել էին թվով 17 Աժ պատգամավորների վերաբերող հոդվածներ: Համապատասխան խորագրով հոդվածների շարքը շարունակվել է նաև Տ. Արզաքանցյանի վերաբերյալ հրապարակումից հետո, ինչը վկայում է տվյալ հոդվածաշարը հրապարակելու լրատվամիջոցի նպատակի և դրա հանրային նշանակության մասին:

Վիճարկվող հոդվածով ներկայացվում են պատգամավորի կենսագրության որոշ տվյալներ, նրա աշխատանքային պարտականությունների կատարման, գույքային դրության, կենսաոճին ու որոշ նախասիրություններին վերաբերող տեղեկություններ: Նշված տեղեկությունները, անշուշտ, ներկայացնում են հանրային հետաքրքրություն, հաշվի առնելով, առաջին հերթին, հայցվորի կարգավիճակը, նրա՝ որպես ընտրովի պաշտոնատար անձի և քաղաքական գործչի գործունեության բնույթը, ինչպես նաև պետական բյուջեի միջոցներից վճարվելու հանգամանքները:

Հոդվածի շարադրման ընդհանուր ոճը և երանգավորումը. Հոդվածն ընդհանուր առմամբ շարադրված է հունդրային ոճով և երանգավորմամբ, ինչը արտահայտվելու ազատության իրավունքի լրացուցիչ պաշտպանություն է ենթադրում, քանի որ այս ոճն ինքնին ենթադրում է որոշակի չափազանցություն:

Հոդվածը պարունակում է ՀՀ ԱԺ պատգամավոր Տ. Արզաքանցյանի վերաբերյալ հետևյալ արտահայտությունները, որոնք վերջինս վիճարկել է նաև դատարանում.

### 5.1

- *«Այս պատգամավորը առաջին անգամ խորհրդարան մտավ որպես ստիլյագ»:*
- *«Բրենդային իր հագուստների, կոշիկների մասին խոսում էր բոլորի հետ և շարունակ գլուխ էր գովում, թե ինչպես է ինքնաթիռներով գեղեցկուհիներ բերում ու տանում այս կամ այն երկիր»:*
- *«Հայտնի է նաև որպես «կազինոների» մշտական հաճախորդ»:*
- *«Շարունակ ծեծ ուտելու սովորություն ունի»:*
- *«Ամեն անգամ ծեծվելուց հետո ամիսներով բուժվում է և չի հաճախում ԱԺ նիստերին»:*
- *«Անցնող նստաշրջանում միայն մեկ անգամ է երևացել Ազգային ժողովի միջանցքներում»:*
- *«Տիգրան Արզաքանցյանը իր խոսքում շարունակ մեջբերումներ է անում մոր խոսքերից»:*
- *«Հայտնի է, որպես ռուս երգչուհիների համար ինքնաթիռ վարձող և այստեղ-այնտեղ, այդ թվում՝ Հայաստան տանող-բերող գործարար»:*
- *«Խոսում է մի քանի օտար լեզվով, բայց առավել հասկանալի խոսում է հայրենի քյավառա բարբառով»:*

Տեղեկատվական վեճերի խորհուրդը անհրաժեշտ է համարում տարանջատում կատարել հոդվածում տեղ գտած փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողությունները ապացուցելի չեն. գնահատողական դատողությունների ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են հանդգնումների, նախապատվությունների ոլորտին: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ը նշել է, որ գնահատողական դատողություն արտահայտելու իրավունքը բացարձակ չէ և որ նման դատողության հիմքում պետք է ընկած լինեն որոշ փաստական հիմքեր: Այդ փաստական հիմքերի և դատողության միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանք-

ներից, հետևաբար, խնդիրը կայանում է նրանում, թե արդյոք տվյալ գնահատող դատողության համար առկա են եղել բավարար փաստական հիմքեր:

Վերոնշյալ արտահայտությունները գնահատողական դատողություններ են կամ փաստական տվյալներ, որոնք որպես այդպիսին զուրկ չեն փաստական հիմքերից: Դրանք հիմնված են բավարար փաստական հիմքերի վրա, այն է՝ պատգամավոր Տ. Արզաքանցյանի սեփական հայտարարությունների, հարցազրույցների, այլ լրատվամիջոցներում հրապարակված մի շարք հոդվածների ու տեղեկատվության, ինչպես նաև պաշտոնական տեղեկատվության հիման վրա:

### 5.1.1.

Հրանտ Բագրատյանը, երբ «Պեռնո Ռիկարում» էր աշխատում, մի առիթով ասել է. *«էդ լակոտը մեր կոնյակի պատիվը գցում է Ռուսաստանում»:*

Ինչ վերաբերում է վերոգրյալ մեջբերմանը, ապա այն մի կողմից պարունակում է վիրավորական արտահայտություն («լակոտ» արտահայտությունը), իսկ մյուս կողմից նշված արտահայտությունը հրապարակվել է չակերտների մեջ, որը նշանակում է, որ արտահայտությունը հանդիսանում է մեջբերում այլ անձի կողմից կատարված հայտարարությունից: Նման պարագայում էական է, թե արդյոք լրագրողը ցույց է տալիս այն աղբյուրը, որտեղից օգտվել է մեջբերումը կատարելիս: Դա պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասով հիմքով սահմանված իրավական պաշտպանության միջոցով, ըստ որի անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի բառացի կամ բարեխիղճ վերարտադրություն են և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին): Թեև ապացուցման բեռը նման հանգամանքներում պատասխանողի վրա է, սակայն հայցվորն իր վրա է վերցրել ապացուցման բեռը և դատարան ներկայացրել Հրանտ Բագրատյանի ստորագրությամբ գրավոր հայտարարություն, որով վերջինս հերքել է նման հայտարարություն կատարած լինելու փաստը: Ի պատասխան, լրագրողը չի վկայակոչել որևէ աղբյուր, որտեղից կատարել է մեջբերումը: Սա ինքնին նշանակում է, որ մեջբերումը կատարվել է անբարեխիղճորեն: Նման հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ արժանապատվությունը արատավորելու նպատակային տարրի առկայությունը պնդելու համար, որը «վիրավորանք» հասկացության բաղկացուցիչ մասն է՝ ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի:

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կառուցակարգը, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, լրագրողից չեն պահանջում յուրաքանչյուր դեպքում կատարել վկայակոչումներ տեղեկատվական աղբյուրի մասին: Դա լրջորեն կվնասի լրատվական նյութի որակը և լրագրողական ազատությունը: Ավելի հաճախ բավարար է ներկայացնել այլ անձի հրապարակային հայտարարության կամ հայտարարությունների վերարտադրումը, որը, բարեխիղճ կատարելու դեպքում, հնարավոր կլինի հեշտությամբ հիմնավորել՝ ներկայացնելով, օրինակ, նախկինում հրապարակված մի շարք լրատվական նյութեր տվյալ երևույթի կամ դեպքի մասին: Հենց այդ պաշտպանությունից էլ հաջողությամբ օգտվել է լրատվամիջոցը վերևում շարադրված բազմաթիվ գնահատական-դատողությունները հիմնավորելու համար, որն էլ ընդունել է դատարանը: Սակայն իրավիճակն այլ է, երբ լրագ-

րողը կատարում է մեջքերում: Նման հանգամանքում լրագրողը, գիտակցաբար իր վրա վերցնելով պատասխանատվության ավելի մեծ բեռ, իրեն դնում է այնպիսի իրավական հարթության մեջ, որտեղ իրավական պաշտպանության միջոցներն ավելի սահմանափակ են:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ «Երկիր» օրաթերթի փետրվարի 5-ի համարում հրապարակված՝ Զ. Բագրատյանի վերոնշյալ հայտարարությունը չի կարող համարվել պատշաճ հերքում, քանի որ չի համապատասխանում օրենքով սահմանված հերքմանը առաջադրված պահանջներին:

## 6. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, հրապարակումների մեջ տեղ գտած գնահատողական դատողությունների, փաստերի շարադրանքի մասով, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում, իսկ Զ. Բագրատյանի կողմից արված հայտարարությանը հղում կատարելու մասով (որը պարունակում է «լակոտ» վիրավորական արտահայտությունը)՝ միջամտությունը պետք է խիստ համաչափ լինի հայցվորի պատվին ու արժանապատվությանը հասցված վնասին՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, լրատվամիջոցի գույքային դրությունը, ինչպես նաև փոխհատուցման չափը գնահատելիս ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայում մշակված այլ սկզբունքները:

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով հայցվորի կողմից պահանջվող 3,000.000 (երեք միլիոն) ԶԶ դրամի չափով փոխհատուցման պահանջը վիրավորանքի և զրպարտության դիմաց չի բխում միջամտության համաչափության և անհրաժեշտության սկզբունքներից:

Ինչ վերաբերում է դատարանի կողմից սահմանված 200.000 ԶԶ դրամի չափով բարոյական վնասի դրամական փոխհատուցմանը, ապա սույն գործի հանգամանքների ներքո նշված փոխհատուցումն անհամաչափ է և դատարանը կարող էր բավարարվել լրատվամիջոցին՝ ներողություն հրապարակելուն պարտադրելով Զ. Բագրատյանի կողմից արված հայտարարությանը հղում կատարելու մասով (որը պարունակում է «լակոտ» վիրավորական արտահայտությունը): Յետևաբար, վճռով իրավունքի խախտման փաստի արձանագրումը ինքնին արդարացի փոխհատուցման բավարար միջոց է: Իսկ ինչ վերաբերում է դատական ծախսերի հիմքով սահմանված փոխհատուցման չափին, ապա սույն գործի հանգամանքների ներքո դա կարելի է համարել ողջամիտ:

## Կ Ա Ր Ծ Ի Բ 3.

«Իրավունք» թերթի 22.02.2011 թիվ 13  
համարում հրապարակված «Կլորիկ  
գունա՞ր է կրվել» վերնագրով  
հոդվածի վերաբերյալ

Չհրապարակված է 21.07.2011թ.-ին



## 1. Փաստերը

22.02.2011թ. «Իրավունք» թերթի թիվ 13 համարում հրապարակվել է «Կլորիկ գունա՞ր է կրվել» վերնագրով հոդված ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Արզաբանցյանի մասին:

Տիգրան Արզաբանցյանը դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետև դատարան)՝ դատարանից պահանջելով պարտավորեցնել «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերությանը «Իրավունք» թերթում հրապարակել դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի, պարտավորեցնել թերթին հրապարակել հոդվածի առնչությամբ իր կողմից ներկայացված պատասխանը, «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ից բռնագանձել 3.000.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում վիրավորանքի և զրպարտության հետևանքով իր պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի դիմաց և 568.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում իր կողմից կատարված դատական ծախսերի դիմաց: 24.06.2011թ. դատարանը կայացրել է վճիռ (դատավոր՝ Ռ. Ափինյան), որով ամբողջությամբ մերժել է հայցը անհիմն լինելու հիմքով:

## 2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ընթացակարգերով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է «իրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

#### **4. Վիճարկվող հոդվածների իրավական վերլուծությունը**

Վիճարկվող հոդվածի՝ հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի պահանջների վրա:

Նշված որոշմանը հանգելիս դատարանն առաջնորդվել է խոսքի ազատության ժամանակակից սկզբունքներով, որոնք մշակվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից և արդեն մոտ երեք տասնամյակ կիրառվում են զարգացած ժողովրդավարական հասարակարգերում:

Դատարանի վճիռն ամբողջությամբ կառուցված է բախվող լեզվտիմ շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռություն սահմանելու սկզբունքի վրա՝ առանձնահատուկ կարևորություն տալով մամուլի հատուկ դերին ժողովրդավարական հասարակար-

գում: Դատարանը փորձել է հավասարակշռել անձի հեղինակության պաշտպանության իրավունքը լրատվամիջոցի ազատ արտահայտվելու և հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքների հետ և արդյունքում հանգել է այն եզրակացության, որ տվյալ գործի հանգամանքների ներքո գերակայում են վերջին երկուսը:

Լրատվամիջոցի ազատ արտահայտվելու և հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքներին գերակայություն տալով՝ դատարանն առաջնորդվել է այն գաղափարով, որ հանրությունը ցանկանում է տեղեկացված լինել իր քաղաքական գործիչների մասին, որը կարող է ներառել նաև անձնական կյանքի մասին միջամտող բնույթի, մասնավորապես՝ վարքագծի դրսևորումների մասին հավասարակշռված տեղեկատվությունը լրատվամիջոցի կողմից: Թեև անվիճելի է, որ անձնական կյանքի պաշտպանության իրավունք ունեն բոլորը, այդուհանդերձ, դատարանը համարել է, որ էական է այն հանգամանքը, թե արդյոք լրատվական նյութը վերաբերել է մի անձի, ով շարունակում է պաշտոնավարել և իրականացնել պաշտոնեական գործառույթներ: Դատարանը հանգել է այն եզրահանգման, որ նման դեպքերում պաշտոնավարող քաղաքական գործիչները պետք է ակնկալեն անձնական կյանքի առավել նվազ պաշտպանություն, քանի որ նրանց յուրաքանչյուր գործ և խոսք գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում և հանրությունը, ցանկանալով տեղեկացված լինել իր քաղաքական առաջնորդների մասին, իրականացնում է տեղեկություններ ստանալու իր իրավունքը, որն իրավաչափ չափ է: Դատարանը հանրության տեղեկություն ստանալու իրավունքը գերադասել է անձի անձնական կյանքի, տվյալ դեպքում հեղինակության պաշտպանության իրավունքից, ինչը, կարծում ենք, միանգամայն օրինաչափ մոտեցում է:

Ողջունելի է այն հանգամանքը, որ վիճահարույց յուրաքանչյուր արտահայտության իրավաչափությունը գնահատելիս դատարանը հաշվի է առել համատեքստը, որի ներքո տվյալ բառը կամ արտահայտությունն օգտագործվել է լրագրողի կողմից: Նման մոտեցումը դատարանին հնարավորություն է տվել պաշտպանել չափազանցված խոսքը: Նշվածը նոր մոտեցում է ՀՀ դատական պրակտիկայում՝ առնվազն տեղեկատվական վեճերի վերաբերյալ դատական պրակտիկայում: Օրինակ, գնահատելով «թրև գալ» արտահայտության իրավաչափությունը, դատարանը հաշվի է առել, որ նշված արտահայտությունն օգտագործվել է ոչ թե ինքնանպատակ, որի դեպքում կարող էր խնդիր առաջանալ լրագրողական վարքագծի տեսանկյունից, այլ աշխատողներին ժամանակին աշխատավարձ չվճարելու հանգամանքը և Ազգային ժողովի պատգամավորի՝ խաղատներ հաճախակի այցելելու երևույթը քննադատելու նպատակով՝ դրանով իսկ քննադատությունն ուղղելով քաղաքական գործիչ գործողությունների, այլ ոչ թե բացառապես նրա անձի վրա: Նշված հանգամանքով էր պայմանավորված դատարանի որոշման այն մասը, որում դատարանն իր պաշտպանության տակ է առել այնպիսի լրատվական նյութ, որի ճշմարտացիությունը լրատվամիջոցը չի կարողացել հիմնավորել դատաքննության ընթացքում: Սա անելիս դատարանը հաշվի է առել, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը ակնհայտորեն նպատակ չի հետապնդել արատավորել հայցվորի պատիվն ու արժանապատվությունը, որը զրպարտության և վիրավորանքի անհրաժեշտ տարր է:

Իրերը գնահատելով իրենց համատեքստում՝ դատարանը հաջողությամբ կիրառել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի բարձր չափանիշը, այն է, որ յուրաքանչյուր դեպքում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի միջամտության անհրաժեշտության հարցը պետք է գնահատվի ելնելով այն սկզբունքից, թե արդյոք մի-

ջամտության համար առկա է հասարակական սուր պահանջ և թե արդյոք նման միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Նման մոտեցումը ցույց է տալիս, որ դատարանը տվյալ վեճը դիտել է ոչ միայն մրցակցող անհատական շահերի, այլ նաև հանրային շահի տեսանկյունից: Այսպիսով, որոշումը կայացնելիս դատարանը դուրս է եկել մրցող կողմերի նեղ անձնական շահերի շրջանակներից և կայացրել այնպիսի որոշում, որը բարենպաստ հետևանք է առաջացրել ողջ հանրության համար:

Գնահատելի է նաև այն հանգամանքը, որ դատարանը նախընտրել է պատասխանող լրատվամիջոցի համար հստակեցնել հերքման և պատասխանի հրապարակման համար օրենսդրական պահանջները, քանի որ այս առումով դատարանը նկատել է, որ հերքման և պատասխանի հրապարակման վերաբերյալ պատասխանող լրատվամիջոցի դատարան ներկայացրած պնդումները առերևույթ հակասում էին օրենքի պահանջներին:

## 5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ դատարանի վճիռն ամբողջությամբ համապատասխանում է ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքներին, իսկ վիճարկվող հոդվածի՝ հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափությունն ամբողջությամբ գնահատված է դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի համաձայն:

## Կ Ա Ր Ծ Ի Բ 4.

«Հայկական ժամանակ» օրաթերթի  
14.10.2010թ. թիվ 188 (2623) համարում  
հրապարակված՝ «Ութից յոթը ցուցակում  
են» վերտառույթյանը հոդվածի վերաբերյալ

Հրապարակված է 21.10.2011թ.-ին

## 1. Փաստերը

14.10.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 188 (2623) համարում հրատարակվել է «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հետևյալ հոդվածը, որն ուղեկցվել է ութ անձանց, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Հայրապետյանի, Լևոն Սարգսյանի և Սամվել Ալեքսանյանի լուսանկարների հրատարակմամբ:

«Մեր տեղեկություններով՝ ՌԴ ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը և մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում՝ հիմնականում նարկոթրաֆիքի, թրաֆիքինգի և փողերի լվացման գործերով, պարզել են, որ հանցագործությունների հետ առնչություն ունեն նաև ՀՀ պաշտոնյաներ:

ՌԴ իրավապահները պարզել են, որ ռուսական կրիմինալ խմբավորումները ՀՀ տարբեր պաշտոնյաների հետ սերտ կապերի մեջ են, և կազմել են տարբեր քրեական գործերի հետ առնչություն կամ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունեցող ՀՀ պաշտոնյաների ցուցակ, որում ընդգրկվել են 32 անուն: Մեր տեղեկություններով, այս ցուցակի վերաբերյալ ՌԴ դատախազության ներկայացուցիչները զրուցել են «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ: Ցուցակը ՌԴ դատախազության ղեկավարությունը ոչ պաշտոնական ֆորմատով ցուցադրել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին և ԱԱԾ տնօրեն Գորիկ Հակոբյանին: Ռուսական կողմը ցուցակում նշված անձանց պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացրել: Սակայն, ՀՀ վերը նշված պաշտոնյաներն իրենց ռուս գործընկերներին պատասխանել են, որ այդ խնդիրը լուծելու համար իրենք շատ փոքր մարդիկ են: Մեր տեղեկություններով, ՌԴ իրավապահների կազմած ցուցակի առաջին յոթ հորիզոնականներում հետևյալ անուններն են. Սերժ Սարգսյանի եղբայր, ԱԺ պատգամավոր Սաշիկ Սարգսյան, ԱԺ պատգամավորներ Ռուբեն Հայրապետյան («Նեմեց Ռուբո») և Լևոն Սարգսյան («Ալրադացի Լյովիկ»), ՀՀ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյան, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյան («Լֆիկ Սամո»), ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյան և ԱԺ ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյան: Ըստ մեր տեղեկությունների, ՌԴ իրավապահները ցուցակում Սերժ Սարգսյանի անունը չեն ընդգրկել, քանի որ ի սկզբանե բացառել են, որ հնարավոր կլինի նրան պատասխանատվության ենթարկելու հարց բարձրացնել»:

1.1. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանը (այսուհետ՝ հայցվորներ) 26.10.2010թ. հետևյալ գրությամբ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից (այսուհետ՝ պատասխանող) պահանջել են հերքել իրենց պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները.

### Հերքման պահանջ

«Ձեր կողմից հրատարակող զանգվածային լրատվության միջոցի՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի համար 188 (2623), հոկտեմբեր 14/ հինգշաբթի/ 2010թ.-ի համարի առաջին էջի կենտրոնում, որտեղ օրաթերթը զետեղում է առավել կարևոր և ուշագրավ տեղեկությունները, հրատարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է «Ութից յոթը ցուցակում են», իսկ ստորև փակցված են ութ անձանց, այդ թվում մեր, լուսանկարները: Հոդվածում, մասնավորապես որպես փաստ ներկայացվում են հետևյալ ապատեղեկատվությունը.....

Հայտնում ենք, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են մեր պատիվն ու արժանապատվությունը:

Ղեկավարվելով «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով՝ պահանջում ենք հերքել նշված տեղեկությունները՝ սույն փաստաթղթին կից ներկայացված տեքստը Ձեր անունից օրաթերթի հաջորդ համարի առաջին էջում հրապարակելու միջոցով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սահմանված կարգով և ժամկետում հերքումը չհրապարակելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմելու ենք դատական պաշտպանության...»

**1.2.** 01.11.2010թ.-ին պատասխանողը պատասխանել է հայցվորների գրությանը, մասնավորապես նշելով.

«...Ձեր հերքման պահանջում դուք չեք նշել, թե որոնք են «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 2623 թողարկման առաջին էջում զետեղված «Ուրիշ յոթը ցուցակում են» հրապարակման մեջ ձեր անձերի հետ կապված փաստացի անձատուությունները:

Բացի այդ, ձեր ներկայացրած հերքման տեքստում ասվում է, որ «Հայկական ժամանակի» տվյալ հրապարակման մեջ բերված տեղեկությունները, իբր, չեն համապատասխանում իրականությանը եւ ներկայացվել են առանց հավաստիությունը ստուգվելու:

Տեղյակ են պահում ձեզ, որ խնդրո առարկա հրապարակման մեջ հիշատակված փաստերը հաստատվել են Մոսկվայում գործող «Միաբանություն» ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի կողմից, ում ՌԴ իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրենք են տեղեկացրել ձեր կողմից վիճարկվող հրապարակման մեջ առկա փաստերի գոյության մասին և Կարախանյանի հետ զրուցել են հայաստանցի մի շարք անձանց գործունեության մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար: Կարախանյանն, ըստ այդմ, անձամբ է ծանոթացել այդ ցուցակին, որում ինչպես նշված է ձեր կողմից վիճարկվող հրապարակման մեջ, առկա են նաև ձեր անունները: Մեր թղթակցի հետ զրույցում Կարախանյանը վերահաստատել է, որ ձեր անունները ընդգրկված են ցուցակում:

Տեղյակ են պահում նաև, որ «Հայկական ժամանակ» օրաթերթը գործում է ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներին համապատասխան և որևէ մեկի պատիվն ու արժանապատվությունը արատավորելու նպատակ չի հետապնդում:

Միով բանիւ, տեղեկացնում են, որ պատրաստ ենք «Ձանգվածային լրատվության մասին» օրենքով նախատեսված կարգով քննարկել ձեր կողմից ստորագրված պատասխանի տեքստի տարածման հարցը՝ նման տեքստ մեզ ներկայացնելու պարագայում:»

**1.3.** Սույն գրությանը հայցվորները որևէ պատասխան չեն ներկայացրել:

**1.4.** 02.11.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 2636 համարում հրապարակել է հոդված «Մոսկվան ընկել է Սերժեյնց հետևից» վերնագրով, որում ներկայացվել է Մոսկվայի «Միաբանություն» Ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ հարցազրույցը, որում Սմբատ Կարախանյանը ընդարձակ հարցազրույցում նշել է, որ ՌԴ իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրենք են տեղե-

կացրել իրեն 14.10.2010թ. վիճարկվող հրապարակման մեջ առկա փաստերի գոյության մասին և որ Կարախանյանի հետ զրուցել են հայաստանցի մի շարք անձանց գործունեության մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար: Կարախանյանը նշել է, որ անձամբ է ծանոթացել այդ ցուցակին, որում առկա են եղել հայցվորների անունները: Թղթակցի հետ զրույցում Կարախանյանը վերահաստատել է, որ հայցվորների անունները ընդգրկված են եղել ցուցակում, որն ինքը տեսել է անձամբ:

**1.5.** 08.11.2010թ. հայցվորները դիմել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան)՝ պահանջելով դատարանից պարտավորեցնել պատասխանողին «Հայկական ժամանակ» օրաթերթի միջոցով հերքել տարածված ապատեղեկատվությունը՝ հայցադիմումին կից ներկայացված հերքման տեքստը օրաթերթի առաջին էջում հրապարակելու միջոցով, վճարել փոխհատուցում յուրաքանչյուր հայցվորին 2000000 ՀՀ դրամի չափով և հայցվորներից յուրաքանչյուրի հայցադիմումի պատրաստման և դատական ներկայացուցչության համար կատարված վճարումները՝ յուրաքանչյուր պայմանագրի համար 500.000 ՀՀ դրամ:

**1.6.** 18.12.2010թ.-ին պատասխանողի կողմից հրապարակվող «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակվել է ճշտում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ճշտում. «Հայկական ժամանակ»-ի 2012թ. հոկտեմբերի 14-ի համարի առաջին էջում «Ութից յոթը ցուցակում են» վերնագրի ներքո թյուրիմացաբար տպագրվել է նյութի աշխատանքային, չխմբագրված տարբերակ: Ըստ այդմ, հրապարակման տեքստը անհրաժեշտ է կարդալ հետևյալ կերպ.

«Մոսկվայի «Միաբանություն» Ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանը օրերս մեր թղթակցի հետ զրույցում հետաքրքիր տեղեկություններ է հայտնել: Ըստ նրա, ՌԴ ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը և մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում՝ հիմնականում նարկոթրաֆիկինգի, թրաֆիկինգի և փողերի լվացման գործերով պարզել են, որ...»:

Ներողություն խնդրելով մեր ընթերցողներից նշված վրիպակի համար, խնդրում ենք 14.10.2010թ. «ՀԺ»-ի առաջին էջում տպագրված «Ութից յոթը ցուցակում են» հրապարակումը ընթերցել սույն ճշտման մեջ մեջբերված տարբերակով»:

**1.7.** 07.02.2011թ. առաջին ատյանի դատարանը սույն գործով կայացրել է վճիռ, որով հայցվորների հայցը բավարարվել է մասնակի: Դատարանը վճռել է պարտավորեցնել «Դարեսկիզբ» ՍՊԸ-ին՝ հերքելու «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010 թվականի հոկտեմբեր 14-ի թիվ 188 համարի առաջին էջի կենտրոնում հրապարակված՝ «Ութից յոթը ցուցակում են» խորագրով հոդվածում հայցվորներ Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի, Ս. Ալեքսանյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները և հերքումը տպագրել նույն «Հայկական ժամանակ» օրաթերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «Հերքում» խորագրի ներքո՝ Դատարանի կողմից սահմանված բովանդակությամբ և ձևով:

Վճռվել է նաև «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից հօգուտ Ս. Ալեքսանյանի, Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի համապատասխանաբար բռնագանձել 2044000-ական ՀՀ դրամ յուրաքանչյուրի համար, որից՝ 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամը՝ որպես փոխհատուց-



ման գումար, 44.000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

**1.8.** Առաջին ատյանի դատավարությունն իրականացվել է երկու դատական նիստերով, որոնցից առաջինն ընդգրկել է դատավարության նախապատրաստական փուլը, իսկ երկրորդը՝ ըստ էության դատական քննությունը: Նախապատրաստական դատական փուլում պատասխանողի փաստաբանը հայտնել է դատարանին, որ նույն օրն է ներգրավված եղել գործում և խնդրել իրեն տրամադրել նվազագույնը երկու շաբաթ ժամկետ՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Միջնորդությունը բավարարվել է մասնակի և պատասխանողի ներկայացուցչին տրամադրվել է յոթ օր ժամանակ:

**1.9.** Նույն օրը պատասխանողի ներկայացուցիչը միջնորդել է իրեն տրամադրել քաղաքացիական գործի նյութերի պատճենները, որոնք չէին ուղարկվել հայցադիմումին կից: Սույն միջնորդությունը դատարանի կայացրած որոշմամբ բավարարվել է, սակայն նույնիսկ պետական տուրքը վճարած լինելու պարագայում դատարանը չի տրամադրել քաղաքացիական գործի նյութերը պատասխանողի փաստաբանին: Գործի նյութերը փաստաբանին տրամադրվել են միայն վերաքննիչ դատարանի դատավարության ընթացքում:

**1.10.** Երկու նիստերում դատարանը չի ապահովել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ներկայությունը, իսկ երկրորդ նիստում՝ լրատվամիջոցի փաստաբանի ներկայությունը: Գործով դատաքննությունն անցկացվել է լրատվամիջոցի փաստաբանի բացակայությամբ, որի ընթացքում դատարանն ավարտել է դատաքննությունը և նշանակել վճռի հրապարակման օրը:

**1.11.** Պատասխանողի փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան (վերաքննիչ դատարան), որի հետ ներկայացրել է իր պնդումները հիմնավորող մի շարք փաստաթղթեր և փաստական տվյալներ, օրինակ՝ հայցվորներին ուղարկված 01.11.2010թ. գրության պատճենը, 02.11.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 2636 համարում հրապարակված «Սոսկվան ընկել է Սերժենց հետևից» վերնագրով հրապարակումը, պատասխանողի 2010թ.-ի տարեկան հաշվետվության օրինակները, 18.12.2010թ.-ին պատասխանողի կողմից «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված ճշտումը և այլն: Պատասխանողի փաստաբանը նշել է, որ առաջին ատյանի դատարանում նշված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն չի ունեցել արդար դատաքննության իրավունքի խախտումների պատճառով և խնդրել է վերաքննիչ դատարանին վերը նշվածը հաշվի առնելով փաստաթղթերը համարել որպես գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստաթղթեր:

**1.12.** 26.05.2011թ.-ի դատական նիստում պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է վերաքննիչ դատարանին հաշվի առնել, որ գործն ուղղակիորեն վերաբերում է լրատվամիջոցի, որի գործունեության ղեկավարումը իրականացնում է լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը՝ Նիկոլ Փաշինյանը, ով այդ պահին գտնվում է անազատության մեջ, սակայն ՀՀ Ազգային ժողովի համաներում հայտարարելու մասին որոշման համաձայն կարող է առաջիկա մի քանի ժամերի ընթացքում ազատ արձակվել և հաշվի առնելով պատասխանողի՝ որպես գլխավոր խմբագրի դատաքննությանը ներկա գտնվելու և նրա հետ առանձնազրույց ունենալու կարևորությունը դատավարության արդյունավետության տեսակետից, խնդրել է հետաձգել դատական նիստը:

**1.13.** Դատարանը մերժել է միջնորդությունը: Նույն օրը վերաքննիչ դատարանն ավարտել է դատաքննությունը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 09.06.2011թ. քննելով վերոնշյալ վճռի դեմ պատասխանողի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ որոշել է վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.02.2011թ. թիվ ԵԿԴ 2347/02/10 վճիռը թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ: Դատական նիստի ավարտից երկու ժամ անց «Արթիկ» ՔԿՀ-ից ազատ է արձակվել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը:

**1.14.** Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքը ետ է վերադարձրել:

## **2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը**

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## **3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները**

### ՀՀ Սահմանադրություն

#### **3.1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.**

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

#### **3.2. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.**

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

### Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

#### **3.3. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.**

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից...:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ընթացակարգերով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

**3.4.** ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ «անձի պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն», և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է «իրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին» և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

### Ներպետական և միջազգային պաշտպանական կառուցակարգեր

**3.5.** Վիրավորանքի և զրպարտության գործերով ներկայումս լայնորեն ճանաչված սկզբունք է, որ որոշ հանգամանքների ներքո լրատվամիջոցները և լրագրողները պետք է պաշտպանված լինեն նույնիսկ իրականությանը չհամապատասխանող և զրպարտող բնույթի հայտարարությունների համար: Այս սկզբունքն արտահայտվում է մի շարք պաշտպանական կառուցակարգերով, որոնք հետևյալն են.

#### Բարեխիղճ հայտարարություն (fair comment)

**3.6.** Բարեխիղճ հայտարարության պաշտպանությունը կիրառվում է բազմաթիվ երկրների ներպետական իրավունքում, ինչպես նաև եվրոպական դատարանի կողմից:

**3.7.** Միացյալ Նահանգներում նշված տեսությունը կոչվում է «բարեխիղճ մեկնաբանություն (fair comment) եզրույթով, որի իրավական սահմանումը հետևյալն է. «ընդհանուր իրավունքում կիրառվող պաշտպանական [կառուցակարգ] է, որը երաշխա-

վորում է հանրային հնչեղություն ունեցող դեպքերի վերաբերյալ հայտարարություններ կատարելու մասնուլի ազատությունը, եթե այդ հայտարարությունները չեն կատարվել չարամտորեն կամ հայցվորին վնաս պատճառելու մտադրությամբ»: Այս սահմանումն ընդունվել է «Նյու Յորք Թայմսն ընդդեմ Սալլիվանի» գործով ԱՄՆ Գերագույն դատարանի հայտնի որոշման մեջ, որի կարևորությունը կայանում է նրանում, որ դրանում ընդգրկվեց «ակնհայտ չարամտության» չափորոշիչը, ըստ որի հայտարարության իրականությանը չհամապատասխանելը դեռ բավարար պայման չէ լրատվամիջոցին պատասխանատվության ենթարկելու համար (նախկինում դա ինքնին բավարար պայման կհանդիսանար), և հայցվորը պետք է նաև ապացուցի, որ իրականությանը չհամապատասխանող փաստացի հայտարարություն կատարելիս լրագրողը հետապնդել է ակնհայտորեն չարամիտ նպատակ (actual malice): Չարամիտ մտադրության առկայությունը ապացուցելու պարտականությունը գործում է միայն, եթե լրատվանյութը վերաբերվում է «հանրային պաշտոնյային», «հանրային դեմքին» կամ «հանրային հնչեղություն ունեցող իրադարձությանը»:

**3.8.** Կանադայում բարեխղճորեն կատարված հայտարարությունը պետք է վերաբերի միայն հանրային հնչեղություն ունեցող դեպքի (բացառելով ասեկոսեները), հիմնված լինի լայնորեն հայտնի կամ ապացուցելի փաստերի վրա, պետք է հիմնված լինի այնպիսի կարծիքի վրա, որին յուրաքանչյուր անձ ողջամտության սահմաններում կհանգի տվյալ փաստերի հիման վրա և որը արտահայտված կլինի ակնհայտ չարամտության բացակայությամբ: Հիմնական չափորոշիչն է, թե արդյոք վիճահարույց հայտարարությունը փաստացի հայտարարություն է, թե կարծիք և թե արդյոք դա կարելի է բխեցնել լայնորեն հայտնի փաստերից:

**3.9.** Անգլիայում բարեխղճորեն կատարված լրատվության պաշտպանությունը չի ներառում փաստի մասին զրպարտող բնույթի հայտարարությունները: Այդուհանդերձ, այս դրույթից նույնպես կա բացառություն, որը կոչվում է «արտոնյալ վիճակ» հասկացությամբ, ըստ որի հասարակության մեջ կան անձինք, ովքեր հաղորդում տարածելիս ոչ թե գործում են ինքնանպատակ, այլ իրենց իրավական, սոցիալական կամ բարոյական պարտավորություններից ելնելով: Նման անձանց թվին են պատկանում լրագրողները: Հետևաբար, նման պաշտպանական կառուցակարգի նպատակն է, որպեսզի հասարակության անդամը մեկ այլ անդամից առանց խոչընդոտի ստանա հանրային հետաքրքրություն ներկայացնող բարեխիղճ տեղեկատվություն: Սա իրավունքի վերջնական նպատակն է, իսկ նման տեղեկատվություն տրամադրող անձին պաշտպանության տակ առնելը նշված իրավունքի իրականացման միջոցն է: Հետևաբար, դատարանը պաշտպանում է հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկատվությունը, որում բացակայում է չարամիտ մտադրությունը:

**3.10.** Times Newspaper LTD-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով որոշման մեջ (թիվ 23676 և 3002/03) եվրոպական դատարանը, վկայակոչելով Անգլիայի ներպետական նախադեպային իրավունքը, տվել է հետևյալ մեկնաբանությունը. «...հանրության բարօրությունը պահանջում է, որպեսզի քաղաքացիները կարողանան հաղորդակցվել ազատորեն (նույնիսկ եթե դա վերաբերվում է փաստի մասին զրպարտող բնույթի հայտարարությանը, որի ճշմարտացիությունը հնարավոր չէ ապացուցել)՝ առանց վախենալու, որ կենթարկվեն պատասխանատվության: Այդ [կառուցակարգը] լրատվամիջոցներին ազատում է մասնավոր անձանց նկատմամբ զրպարտող բնույթի փաստացի հայտարարությունները ստուգելու պարտականությունից, եթե դրանք տարածվել են հաշվի առնելով բոլոր վերաբերելի հանգամանք-

ները և համաձայն «պատասխանատու լրագրության» չափանիշների»:

**3.11.** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշված խնդրին անդրադարձել է իր մի շարք որոշումներում, որից մեկում տվել է հետևյալ հավաքական ձևակերպումը.

**3.12.** «Դատարանը վերհիշում է, որ երբ անհրաժեշտություն է առաջացել որոշելու, թե արդյոք թերթերն ազատված են մասնավոր անձանց նկատմամբ զրպարտող բնույթի փաստացի հայտարարությունը ստուգելու սովորական պարտականությունից, դատարանը կիրառել է հայեցողություն՝ մի շարք գործոններ հաշվի առնելուց հետո, մասնավորապես. զրպարտության բնույթը և աստիճանը և թե ինչ աստիճանի թերթը կարող էր ողջամտության սահմաններում իր աղբյուրները համարել վստահելի՝ ներկայացված պնդումների առնչությամբ...: Նշված գործոնները իրենց հերթին պահանջում են հաշվի առնել այլ գործոններ, օրինակ, աղբյուրի հեղինակավոր լինելը (Բլադետ Տրոմսոն ու Սթենասասն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ), վկայակոչված վերևում), արդյոք թերթը մինչև հրապարակումը տարածելը ողջամտության սահմաններում կատարել է բավարար չափով հետազոտություն (Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի, 26 ապրիլի 1995թ. վճիռ, Շարք Ա, թիվ 313, կետ 37), արդյոք թերթը պատմությունը ներկայացրել է ողջամտորեն հավասարակշռված կերպով (Բերգենս Տիդենդեն ու այլք ընդդեմ Նորգեվիայի, թիվ 26132/95, կետ 57, ՄԻԵԴ 2000-IV) և թե արդյոք թերթը հնարավորություն է ընձեռնել զրպարտված անձանց պաշտպանելու իրենց (Բերգենս Տիդենդեն ու այլք ընդդեմ Նորգեվիայի, վկայակոչված վերևում, կետ 58»):

**3.13.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 1087.1 հոդվածի 2-րդ կետի համաձայն, վիրավորանք չի կարող համարվել այն հրապարակային հայտարարությունը, որը չի տարածվել անձին «արատավորելու նպատակով» կամ հիմնված է ստույգ փաստերի վրա կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

**3.14.** Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, զրպարտությունը անձին արատավորող փաստացի հայտարարություն է, իսկ 5-րդ կետի համաձայն, անձն ազատվում է նման հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից, կամ էլ հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

Ողջամիտ հրապարակում (reasonable publication)

**3.15.** Լրագրողական աշխատանքի առանձնահատկությունը պահանջում է լուրերը հրապարակել այն պահին, երբ դա խիստ անհրաժեշտ է և անհետաձգելի, և ավելորդ ձգձգումը կարող է նվազեցնել լրատվանյութի ակտուալությունը: Նույնիսկ լավագույն լրագրողը կարող է սխալ թույլ տալ, սակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր նման դեպքում պետք է շտապել լրագրողին կամ լրատվանյութին ենթարկել պատասխանատվության: Նման դեպքերում պաշտպանությունը գործում է «բարեխղճության» և «ողջամտության» սկզբունքների հիման վրա, ըստ որի «հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավոր»

րությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություններ կայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով» (Բլադետ Տրոնսոն ու Սթենասասն ընդդեմ Նորվեգիայի (ՄԴ), թիվ 21980/93, 20/05/1999, կետ 65):

**3.16.** Ըստ մեկ այլ մեկնաբանության, «ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը գործում է, եթե հիմնավորվում է, որ ցանկացած այլ անձ լինելով տվյալ լրագրողի փոխարեն և ցանկացած այլ հանգամանքներում տվյալ լրատվանյութը կտարածեր այնպես, ինչպես դա արել էր լրագրողը:

**3.17.** Օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է գրպարտող բնույթի փաստացի հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

#### Այլ անձանց հայտարարությունների վերարտադրումը

**3.18.** Ըստ եվրոպական դատարանի, «Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչընդոտի հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և մնան պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ» (Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի, թիվ 38432/97, 29/03/2001թ. պարբ. 62):

**3.19.** Վերևում վկայակոչված գործով վճռում եվրոպական դատարանը նշել է, որ «լրագրողների նկատմամբ ընդհանուր պահանջը, ըստ որի նրանք պարտավոր են պարբերաբար և ձևականորեն իրենց տարանջատել այլ անձանց վիրավորող, սադրող կամ նրանց հեղինակությանը վնասող մեջբերման բովանդակությունից անհամատեղելի է ընթացիկ դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն, կարծիքներ և գաղափարներ տարածելու մամուլի դերի հետ» (պարբ. 64):

**3.20.** Օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ կետի համաձայն անձն ազատվում է վիրավորանքի կամ գրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին:

## **4. Վիճարկվող հոդվածի իրավական վերլուծությունը**

**4.1.** Վիճարկող հոդվածի, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է վերը շարադրված ներպետական և միջազգային նորմերի, այդ նորմերով սահմանված իրավական պաշտպանական կառուցակարգերի վրա:

**4.2.** ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված ընդհանուր սկզբունքը հանրային նշանակության հարցերի շուրջ արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման վերաբերյալ հետևյալն է. «Մամուլը կենսական դեր է խաղում ժողովրդավարական հասարակությունում, այն պարտականություն ունի տեղեկատվություն տարածել հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ, իսկ հասարակությունը իրավունք ունի ստանալու այն»: «Պետության» «հայեցողության լուսանցքը» սահմանափակված է ժողովրդավարության շահով՝ մամուլի «հանրային հսկող շան» դերը կատարելու և հանրային լուրջ մտահոգության առարկա հանդիսացող հարցերի շուրջ տեղեկատվություն տարածելու հնարավորությունը ապահովելու նպատակով (Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, Բլադեթ Թրոմսո և Ստենասսա ընդդեմ Նորվեգիայի գործերով կայացված վճիռներ): ՄԻԵԴ-ի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան՝ լուրջ հիմքեր են պահանջվում հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ բանավեճի սահմանափակումը արդարացնելու համար:

### Հայցվորի կարգավիճակը

**4.3.** Ջրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերի քննության համար կարևոր բաղադրատարր է հանդիսանում հայցվորի կարգավիճակը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարբերակել է հայցվորների մի քանի կատեգորիաներ և դրանցով պայմանավորել է ընդունելի քննադատության շրջանակները նրանց նկատմամբ: Սույն գործով երեք հայցվորները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ են, հետևաբար նաև՝ քաղաքական գործիչներ:

Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով կայացված վճռով ՄԻԵԴ-ի կողմից սահմանվեց քաղաքական գործիչների ընդունելի քննադատության սահմանների ընդհանուր սկզբունքը, ըստ որի՝ «քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները ամխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռում պաշտպանելու նաև այլոց հեղինակությունը, այն է՝ բոլոր անձանց հեղինակության պաշտպանություն է նախատեսում, և այս պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է կշռադատվեն՝ քաղաքական հարցերի բաց քննարկման շահերից ելնելով»:

### Պատասխանողի կարգավիճակը

**4.4.** Ջրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով առանձնակի կարևորություն է ձեռք բերում նաև պատասխանողի կարգավիճակը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համապատասխան մամուլի ազատությանը և քաղաքական խոսքին տրամադրվում է առանձնակի պաշտպանություն, հաշվի առնելով նրանց կենսական նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում: «Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն»: (Բլադեթ Թրոմսո և Ստենասսա ընդդեմ Նորվեգիայի, Պրագերն ու Օբրշլիքն ընդդեմ Ավստրիայի և այլն):

## Փաստական տվյալներ և գնահատողական դատողություններ

**4.5.** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հայցվորի կողմից վիճարկվող արտահայտությունների ապացուցման վերաբերյալ մշակված ընդհանուր մոտեցումը հետևյալն է. եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է: Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց: Այդ փաստական հիմքերի և դատողության միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից:

Որքան ավելի լուրջ է վիճարկվող հայտարարությունը, այնքան ավելի ամուր պետք է լինեն դրա փաստական հիմքերը:

**4.6.** Վիճարկվող հոդվածով ներկայացված տեղեկատվությունը կարող է որակվել որպես փաստական տվյալների շարադրանք (statement of fact)՝ հոդվածում հիշատակված պաշտոնյաների ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու և Ռուսաստանի Դաշնությունում քննվող որոշ քրեական հանցագործություններին/գործերին առնչություն ունենալու մասով: Ընդ որում, հանցագործությունների մասին խոսելիս հոդվածի հեղինակը հղում է կատարում «հիմնականում նարկոթրաֆիքինգի, թրաֆիքինգի և փողերի լվացման գործերին»: Այս տեղեկություններն ու արտահայտությունները կարող են դիտվել որպես հոդվածում հիշատակված անձանց պատիվն ու արժանապատվությունը արատավորող: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում հոդվածի ամբողջական բովանդակությունը և համատեքստը, ինչպես նաև այն ընդհանուր տպավորությունը, որն այն կարող է առաջացնել ընթերցողի մոտ:

**4.7.** Մյուս կողմից հոդվածը շարադրված է ընդհանուր ձևակերպումներով՝ համապատասխան անձանց «քրեական գործերի հետ առնչություն ունենալու», «ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու» արտահայտություններ օգտագործելու միջոցով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հոդվածի հեղինակը խուսափել է հանցագործությունների կատարմանը «մասնակցություն» արտահայտության օգտագործումից, որը կենթադրեր համապատասխան հանցագործությունների կատարման մեջ հիշատակված պաշտոնատար անձանց ուղղակի մեղադրանքի առաջադրում:

**4.8.** Այնուամենայնիվ, հոդվածում հիշատակված քրեական հանցագործություններին առնչություն ունենալու և ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու վերաբերյալ պնդումը ինքնին կարող է դիտարկվել որպես անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող:

## «Բարեխիղճ հայտարարություն» (fair comment) պաշտպանությունը

**4.9.** Պատասխանող լրատվամիջոցի կողմից բարեխիղճորեն գործելու և փաստերի վերաբերյալ հայտարարությունները ստուգելու ընդհանուր լրագրողական պարտա-



վորության իրականացման վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում ամրագրված ընդհանուր մոտեցումը հետևյալն է. «Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները»:

**4.10.** ՄԻԵԴ-ը, սակայն, իր վճիռներում քննարկել է նաև հատուկ հիմքերի առկայության հարցը, որոնց պարագայում տպագիր լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձանց զրպարտող փաստերի վերաբերյալ պնդումները ստուգելու իր ընդհանուր պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «վիճարկվող զրպարտության բնույթից և աստիճանից» և տեղեկատվություն տրամադրող աղբյուրի վստահելիությունից, որոնք էլ իրենց հերթին պահանջում են հաշվի առնել մի շարք այլ գործոններ, ինչպիսին են, թե արդյոք լրատվամիջոցը մինչև հրապարակումը տարածելը ողջամտության սահմաններում կատարել է բավարար չափով հետազոտություն, արդյոք լրատվամիջոցը հրապարակումը տարածել է ողջամտության սահմաններում հավասարակշռված կերպով և թե արդյոք լրատվամիջոցը զրպարտված անձանց հնարավորություն է ընձեռնել պաշտպանել իրենց (տես՝ 3.12 կետը, որտեղ նշված մի շարք գործերով Դատարանը, վկայակոչելով «հատուկ հիմքեր»-ի առկայությունը գտել է, որ դիմումատուն գործել է բարեխղճությամբ, չնայած նրան, որ հանրային շահերին վերաբերող փաստական տվյալների կամ գնահատողական դատողության համար բացակայել են բավարար ապացույցները:

**4.11.** Առաջնորդվելով վերը նշված սկզբունքներով՝ Խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկել լրատվամիջոցի տեղեկատվության աղբյուրի, այդ աղբյուրի վստահելիության, լրագրողի կողմից անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելու, լրատվանյութը հավասարակշռված կերպով տարածելու, լրատվամիջոցի կողմից զրպարտված անձանց իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռնելու և փաստերը ստուգելու ողջամիտ հնարավորություն ունենալու հարցը:

**4.12.** Հոդվածի հրապարակումից հետո լրատվամիջոցը բացահայտել է իր տեղեկատվության աղբյուրը՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010թ. նոյեմբերի 2-ի համարում հրապարակելով լրատվամիջոցին համապատասխան տեղեկություններ տրամադրած անձի (տեղեկատվության աղբյուր) հետ ընդարձակ հարցազրույցը, որով վերջինս ընդունել է համապատասխան տեղեկությունների տրամադրման փաստը և հաղորդել է նաև նշված հրապարակմանը առնչվող այլ մանրամասներ: Հատկանշական է, որ լրատվամիջոցն իր աղբյուրը բացահայտել է դեռ արտադատական փուլում՝ հայցվորներին ուղարկած նամակով (տես՝ կետ 1.3), այնուհետև հաջորդ օրը՝ կրկին արտադատական փուլում (կետ 1.5), որից միայն վեց օր հետո են հայցվորները ներկայացրել դատական հայց:

**4.13.** Լրատվամիջոցը կարող էր օգտվել նաև աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, որը ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն պաշտպանվում է գրեթե բացարձակ կերպով՝ բացառություն են կազմում միայն խիստ կարևոր հանգամանքների առկայությունը, ինչպիսին է, օրինակ, կազմակերպված հանցագործության կամ ահաբեկչության դեմ պայքարի նպատակներով իրականացվող քրեական հետապնդման շրջանակներում դատարանների կողմից առաջադրված նման պահանջը:

**4.14.** Այդուհանդերձ, լրատվամիջոցը որոշել է բացահայտել իր աղբյուրը, որը խոսում է լրագրողական բարեխղճության դրսևորման, լրատվամիջոցի կողմից իր աղբ-

յուրի նկատմամբ վստահության առկայության, ակնհայտ չարամտության (actual malice) բացակայության և լրատվամիջոցի կողմից գրպարտված անձանց՝ իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորությունը ընձեռելու մասին: Նման հնարավորությունը ընձեռելու մասին է խոսում նաև լրատվամիջոցի 01.11.2010 ճամակը հայցվորների (տես՝ կետ 1.3), որով լրատվամիջոցը պատրաստակամություն է հայտնել «օրենքով նախատեսված կարգով քննարկել... պատասխանի տեքստի տարածման հարցը»: Թվարկված բոլոր հանգամանքները «բարեխիղճ հայտարարություն» պաշտպանության տարրեր են:

**4.15.** «Բարեխիղճ հայտարարություն» պաշտպանության կարևոր տարրերից է նաև լրատվանյութի հասարակական հետաքրքրությունը ներկայացնելու հանգամանքը: Ինչպես արդեն նշվեց 4.2. և 4.4. կետերում, նյութն անկասկած ներկայացնում է հասարակական հետաքրքրություն, և դրա հրապարակումը պայմանավորված է գերակա հանրային շահով, այն է. «մամուլի ազատությունը քաղաքացիների համար լավագույն միջոցներից մեկն է՝ իմանալու և գնահատելու իրենց ղեկավարների գաղափարներն ու արարքները» (Կաստելսն ընդդեմ Իսպանիայի, թիվ 11798/85, 23/04/1992, պարբ. 43):

**4.16.** Ինչ վերաբերվում է վերջին չափորոշիչին՝ լրատվանյութի հավասարակշռված կերպով տարածելու չափորոշիչը, ապա այս առումով հողվածի հեղինակը խուսափել է հանցագործությունների կատարմանը «մասնակցություն» արտահայտության օգտագործումից, որն հակառակ դեպքում կենթադրեր համապատասխան հանցագործությունների կատարման մեջ հիշատակված պաշտոնատար անձանց ուղղակի մեղադրանքի առաջադրում:

**4.17.** Ղատարաններն իրենց որոշումներում չեն կիրառել վերը նշված պաշտպանությունը, որի հնարավորությունը սակայն դատարաններն ունեին օրենսգրքի 1087.1 հոդվածի մի շարք դրույթներով (տես՝ 3.13-3.14 կետերը): Ավելին, դատական վարույթն իրականացվել է այնպես, որ լրատվամիջոցի ներկայացուցիչը զրկվել է վերը նշված պաշտպանությունից օգտվելու համար իր փաստարկները և փաստաթղթերը ներկայացնելու հնարավորությունից (այս առումով տես՝ 4.35-4.42 կետերը): Այս ամենը հանգեցրել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտությանը:

**4.18.** Վերը նշվածը եզրահանգումները հիմք են տալիս եզրակացնելու, որ տեղի է ունեցել լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն սույն ենթաբաժնում շարադրված պաշտպանական համակարգի առումով:

#### Ողջամիտ հրապարակում (reasonable publication) պաշտպանությունը

**4.19.** «Ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը «բարեխիղճ հրապարակում» պաշտպանության դրսևորման առանձնահատուկ եղանակներից մեկն է: Հետևաբար, վերը նշված եզրահանգումները մասամբ կիրառելի են նաև այստեղ:

**4.20.** Օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը տրամադրում է «ողջամիտ հրապարակում» պաշտպանության կառուցակարգը (տես՝ կետ 3.17), որի շրջանակներում փաստերը ցույց են տալիս, առաջին, որ վիճահարույց հրապարակումը ներկայացնում է հանրային հետաքրքրություն, երկրորդ, լրատվամիջոցը լրատվական նյութը ներկայացրել է հավասարակշռված և բարեխիղճ կերպով՝ ձեռնպահ մնալով անմեղության կանխավարկածը խախտող բնույթի հայտարարություն կա-

տարելուց, երրորդ, լրատվամիջոցը ողջամտության սահմաններում ձեռնարկել է բավարար միջոցներ պարզելու համար փաստերի ճշմարտացիությունը՝ նախաձեռնել է Սմբատ Կարախանյանի հետ ընդարձակ հարցազրույցը:

**4.21.** Հոդվածում տեղ գտած փաստերի վերաբերյալ պնդումների ստուգումը՝ հոդվածում հիշատակված անձանց՝ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ ունեցած կապերի և համապատասխան քրեական գործերի հետ առնչության մասով, լրագրողի համար դժվար թե կարող էր ողջամտորեն հնարավոր լինել ՌԴ իրավասու մարմինների միջոցով, նկատի ունենալով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև վերոգրյալ անձանց առնչության փաստը հավաստող հնարավոր տեղեկատվության մատչելիությունը: Ինչ վերաբերում է ՌԴ Գլխավոր դատախազության կողմից հասցեագրված գրությանը, ապա այն վերաբերում է զուտ Ռուսաստանի տարածքում հանցագործությունների իրագործմանը նշված անձանց մասնակցության մասին վկայող նյութերի բացակայությանը: Բացի այդ, հայաստանյան պաշտոնյաների ցանկի գոյության մասին տեղեկատվություն արդեն իսկ հրապարակվել էր այլ լրատվամիջոցներում:

**4.22.** Այդուհանդերձ, դատարանները այս համակարգը կիրառելուց նույնպես ձեռնպահ են մնացել և, ավելին, հնարավորություն չեն տվել լրատվամիջոցի ներկայացուցչին ներկայացնել իր փաստարկները և դրանք հիմնավորող փաստաթղթերը իրավահավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների պահպանումով (տես՝ 4.35-4.42 կետերը):

**4.23.** Խորհրդին առանձնապես մտահոգում է այն հանգամանքը, որ դատարանները ոչ միայն ձեռնպահ են մնացել նշված ժամանակակից կառուցակարգերը կիրառելուց, այլ նաև ամբողջովին աղավաղել են դրանց իմաստը՝ դրանք ներկայացնելով բոլորովին այլ լույսի ներքո: Օրինակ, վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ վկայակոչել է Պեդերսեն և Բաադսգարդ ընդդեմ Դանիայի գործով եվրոպական դատարանը վճիռը և նշել, որ ըստ վճռում արված եզրահանգման «լրագրողը պարտավոր է բացառապես հիմնվել հավաստի և արժանահավատ փաստական հանգամանքների վրա, որոնք պետք է համամասն լինեն տարածված արատավորող տեղեկատվության բնույթին և աստիճանին...»:

Նման բացարձակ տոնայնությամբ ձևակերպումն ամբողջությամբ ներժում է վերևում շարադրված «բարեխիղճ հրապարակում», «ողջամիտ հրապարակում», ինչպես նաև «այլ անձանց հայտարարությունների վերարտադրում» պաշտպանական համակարգերը: Մինչդեռ, եվրոպական դատարանը նշված դատական ակտի 78-րդ կետում նման միտք չի արտահայտել: Այդ պարբերությունում արտահայտված է այն միտքը, որ թեև որպես ընդհանուր կանոն լրագրողները պետք է գործեն բարեխիղճորեն և ճշգրիտ փաստական հիմքերի հիման վրա տրամադրեն հավաստի և արժանահավատ տեղեկատվություն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա, այդուհանդերձ, ազատ արտահայտվելու իրավունքը թույլ է տալիս որոշ հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցներին կամ լրագրողներին ազատել մասնավոր անձանց զրպարտող փաստերի վերաբերյալ պնդումները ստուգելու իրենց ընդհանուր պարտականությունից, որից հետո վճռի տվյալ կետում շարադրվում են, թե որոնք են այդ հիմքերը, որոնց թվում, ի թիվս կետ 4.11-ում նշվածների, նշվում է նաև անմեղության կանխավարկածը: Մինչդեռ, ըստ վերաքննիչ դատարանի, ստացվում է, որ լրագրողը սխալվելու իրավունք չունի և բացառապես բոլոր դեպքերում պար-

տավոր է տրամադրել «հավաստի և արժանահավատ» տեղեկատվություն: Նման մոտեցումը չի արտահայտում ազատ արտահայտվելու իրավունքի ժողովրդավարական սկզբունքները:

«Այլ անձանց հայտարարությունների վերարտադրում» պաշտպանությունը

**4.24.** Խորհուրդը համաձայն չէ վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, որ «պատասխանողը կարող էր ազատվել պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե հողվածում հստակ հղում կատարված լիներ այլ անձի հրապարակային ելույթին, որը տեղի է ունեցել մինչև հրապարակումը և որ այդ հրապարակումը լիներ այլ անձի հրապարակային ելույթի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը»:

**4.25.** Խորհուրդը գտնում է, որ դատարանի նման եզրահանգումը խիստ սահմանափակող բնույթ ունի: Մյուս կողմից, որպես նվազագույն պայման պահանջվում է, որպեսզի լրագրողն իրեն բավարար չափով տարանջատի զրպարտող կամ վիրավորող բնույթի հայտարարության բովանդակությունից: «Բավարար չափով» հասկացությունը որոշվում է յուրաքանչյուր գործի հանգամանքների ներքո, մասնավորապես, թե արդյոք լրագրողը կամ լրատվամիջոցը տվյալ հանգամանքների ներքո և ողջամտության սահմաններում կիրառել է նվազագույն ճիգեր տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու համար: Թեև յուրաքանչյուր գործ յուրահատուկ է իր փաստական հանգամանքներով, սակայն բոլոր դեպքերում ընթերցողը պետք է ստանա այն տպավորությունը, որ հրապարակվածը ոչ թե լրատվամիջոցի հայտարարությունն է կամ կարծիքը, այլև լրագրողական աղբյուրի հայտարարության վերարտադրությունն է՝ խուսափելով ընթերցողին մոլորության մեջ գցելուց:

**4.26.** Անձի հեղինակության պաշտպանության իրավունքը և ազատ արտահայտվելու իրավունքը երկու մրցակցող, սակայն իրավաչափ (լեզիտիմ) շահեր են և միևնույն գործի շրջանակներում այս իրավունքների բախվելու դեպքում դատարանները պարտավոր են առաջնորդվել երկու իրավունքների միջև, արդարացի փոխհավասարակշռությունն սահմանելու սկզբունքով: Խորհուրդը ցավում է, որ սույն սկզբունքի վրա հղում կատարելով հանդերձ վերաքննիչ դատարանը նախընտրել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակել առավելագույն խստության չափորոշիչների կիրառումով: Նման մոտեցումը չի բխում բախվող լեզիտիմ շահերի միջև արդարացի հավասարակշռություն սահմանելու սկզբունքից:

Փոխհատուցման համաչափությունը

**4.27.** Միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցման համաձայն՝ պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Մասնավորապես՝ Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործում (թիվ 11751, 8.10.2009), ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ, դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և հետևաբար եղել են անչափ խիստ: Դա է պահանջում նաև ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը:

**4.28.** Խորհուրդը գտնում է, որ սույն գործով հայցվորներից յուրաքանչյուրի կողմից պահանջվող 2,000.000 (երկու միլիոն) (ընդհանուր առմամբ 6,000.000 (վեց միլիոն)) ՀՀ դրամի չափով փոխհատուցման պահանջը ակնհայտորեն չի բխում միջամտության համաչափության և անհրաժեշտության սկզբունքներից, քանի որ լրատվամիջոցը հայտնվում է խիստ անհամաչափ ծանր ֆինանսական բեռի տակ, որի արդյունքում վտանգվում է լրատվամիջոցի բնականոն գործունեությունը, որը որպես այդպիսին որևէ առնչություն չունի հայցվորների արդարացի փոխհատուցման պահանջի հետ:

Ղատավարական սահմանափակումներ, որոնք հանգեցրել են ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտության

**4.29.** Այնպիսի հանգամանքներում, որտեղ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքերի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը, սակայն դատարանը պատասխանողին զրկում է նման հանգամանքները հիմնավորելու կամ «բարեխիղճ հայտարարության» արդարացման պաշտպանությունը հայցելու նպատակով ապացույցներ կամ պնդումներ ներկայացնելու հնարավորությունից, դատարանը խախտում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հայեցողության իրավունքի շրջանակները և արդյունքում տեղի է ունենում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն (Ջերուսալեմն ընդդեմ Ավստրիայի, թիվ 26958/95, 27.02.2001, պարբ. 46: «Նովայա Գազետա վ Վորոնեժե ընդդեմ Ավստրիայի», թիվ 27570/03, 21.12.2010, պարբ. 56: Վիրավորանքի և զրպարտության գործերով Ղատավարական նման սահմանափակումներին եվրոպական դատարանը «վճռորոշ նշանակություն» է տալիս և եթե հանգում է եզրակացության, որ անհնարին կլինե՞ր որոշել, թե ինչպիսին կլինե՞ր Ղատավարության ելքը, եթե պատասխանողը հնարավորություն ունենար ներկայացնել իր բոլոր պնդումները և ապացույցները, նման Ղատավարական սահմանափակումներն անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համակցությամբ (Կաստելլան ընդդեմ Իսպանիայի, թիվ 11795/85, 23.04.92, պարբ. 49 և 50):

**4.30.** Օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասով, ապացուցման բեռը կրում էր սույն գործով պատասխանող լրատվամիջոցը: Հետևաբար, դատարանները պետք է առանձնակի զգուշություն ցուցաբերեին լրատվամիջոցի Ղատավարական իրավունքներն ապահովելու ուղղությամբ: Այդուհանդերձ, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի վարույթներում Ղատավարություններն ընթացել են պատասխանող լրատվամիջոցի ներկայացուցչի Ղատավարական իրավունքների մի շարք սահմանափակումներով:

**4.31.** Առաջին ատյանի դատարանում պատասխանող լրատվամիջոցի ներկայացուցչի միջնորդությունը Ղատական նիստը 15 օրով հետաձգելու մասին բավարարվել է մասնակի՝ 7 օրով: Միջնորդությունն արվել էր գործի նյութերին ծանոթանալու նպատակով: Թեև դատարանն ուներ հայեցողության իրավունք, այդուհանդերձ, դատարանը ոչնչով, նույնիսկ Ղատավարության ողջամիտ ժամկետների պահպանման սկզբունքով կաշկանդված չէր Ղատական նիստը հետաձգել այն ժամկետով, որը խնդրել էր փաստաբանը՝ հատկապես հաշվի առնելով, որ պահանջված ժամկետը նույնպես ողջամիտ էր:

**4.32.** Առաջին ատյանի ողջ Ղատավարության ընթացքում պատասխանող լրատվամիջոցի փաստաբանին չեն տրամադրվել քաղաքացիական գործերի նյութերի պատ-

ճենները՝ մի իրավունք, որը պարզորոշ ամրագրված է դատավարական իրավունքով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մաս): Փաստաբանի միջնորդությանը գործի նյութերի պատճենները տրամադրելու համար դատարանի կողմից պատշաճ արձագանքի չի արժանացել: Գործով ըստ էության դատական քննությունն անցկացվել է փաստաբանի բացակայությամբ: Այսինքն, առաջին ատյանի դատարանի ողջ դատավարության ընթացքում պատասխանողի փաստաբանը հնարավորություն չի ունեցել վիճարկել հայցվորների պնդումները, ինչպես նաև ներկայացնել իր սեփական պնդումները և ապացույցները՝ գործի նյութերի հիման վրա:

**4.33.** Նշված դատավարական սահմանափակումները չեն վերացվել վերադաս ատյանի կողմից: Թեև վերաքննիչ դատարանը տրամադրել է գործի նյութերի պատճենները, այդուհանդերձ, նյութերի ուսումնասիրության հիման վրա փաստաբանի կողմից ներկայացրած միջնորդությունը, որում նա ներկայացրել էր գործի էության վերաբերյալ էական նշանակության փաստարկներ և ապացույցներ, վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել և իր որոշման մեջ չի անդրադարձել: Օրինակ, իր միջնորդության մեջ փաստաբանը խնդրել էր էական նշանակության ապացույց ճանաչել պատասխանող լրատվամիջոցի 2010թ-ի տարեկան հաշվետվությունը, որը պարունակում էր էական փաստական տվյալներ լրատվամիջոցի գույքային դրության մասին, որն էլ օրենսգրքի 1087.1 հոդվածի 11-րդ կետի 2-րդ մասի հիմքով հանդիսանում է փոխհատուցման չափը որոշելու հիմքերից մեկը: Ոչ առաջին ատյանի դատարանը, ո՛չ էլ վերաքննիչ դատարանը սույն փաստաթղթին ընդհանրապես չեն անդրադարձել:

**4.34.** Փաստորեն, ողջ դատավարության ընթացքում պատասխանող լրատվամիջոցի փաստաբանը զրկված է եղել հայցվորների պնդումները վիճարկելու, ինչպես նաև իր սեփական ապացույցները ներկայացնելու արդյունավետ հնարավորությունից:

**4.35.** Դատարանները չեն ապահովել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ներկայությունը ողջ դատավարության ընթացքում: Դատարանը ներպետական դատավարական որևէ նորմով կաշկանդված չէր դա անել և հաշվի առնելով, որ գլխավոր խմբագիրն է վարում լրատվամիջոցի լրատվական քաղաքականությունը, նրա ներկայությունը կնպաստեր գործով օբյեկտիվ քննությանը:

**4.36.** Վերը շարադրված դատավարական սահմանափակումներն անկասկած պատասխանող լրատվամիջոցին դատավարության մյուս կողմի համեմատ դրել են անհավասար պայմանների մեջ: Հաշվի առնելով սահմանափակումների լրջության աստիճանը՝ Խորհուրդն արձանագրում է, որ դատարանները դրսևորել են անհամաչափ միջամտություն լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքին:

## 5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանն իրավաչափ չէր:

## Կ Ա Ր Ծ Ի Բ 5.

«Չորրորդ ինքնիշխանություն» թերթի  
09.04.2011 թիվ 322 համարում և թերթի  
ինտերնետային կայքում հրապարակված՝  
«Ճանաչել Փարավոնին» վերնագրով  
հոդվածի վերաբերյալ

Հրապարակված է 28.10.2011թ.-ին

## 1. Փաստերը

09.04.2011թ. «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի թիվ 322 համարում հրապարակվել է «Ճանաչել Փարավոնին» վերնագրով հոդված ՀՀ Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանի մասին:

Փարավոն Միրզոյանը դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ դատարան)՝ դատարանից պահանջելով պարտավորեցնել «Կողմնակի անձանց Մ» ՍՊ ընկերությանը պատկանող «Չորրորդ ինքնիշխանություն» թերթին հերքել իր հեղինակությունն արատավորող տեղեկությունները, հօգուտ հայցվորի ՍՊԸ-ից բռնագանձել 3.000.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում վիրավորանքի և զրպարտության հետևանքով իր պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի դիմաց և 360.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում իր կողմից կատարված դատական ծախսերի դիմաց:

Դատարանը գործով դեռևս վճիռ չի կայացրել:

## 2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ Խորհուրդը «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի դիմումի հիման վրա ուսումնասիրել է վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:



Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ընթացակարգերով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առնվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն» և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխում է «իրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «օրինական նպատակին», և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

#### **4. Վիճարկվող հոդվածի վերլուծությունը**

Վիճարկվող հոդվածի՝ հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի և լրագրողական էթիկայի պահանջների վրա:

Վիճարկվող հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում ներառված արտահայտությունների մի մասը գնահատական-դատողություններ են և լրագրողի արտահայտած կարծիք, ինչը, որպես այդպիսին, պաշտպանված է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով: Սույն արտահայտությունները հրապարակելիս լրագրողն օգտվել է երզնիանքի ոճով ստեղծագործելու իր իրավունքից, ինչը ևս պաշտպանված է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունները, այլև դրանց մատուցման ոճը և եղանակը: Վիճարկվող արտահայտությունների մնա-

ցած մասը զուրկ չէ փաստական հիմքերից:

Միևնույն ժամանակ, հայցվորի կողմից զրպարտչական բնույթի որակվող արտահայտությունները մինչ այդ հրապարկվել են մեկ այլ լրատվամիջոցի կողմից և «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը ևս մեկ անգամ անդրադարձել է դրանց՝ սկզբնաղբյուր հանդիսացող լրատվամիջոցին համապատասխան հղում կատարելով:

Իրերը գնահատելով իրենց համատեքստում, Խորհուրդը գտնում է, որ սույն գործը լուծելիս նպատակահարմար է կիրառել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական պաշտպանության բարձր չափանիշ, այն է, որ յուրաքանչյուր դեպքում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի միջամտության անհրաժեշտության հարցը պետք է գնահատվի ելնելով այն սկզբունքից, թե արդյոք միջամտության համար առկա է հասարակական սուր պահանջ և թե արդյոք նման միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Նպատակահարմար է, որպեսզի դատարանը տվյալ վեճը դիտի ոչ միայն մրցակցող անհատական շահերի, այլ նաև հանրային շահի տեսանկյունից: Այսպիսով, որոշումը կայացնելիս դատարանը կարող է դուրս գալ մրցակցող կողմերի նեղ անձնական շահերի շրջանակներից և կայացնել այնպիսի որոշում, որը կարող է բարենպաստ հետևանք առաջացնել ողջ հանրության համար:

## 5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վիճարկվող խնդիրը ոչ այնքան իրավական, որքան լրագրողական էթիկայի դաշտում է: Ուստի, ողջամիտ և արդյունավետ կլիներ, եթե հայցվորը հարցի քննությունը հանձներ ոչ թե դատարանին, այլև արտադատական մարմիններին՝ մասնավորապես, էթիկայի դիտորդ մարմնին՝ վիճահարույց հոդվածը քննելու և գնահատական տալու համար:

Ի դեպ, «Չորրորդ ինքնիշխանություն» թերթը տեղեկացրել է Տեղեկատվական վեճերի խորհրդին, որ դիմել է էթիկայի դիտորդ մարմնին՝ ստանալու նաև նրա կարծիքը:

## Կ Ա Ր Ծ Ի Ք 6.

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը  
դիմել է Տեղեկատվական վեճերի  
խորհրդին՝ խնդրելով կարծիք հայտնել  
օրաթերթի դեմ ՀՀ քաղաքացի Գուրգեն  
Աղաջանյանի ներկայացրած  
հայցի կապակցությամբ

Հրապարակված է 08.02.2012թ.-ին

## 1. Փաստերը

06.08.2011թ.-ին «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը փոստային ծառայության միջոցով ստացել է նամակ, որի ծրարի վրա նշվել է ուղարկողի հետևյալ տվյալները. ուղարկող՝ Գուրգեն Աղաջանյան, հասցեն՝ Տիգրան Մեծի 4, ք. Երևան: Նամակն ուղարկվել է հետադարձ ծանուցմամբ, որտեղ հետադարձ հասցեն նշվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հասցեն:

Նամակը պարունակում էր տեղեկություններ Պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ, Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ Կարինե Կիրակոսյանի և նրա տեղակալ Աշոտ Մարկոսյանի կողմից կատարված չարաշահումների մասին: Նամակը ստորագրված չի եղել: Նամակում նշված փաստերի պարզաբանման նպատակով խմբագրությունը գրուցել է Կարինե Կիրակոսյանի հետ, ով պատասխանել է, որ նամակում նշված փաստերն իրականությանը չեն համապատասխանում և նամակագիրն այդ նամակը գրել է չարությունից դրդված, քանի որ մի քանի տարի առաջ կատարված չարաշահումների պատճառով նրան հեռացրել են աշխատանքից:

«Ժողովուրդ» օրաթերթն իր 09.08.2011թ. համարում հրապարակել է «Գալուստի որդուց պահանջում են» վերնագրով հոդված, որում նշվել են նամակում շարադրված փաստերը և Կարինե Կիրակոսյանի պատասխանը: Հոդվածն սկսվում է հետևյալ արտահայտությամբ. ««Ժողովուրդ»-ը քաղաքացի Գուրգեն Աղաջանյանից նամակ է ստացել...»:

Հաջորդ օրը Գուրգեն Աղաջանյանը ներկայացել է խմբագրություն և պնդել, որ ինքը չի հանդիսանում նամակի հեղինակը, որ ինքը նման տեղեկություններ չի տարածել, հոդվածում նշված փաստերի վերաբերյալ նամակ չի պատրաստել և որևէ մեկին նամակ չի ուղարկել: Այնուհետև ներկայացրել է գրավոր պատասխան և պահանջել է պատասխանը հրապարակել թերթում որպես հերքում:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը հրաժարվել է տպել հերքման տեքստը՝ պատճառաբանելով, որ տեքստում շարադրված էին միայն գովասանական մտքեր Գուրգեն Աղաջանյանի մասին և հետևաբար չէր պահպանված հերքման տեքստի բովանդակային պահանջը:

Գուրգեն Աղաջանյանը դիմել է դատարան ընդդեմ օրաթերթի և պահանջել տպագրել հերքում և 804 հազար ՀՀ դրամ փոխհատուցում (500,000 ՀՀ դրամ զրպարտության, 300,000 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության և 4,000 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի դիմաց): Կարինե Կիրակոսյանը և Աշոտ Մարկոսյանը դատարանի կողմից ներգրավվել են որպես դատավարության երրորդ անձ:

Ըստ հայցադիմումի, հայցվորի պատիվն ու արժանապատվությունը արատավորվել է հոդվածում տեղ գտած հետևյալ արտահայտություններով.

*«Յոթ տարի դեկավարելով վարչությունը՝ իր տեղակալ «գիտնական» կաշառակեր Աշոտ Մարկոսյանի հետ միասին ուղղակի շահեցին պետական ունեցվածքի մի զգալի չափաքանակ...»:*

*«Կարինեն Աբովյան փողոցի իր բնակարանը ստացել է որպես կաշառք, և դժվար չէ պատկերացնել, թե դրա դեմ ինչպիսի խախտումներ են արել այդ գործի գիտակ Աշոտ Մարկոսյանի հետ...»:*

*«Կարինե Կիրակոսյանն իրեն այդ ոլորտում ավելի ապահով զգալու համար և պետությունից մի զգալի մասը յուրացնելու նպատակով աճուրդի կենտրոնի տնօրեն է նշանակել իր քեռու տղային՝ Մարտին Քալաշյանին, ով «նույնպես կեղծիքների մեծ վարպետ է...»:*

*«Տիկին Կիրակոսյանը նման խարդախություններն իրականացնում է հանրապետության ղեկավարության աչքերին թոզ փչելով...»:*

*«...Կոչ է անում նորանշանական պետ Արման Սահակյանին «մաքրել վարչությունը Աշոտ Մարկոսյանից և մի քանի նման տականքներից»...»:*

## **2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը**

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ Խորհուրդն ուսումնասիրել է վիճարկվող հոդվածը «Ժողովուրդ» օրաթերթի դիմումի հիման վրա և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## **3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները**

Խորհուրդն առաջնորդվել է ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ին կայացրած որոշման դրույթներով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի և «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթներով:

Մասնավորապես, հաշվի են առնվել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, որն ամրագրում է յուրաքանչյուրի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու իրավունքները, ինչպես նաև երաշխավորում է լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, որն ամրագրում է յուրաքանչյուրի՝ ազատ արտահայտվելու, սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը:

## **4. Վիճարկվող գործի իրավական վերլուծությունը**

Ջրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով առանձնակի կարևորություն ունի պատասխանողի կարգավիճակը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համապատասխան՝ մամուլի ազատությանը և քաղաքական խոսքին տրամադրվում է առանձնակի պաշտպանություն՝ հաշվի առնելով նրանց կենսական նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում:

Առկա իրավակարգավորման լույսի ներքո իրավիճակը գնահատելով՝ Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգման. անվիճելի է, որ վեճի առարկա փաստերի մասին հայտարարությունների հեղինակը լրատվամիջոցը չէ: Վերջինս միայն տարածել է այդ հայտարարությունները որպես այլ աղբյուրից ստացված տեղեկատվություն՝ պատշաճ կերպով և պարբերաբար վկայակոչելով աղբյուրը: Այս հանգամանքը չի վիճարկվում նաև հայցվորի կողմից: Նման պարագայում լրատվամիջոցը կարող է

հայցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասով սահմանված պաշտպանությունը: Հակառակ դեպքում լրատվամիջոցները կդադարեն հիմնվել քաղաքացիներից ստացված տեղեկությունների վրա, որը լրջորեն կվնասի լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը՝ դրանով նաև հանրային շահին սպասարկող տեղեկատվության ազատ հոսքը: Նույնանման հանգամանքներով գործերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ուշադրություն է դարձնում, թե արդյոք լրագրողը կարողացել է իրեն բավարար չափով տարանջատել փաստերի մասին այլ անձանց հայտարարություններից, որպեսզի ընթերցողի և ցանկացած այլ օբյեկտիվ անձի մոտ տպավորություն չստեղծվի, թե այդ հայտարարությունները պատկանում են լրագրողին:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում ստեղծված իրավիճակը դիտարկել նաև լրագրողական վարքագծի (պատասխանատու լրագրություն, պրոֆեսիոնալ բարեխղճություն) լույսի ներքո: Փաստերը ցույց են տալիս, որ լրագրողը վիճահարույց լրատվությունը տարածել է առանց հավաստիանալու, որ նամակում որպես հեղինակ նշված անձը հանդիսանում է նամակի իրական հեղինակը: Թեև այս առումով օբյեկտիվ պատճառներով առկա էին որոշակի խոչընդոտներ (նամակում բացակայում էին հեղինակի տվյալները, իսկ որպես հետադարձ հասցե նշված էր ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության հասցեն), նման հանգամանքներում առավել նպատակահարմար կլիներ ձեռնպահ մնալ նամակի բովանդակությունը հրապարակելուց:

Վերը նշվածի լույսի ներքո է դիտարկվում նաև հերքում տպագրելու կամ պատասխանի հնարավորություն տրամադրելու հարցում լրատվամիջոցի որդեգրած դիրքորոշումը: Ստեղծված իրավիճակում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվանյութը տարածվել է առանց հավաստիանալու, որ նամակում նշված հեղինակը և նամակի իրական հեղինակը միևնույն անձինք են, Խորհուրդը գտնում է, որ նպատակահարմար կլիներ, որպեսզի լրատվամիջոցը Գուրգեն Աղաջանյանին տրամադրեր արդյունավետ հնարավորություն նամակում շարադրված փաստացի հայտարարությունների հերքման համար՝ իր կողմից հերքում տպագրելու կամ Գուրգեն Աղաջանյանին պատասխանի իրավունքով հանդես գալու հնարավորություն տալու միջոցով: Խորհուրդը գտնում է, որ օրաթերթը կաշկանդված չէր Գուրգեն Աղաջանյանին տրամադրել պատասխանի հնարավորություն, որը հնարավորություն կտար լրատվամիջոցին շարունակել իրեն հեռու պահել այլ անձի հայտարարություններից և միևնույն ժամանակ բավարարել քաղաքացու պահանջը: Օրենքը տալիս է նման այլընտրանքային հնարավորություն, մասնավորապես, «ԶԼՍ-ների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով, իսկ հերքման պահանջը բավարարված է համարվում պատասխանի հրապարակումով: Փաստորեն, հրաժարվելով օրենքի ընձեռած նման հնարավորությունից, լրատվամիջոցը կանովին նախընտրել է վեճի լուծումը տեսնել ոչ թե լրագրողական էթիկայի, այլ իրավական դաշտում՝ դատական պաշտպանության միջոցով:

Ինչ վերաբերում է հայցվոր Գուրգեն Աղաջանյանի մյուս՝ նյութական փոխհատուցման պահանջներին, ապա Խորհուրդը գտնում է, որ դրանք անհամաչափ են, ինչպես նաև արդարացված չեն, քանի որ չեն ծառայում իրենց բուն նպատակին: Այս առումով Խորհուրդն առաջնորդվում է ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ, որն իր թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ բացահայտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

1087.1 հողվածի սահմանդրաիրավական բովանդակությունը, սահմանել է, որ «պետք է առանձնակի վերապահունով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը» և որ «նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը»:

Կրկին ընդգծելով այն հանգամանքը, որ իրավական առումով օրաթերթն ունի պաշտպանության հնարավորություններ, Խորհուրդը միաժամանակ ողջունում է իրավական դաշտից դուրս վեճի կարգավորման ցանկացած եղանակ՝ այնքանով, որքանով դա բխում է պատասխանատու լրագրության արժեքներից և չի սահմանափակում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքը:

## 5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի Խորհուրդը գտնում է, որ թեև իրավական առումով լրատվամիջոցը իրավունք ուներ հրապարակել վիճահարույց նամակի բովանդակությունը, սակայն պրոֆեսիոնալ բարեխղճության տեսանկյունից նպատակահարմար կլիներ նամակը հրապարակել՝ առանց նշելու հեղինակի անունը (որպես անանուն աղբյուրից ստացված տեղեկատվություն) կամ հեղինակի անունը տալով միաժամանակ նշվեր, որ լրատվամիջոցը վստահ չէ, թե ով է հանդիսանում նամակի իրական հեղինակը, քանի որ հնարավոր չի եղել ստուգել նամակագրի ինքնությունը: Քանի որ դա չի արվել, ապա լրատվանյութի հրապարակումից հետո ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր քաղաքացուն տրամադրել հերքման կամ պատասխանի հնարավորություն՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր նշելու համար, որ Գուրգեն Աղաջանյանը չէր հանդիսանում վիճահարույց նամակի հեղինակը:

Խորհուրդը նաև գտնում է, որ հայցվորի նյութական փոխհատուցման պահանջները անհամաչափ են, արդարացված չեն, քանի որ չեն ծառայում իրենց բուն նպատակին և որպես այդպիսին անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում:

## Կ Ա Ր Ծ Ի Ք 7.

«Իրավունք հետաքննություն» և  
«Արգումենտի նեղելի վ Արմեննիի»  
շաբաթաթերթերի գործով վճռի վերաբերյալ

Յրապարակված է 11.05.2012թ.-ին



## 1. Փաստերը

«Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթի թիվ 39(2031) 19-25 հոկտեմբեր 2011 թվականի համարի 1-ին էջի կենտրոնում հրապարակվել է «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «ծաղկեց» մանկապղծության մեղադրանքով» վերնագրով հոդված, որի վերաբերելի հատվածը հետևյալն է.

*«Սենսացիոն բացահայտումներ», «բացառիկ հարցազրույցներ» և նմանատիպ «գայթակղիչ» այլ վերտառություններով են ողողված այսօրվա որոշ լրատվամիջոցները՝ դերասանուհի Անժելա Սարգսյանի, նրա «տղամարդու» և այդ երկու անձանց ընտանիքի անդամների փոխհարաբերությունները հանրության առարկա դարձնելու գործընթացում: Անշուշտ, մենք առհասարակ չէինք անդրադառնա հայկական շոու-բիզնեսին այդքան բնորոշ անառակաբարո վարքագծի և, մասնավորապես, զագրելի պոռնոկադրերի թեմային, եթե չլիներ երկու հանգամանք: Առաջինը որ պոռնոսկանդալի «հերոսուհի» Անժելա Սարգսյանը պատկանում է Հայաստանի խոշորագույն աղանդին՝ «Կյանքի խոսքին», որին պատկանում են նաև շոու-բիզնեսի շատ ներկայացուցիչներ, և ավելին՝ այդ պատկանելությունը հաճախ նրանց առաջխաղացման նախապայմաններից մեկն է: Եվ երկրորդ ու ամենակարևորը՝ քր. գործով կալանավորված անձի մայրը՝ Մարինա Արայանը, հրապարակավ մեղադրել է աղանդավոր-տաղանդավոր դերասանուհուն սեփական զավակի նկատմամբ անառակաբարո գործողությունների մեջ... Համացանցի լեզվով ասած՝ այս թեման ունի «թեգերի» (բանալի բառերի) ահավոր համակցություն՝ «աղանդ, ինցեստի – մանկապղծության մեղադրանք...»: Այսինքն, ենթադրվում է հանրորեն չափազանց վտանգավոր երևույթ...»:*

Հոդվածի վերևում զետեղված է համակարգչային եղանակով մոնտաժված լուսանկար, որում պատկերված է վանականի հագուստով տղամարդ, հագուստի վրա նշված է «Կյանքի խոսք» գրառումը: Վանականի հագուստով տղամարդու հետևում պատկերված է մեկ այլ տղամարդու լուսանկար, իսկ նրա դիմացը պատկերված է անպարկեշտ հագուստներով ծնկաչոք կին: Նշված երեք անձանց լուսանկարները մոնտաժված են այնպես, որ դիտողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե վանականը դիմում է տղամարդուն հետևյալ բառերով. «- Օո՛, Խազար, ասիգա մեր Անժելն է: Հրեշտակին անառակ մի ըսեր, մեղք է»: Նշված արտահայտության տակ, որպես աղբյուրի վկայակոչում, գրված է. «Աղանդավետարան՝ ըստ Արթուր Սիմոնյանի»: Լուսանկարի վերևի աջ անկյունում մեծ տառերով գրված է. «Կտոր մե Կյանքի խոսք»:

Հոդվածի շարունակությունը տպագրված է 4-րդ էջում, որտեղ էջի աջ անկյունում հոդվածին զուգահեռ պատկերված է մոնտաժված լուսանկար, որում պատկերված է մի անձնուհու հագուստով կին, ում ձեռքին առկա է վահանակ՝ «Կյանքի խոսք» գրառումով: Լուսանկարին զուգահեռ զետեղված է նույն վերնագրով հոդված: Հոդվածը բաժանված է մի քանի ենթավերնագրերի, որոնցից մեկը, որը հանդիսանում է վեճի առարկա, վերնագրված է «Աղանդները անձեռնմխելի՞ են», որում նշված է հետևյալը.

*««Կյանքի խոսք» աղանդավորական միավորումը՝ հայ հասարակության մեջ տպավորված է որպես մի կազմակերպություն, որի թաքուն կամ բացահայտ ազդեցությունը տարածվում է նաև որոշ հեռուստաընկերությունների և իշխանական օղակների վրա: Թե որքանով է դա համապատասխանում իրականությանը, հա-*

վանաբար կպարզվի նաև Կարեն Արայանի քրեական գործի վարույթի առկա և հետագա «նրբերանգներով»: Այս պահին կարելի է առնվազն փաստել, որ Կարենի մայրը ահաբեկված է լրջագույն: Ահա, նրա խոստովանությունը. «Շատ են տանջվում հիմա, որ չէի հավատում տղայիս, շատ են վիճել իր հետ: Բայց ինքն ինձ ասում էր՝ մամա, ինքն ինձ սպառնում է, գլուխ է գոլում, որ ինքն ու ամուսինը մեծ օղակներում ունեն ինչ-որ լավ հովանավորներ, սպառնում էր, որ իր մեջքին կանգնած է ամենաուժեղ, ամենահզոր եկեղեցին, կարծես «Կյանքի խոսք», այդպես էր ասում: Եվ, որ ինքն այնտեղ շատ լավ դիրքերում են, անգամ, որ իր քույրն այնտեղ ավագ է: Ես միշտ հարցնում էի՝ Ի՞նչ ունես դու վախենալու, ինչի՞ց ես վախենում, թող իր քույրը լինի ավագ, թող լինի ինքը «Կյանքի խոսքում», թող վերին օղակներում ունենա հովանավորներ, Ի՞նչ ունես արած, որ վախենում ես: Ասում էր, ես ոչինչ արած չունեմ, բայց իր կողմից ամեն ինչ սպասում են, որովհետև նա շատ վտանգավոր մարդ է»:

Հանրությանը հուզում է նաև մեկ այլ հարց. հանդիսանում է արդյոք Անժելան «Կյանքի խոսքի» անդամ վերջին բացահայտումներից հետո: Եթե՝ այո, ապա պարզ է դառնում, թե որ «աստվածներին» նկատի ուներ դերասանուհի Անժելա Սարգսյանը՝ «խոստովանելով» «Կռվախնձորին», թե հաճախ է աղոթում...»:

Նշված երկու լուսանկարները տպագրվել են նաև ՀՀ-ում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Արգունենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթի 25-31 հոկտեմբերի 2011 թվականի թիվ 41(282) համարի 1-ին և 4-րդ էջերում: 4-րդ էջում տպագրված է նաև հոդված՝ “Сенсация” - палка о двух концах: история с сектантством и порнухой”: Նույն էջի ենթաթեմաներում տպագրված է “Непрекосновенны ли сектанты?” վերնագրով հոդված, որում նշված է.

*"Сектанское объединение "Слово жизни" в сознании общественности представляется как довольно мощная организация. Во всяком случае, Марина Араян сообщила прессе, что ее, сын серьезно опасался Анжели именно потому, что актриса была членом этой секты. Это, конечно, ее личное дело и, возможно, ее личные проблемы. С другой стороны, понятен интерес общественности к тому обстоятельству, как сама секта относится к Анжеле после публикации компрометирующих ее порноматериалов...*

*В телецикле "Яблоко раздора" Анжела заверила телеведущих и общественность в том, что она часто молится. В том случае, если актриса продолжает оставаться членом секты "Слово жизни", можно предположить, какие ценности проповедует секта и каким богам молится Анжела".*

Հայցվորները՝ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը, և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանը իրենց հայցապահանջում պնդում են հետևյալը.

«Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթում հրապարակված լրատվական նյութի առնչությամբ հայցվորները գտնում են, որ

#### **վիրավորական են.**

- 1-ին և 4-րդ էջերում պատկերված մոտնաժված լուսանկարները: Հայցվորները պնդում են, որ լուսանկարներում պատկերելով դերասանուհի Անժելա Սարգսյանին թերթը փորձել է նրա անձի հետ կապված հանրային հետաքրքրության ներկայացող դեպքերը կապել կրոնական կազմակերպության գաղափարախոսու-

թյան հետ, մասնավորապես, փորձ է արվել ստեղծել տպավորություն, թե կրոնական կազմակերպությունը և նրա ղեկավարը ջատագովում են անառակաբար ապրելակերպ և վարքագիծ,

- լուսանկարում պատկերված «Աղանդաավետարան ըստ Արթուր Սիմոնյանի» արտահայտությունը,
- «աղանդ» բառի հասցեագրումը կրոնական կազմակերպությանը հոդվածների տարբեր մասերում: Կազմակերպությունը պնդում է, որ «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը աղանդ չէ, այլ ճշմարիտ քրիստոնեական դավանություն քարոզող, օրենքով սահմանված կարգով գրանցված կրոնական կազմակերպություն,
- «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «ծաղկեց» մանկապղծության մեղադրանքով» վերնագիրը, քանի որ ընթերցողների մոտ տպավորություն է ստեղծվում, թե կրոնական կազմակերպությունը քարոզում է պոռնոգրաֆիա և հովանավորում է պոռնոգրաֆիկ նյութերի տարածմանը, մանկապղծության հրահրմանը ու հովանավորչությանը,
- «աղանդավոր-տաղանդավոր դերասանուհի» հեզմական արտահայտությունը,
- «համացանցի լեզվով ասած՝ այս թեման ունի «թեգերի»...ահավոր համակցություն՝ «աղանդ, ինքեստի և մանկապղծության մեղադրանք...» արտահայտությունը, քանի որ ակնարկվում է, թե կազմակերպությունը հովանավորում է քրեորեն արգելված արարքներ ինչպիսին է մանկապղծությունը,

#### **գրպարտող են.**

- կրոնական կազմակերպությանը աղանդավորական կրոնական միության վերագրելը,
- հայտարարությունը, որ դերասանուհի Անժելա Սարգսյանը հանդիսանում է կազմակերպության անդամ,
- հայտարարությունը, որ կրոնական կազմակերպությունը հովանավորում է մանկապղծությունը և ինքեստը,
- հայտարարությունը այն մասին, որ կազմակերպությունը իրականացնում է քողարկված գործունեություն և ունի լայն կապեր ազդեցիկ շրջանակների՝ այդ թվում նաև հեռուստաընկերությունների հետ:

«Արգունենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթում հրապարակված լրատվական նյութի առնչությամբ հայցվորները գտնում են, որ

#### **վիրավորական են.**

- տպագրված լուսանկարները՝ նույն հիմքերով, ինչ «Իրավունք հետաքննություն» շաբաթաթերթում հրապարակված լուսանկարները,
- հոդվածի վերնագրումը “история с сектантством и порнухой” արտահայտությամբ, որով ընթերցողի մոտ տպավորություն է ստեղծվում, թե կրոնական կազմակերպությունը և նրա գործունեությունը կապ ունեն պոռնոգրաֆիայի հետ,
- աղանդ բառի հասցեագրումը կազմակերպությանը հոդվածի բոլոր դրույթներում, որն ինքնին վիրավորական իմաստ ունի,

- Երկրորդ լուսանկարում կնոջ ձեռքին պահած վահանակի հետևյալ արտահայտությունը. «Կյանքի խոսք Слово жизни» արտահայտությունը, որով կարծիք է կազմվում, թե կազմակերպության անդամները դրսևորում են նույն վարքագիծը, ինչ լուսանկարում պատկերված կնոջ մասին տարածվել է տեղեկատվություն լրատվական միջոցներով, որոնք առաջացրել են հանրային հետաքրքրություն,
- «Կռվախնձոր» հեռուստաշարին Անժելան վստահեցնում էր հեռուստահաղորդավարներին և հասարակությանը, որ նա հաճախ է աղոթում: Այն դեպքում, երբ դերասանուհին շարունակում է մնալ «Կյանքի խոսք» աղանդի անդամ, կարելի է ենթադրել, թե ինչ արժեքներ է քարոզում աղանդը» հայտարարության համար, քանի որ նշվում է, թե եկեղեցին շեղվել է ճշմարիտ աստվածապաշտությունից ու իր առաքելությունից՝ հավանություն տալով դերասանուհու՝ լրատվամիջոցի բնորոշմամբ զազրելի վարքագծին,

### զրպարտող են.

- վերը նշված վերնագիրը, քանի որ դրանով արվում է փաստի մասին հայտարարություն առ այն, որ կրոնական կազմակերպությունը իր դավանանքով և գործունեությամբ քարոզում է հակաբարոյական արժեքներ՝ պոռնոգրաֆիա, ինչպես նաև պոռնոգրաֆիկ նյութերի տարածում, մանկապղծության հրահրում և նման արարքների հովանավորչություն,
- հայտարարությունները այն մասին, թե դերասանուհին կրոնական կազմակերպության անդամ է,
- «Կռվախնձոր» հեռուստաշարին Անժելան վստահեցնում էր հեռուստահաղորդավարներին և հասարակությանը, որ նա հաճախ է աղոթում: Այն դեպքում, երբ դերասանուհին շարունակում է մնալ «Կյանքի խոսք» աղանդի անդամ, կարելի է ենթադրել, թե ինչ արժեքներ է քարոզում աղանդը» հայտարարությունը, որի հիման վրա հողվածում կատարվում է փաստի մասին հայտարարություն, թե նա համարվում է այդ կազմակերպության անդամ, մինչդեռ այդ հաղորդաչարի ժամանակ դերասանուհին կամ նյուս մասնակիցները ընդհանրապես չեն արտաբերել «Կյանքի խոսք» բառակապակցությունը: Հետևաբար, լրատվամիջոցը անբարեխիղճ կերպով է վերարտադրել տեղեկությունը:

Երկու լրատվամիջոցների դեմ ուղղված հայցապահանջում հայցվորները ներկայացրել են նմանատիպ պնդումներ ոչ միայն իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպության, այլ նաև կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանի՝ որպես ֆիզիկական անձի դեմ ուղղված վիրավորական և զրպարտող բնույթի հայտարարությունների հիմքով՝ և՛ լուսանկարների, և՛ հողվածների առումով:

Վերը նշվածի հիմքով հայցվորները դատարանից խնդրել են վիրավորանքի հիմքով պարտավորեցնել լրատվամիջոցներին հրապարակավ ներողություն խնդրել և հրապարակել վճիռը իսկ զրպարտության հիմքով հրապարակել հերքում, ինչպես նաև որպես փոխհատուցում պատասխանողներից գանձել 36000 ՀՀ դրամ՝ 4000 դրամ պետական տուրքի և 32000 թարգմանության և նոտարական ծախսերի դիմաց:

## 2. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան աղբյուրները

Խորհուրդն առաջնորդվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ին կայացրած որոշմամբ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 14-րդ հոդվածներով, կոնվենցիայի թիվ 12-րդ Արձանագրության 1-ին հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի և Ջանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթներով: Խորհուրդը որպես ուղեցույց հաշվի է առնել նաև ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(97)20 Հանձնարարականը «Ատելություն սերմանող խոսքի մասին», ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի թիվ CDL-AD(2008)026 փաստաթուղթը «Արտահայտվելու ազատության և կրոնի ազատության հարաբերակցության մասին»:

## 3. Վիճարկվող գործի իրավական վերլուծությունը

Փաստերը գնահատելիս Խորհուրդը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- Ժողովրդավարական հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա խաղաղ կերպով արտահայտելու իր գաղափարները այլ հավատքների, համոզմունքների կամ դոգմաների մասին՝ անկախ այդ գաղափարների բացասականության աստիճանից:
- Յուրաքանչյուր դեպքում ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրա նպատակն է հատուկ համոզմունքներ ու կարծիք ունեցող անձանց պաշտպանելը, այլ ոչ թե համոզմունքային համակարգերի պաշտպանությունը քննադատությունից: Արտահայտվելու ազատության իրավունքից բխում է, որ անհրաժեշտ է հնարավորություն տալ, որպեսզի քննարկվեն, բաց բանավեճի առարկա հանդիսանան, նույնիսկ կոշտ ու անողջամիտ քննադատության ենթարկվեն համոզմունքային համակարգերը, կարծիքները և հաստատությունները՝ քանի դեռ նման քննադատությունը չի վերաճում անհատի կամ անհատների խմբերին ողջված ատելություն հրահրող խոսքի:
- Ատելություն հրահրող խոսքի որոշ տեսակներ կարող են այն աստիճանի վիրավորել անհատներին կամ անհատների խմբերին, որ դուրս մղվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի այլ տեսակների համար սահմանված պաշտպանության շրջանակներից: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ ատելություն սերմանող խոսքը ուղղված է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:
- Հավատացյալների կրոնական զգացմունքների նկատմամբ հարգանքը կարելի է իրավամբ խախտված համարել այն դեպքում, երբ կրոնական պաշտամունքի առարկա հանդիսացող իրերը պատկերվում են պրովոկացիոն տեսքով կամ երբ կրոնական սկզբունքները և դոգմաները ենթարկվում են հարձակումների. նման արարքները կարող են որոշ հանգամանքների ներքո համարվել որպես հանդուրժողականության ոգու, որը նույնպես պետք է հանդիսանա ժողովրդավարական հասարակության հատկանիշ, չարամիտ խախտում:

- Բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը հանդիսանում են ժողովրդավարական հասարակության փորձադրոշմը: Նրանք, ովքեր օգտվում են իրենց կրոնը քարոզելու ազատությունից, անկախ այն հանգամանքից, թե դա անում են որպես կրոնական մեծամասնության թե փոքրամասնության անդամ, չեն կարող ողջամտորեն ակնկալել, որ պետք է զերծ մնան քննադատությունից: Նրանք պետք է հանդուրժեն և ընդունեն, որ այլ անձինք կարող են մերժել իրենց կրոնական համոզմունքները և նույնիսկ քարոզել այնպիսի ուսմունքներ, որոնք թշնամական են իրենց հավատքին:

### **Առաջնորդվելով նշված սկզբունքներով՝ Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգմանը.**

1. Խնդրո առարկա վեճը շոշափում է մի կողմից լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը և մյուս կողմից քաղաքացիների մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:
2. Նախ, Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ հայցվորների պնդումներին վիճահարույց հողվածներում «աղանդ» բառի գործածության վերաբերյալ: «Աղանդ» բառը նույնիսկ իր սովորական, առօրյա գործածական իմաստով կարող է անհանգստություն պատճառել, ցնցել և այդ իմաստով անընդունելի համարվել կրոնական որոշ խմբերի համար: Այդուհանդերձ, այդ հանգամանքը դեռ բավարար չէ պնդելու համար, որ լրատվամիջոցներն անցել են թուլատրելի քննադատության շրջանակները՝ ըստ ժամանակակից ժողովրդավարական սկզբունքների: Բացի այն, որ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է նույնիսկ անհանգստություն պատճառող և սադրող խոսքը, ժողովրդավարական սկզբունքները հնարավորություն են տալիս, որպեսզի արտահայտվելու ազատությունը օգտագործվի որպես միջոց այլոց կրոնական հայացքների, համոզմունքների և նույնիսկ կրոնական հաստատությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու, դրանք բաց բանավեճի առարկա դարձնելու և նույնիսկ կոշտ քննադատության ենթարկելու համար՝ պայմանով, որպեսզի հանրային դիսկուրսի իրականացման նման եղանակը չվերածվի կրոնական ատելության հրահրման: Հետևաբար, քննության առարկա պետք է հանդիսանա ոչ թե «աղանդ» բառի որևէ *a priori* սահմանումը, այլ համատեքստը, որի շրջանակներում բառն օգտագործվել է: Եթե համատեքստը թշնամություն կամ ատելություն սերմանող է, ապա նույնիսկ չեզոք իմաստային նշանակություն ունեցող բառը կարող է խնդիրներ առաջացնել: Այս իմաստով Խորհուրդը գտնում է, որ թեև «աղանդ» բառն ինքնին արատավորող իմաստ չի պարունակում, սակայն դրա շարունակական և շեշտադրված օգտագործումը երկու հողվածների ընդհանուր համատեքստի լույսի ներքո խնդրահարույց է:
3. Խորհուրդը նկատում է, որ վիճահարույց հողվածները մեծամասամբ վերաբերում են պոռնոգրաֆիկ բնույթի նյութերի տարածման հիմքով հարուցված քրեական գործին, որի փաստերը և որում ընդգրկված անձինք առաջացրել են հանրային մեծ հետաքրքրություն և այդ հիմքով տևական ժամանակ է, որ ծավալվել են հանրային բաց քննարկումներ: Ի սկզբանե որպես քննադատության թիրախ ընտրելով այս սկանդալային իրադարձությունների հեղինակներին՝ ֆիզիկական անձանց, հողվածագիրները անսպասելիորեն անդրադարձ են կատարել և քննադատության թիրախ դարձրել նաև «Հայաստանի ավետարանական հավատքի քրիս-

տոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի կրոնական կազմակերպությանը՝ այն պատճառաբանությամբ, որ սկանդալային պատմության մեջ ներգրավված առանցքային անձը հանդիսանում է նշված կրոնական կազմակերպության անդամ: Այս կազմակերպության մասին տեղեկությունները, անկախ սույն գործի հանգամանքներից և դատելով հանրային կյանքի տարբեր ոլորտներում ծավալվող քննարկումներից և տարբեր աղբյուրներից դուրս հորդող կարծիքներից, ներկայացնում է հասարակական մեծ հետաքրքրություն: Հետևաբար, սկզբունքորեն և անկախ վիճահարույց հողվածների բովանդակությունից, տեղեկատվական նյութի տարածումով լրատվամիջոցներն իրականացրել են իրենց առաքելությունը, որը համահունչ է ժողովրդավարական հասարակարգում մամուլի դերի հետ:

4. Սակայն իրենց առաքելությունն իրականացնելիս լրատվամիջոցները դուրս են եկել պատասխանատու լրագրության շրջանակներից: Հարցը դիտելով պատասխանատու լրագրության սկզբունքի տեսանկյունից, Խորհուրդը գտնում է, որ հողվածներում հնչեցված փաստացի հայտարարությունները և կարծիքները այն մասին, թե սկանդալային պատմության կիզակետում հայտնված դերասանուհին հանդիսանում էր կրոնական կազմակերպության անդամ, թե ոչ, երկրորդական նշանակություն ունի: Առաջնային նշանակություն ունի, կրկին պատասխանատու լրագրության տեսանկյունից, թե արդյոք արդարացված էին կրոնական կազմակերպության գաղափարախոսության և հանդուժմանների մասին հնչեցված սուր կարծիքները՝ առանց նման կարծիքները հիմնավորող որոշ փաստական հիմքերի: Խորհրդի այս մտտեցումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը իր թիվ 997 որոշման հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի արտահայտումը՝ այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա և արված է արդար մտադրություններով... արտահայտությունը չի կարող որպես վիրավորանք որակվել, եթե այն ունի որոշակի փաստական հիմք: Այսինքն, ոչ թե պետք է վիրավորանք համարել գնահատողական դատողությունը, այլ անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը: Այստեղ կարևոր է նաև «արատավորելու նպատակով» արտահայտության իրավական իմաստի ճիշտ ընկալումը: Տվյալ համատեքստում այն ենթադրում է դիտավորություն, կանխամտածված գործողություն, ոտնձգություն անձի արժանապատվության նկատմամբ: Մինչդեռ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլև պարտականությունն է:

Այսպիսով, ցանկացած գնահատողական դատողության և կարծիքի հիմքում պետք է ընկած լինեն որոշակի (այլ ոչ թե ճշգրիտ) փաստական հիմքեր: Նման փաստական հիմքերի բացակայությունը արտահայտված կարծիքը կամ գնահատող դատողությունը դարձնում է անիրավաչափ: Ընդ որում, որևիցե օրենք կամ իրավական ակտ չի կարող ճշգրտորեն սահմանել «որոշակի» եզրույթի շրջանակները: Այդ շրջանակները ավելի շուտ որոշվում են «պատասխանատու լրագրություն», «բարեխիղճ լրագրություն», «լրագրողական էթիկա» հասկացությունների ներքո: Այսինքն, սույն դատական վեճը մասամբ գտնվում է նաև լրագրողական էթիկայի հարթության վրա:

5. Հողվածների բովանդակությունից չի բխում, որ լրատվամիջոցները կրոնական կազմակերպության գործունեության և նրա կողմից քարոզվող գաղափարների վերաբերյալ իրենց գնահատականները, կարծիքները և դատողությունները արտահայտելիս իրենց տրամադրության տակ ունեցել են նույնիսկ նվազագույն փաստական տվյալներ, որոնք ցանկացած օբյեկտիվ դիտորդի և անշահախնդիր երրորդ անձի հիմք կտային կարծիք կազմելու, որ այդ գնահատականները և կարծիքները վերագրելի էին կազմակերպությանը: «Հի կարող հայցել հեղինակություն այն անձը, ով չունի նման հեղինակություն» հայտնի կարգախոսը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը կամ կազմակերպությունը իր կոնկրետ արարքով, գործողություններով կամ վարքագծով իր վրա է հրավիրել հանրության համակ ուշադրությունը և քննադատությունը: Նման հանգամանքներում նույնիսկ սադրող բնույթի քննադատությունը պաշտպանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով և Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի դրույթներով: Մինչդեռ տվյալ դեպքում հողվածագիրները չեն կատարել իրենց սեփական քննությունը կրոնական կազմակերպության կողմից քարոզվող գաղափարների և համոզմունքների մասին, այլ դրա փոխարեն, հիմնվելով մեկ փաստական տվյալի, այն է՝ երրորդ անձի հայտարարության վրա, դրանից բխեցրել են ընդհանուր բնույթի վերացական մի շարք եզրահանգումներ և դատողություններ: Նման հանգամանքներում, երբ բացակայում են փաստական հանգամանքները, առաջին պլան է մղվում Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը այն մասին, որ փաստական տվյալների բացակայության պայմաններում առերևույթ է դառնում արժանապատվությունը արատավորելու դիտավորության առկայությունը: Իսկ այս չափորոշիչի առկայությունը էական է հայտարարությունը վիրավորական կամ զրպարտող բնույթի համարելու համար:
6. Նույն լույսի ներքո է խորհուրդը գնահատում նաև հողվածներին ուղեկցող լուսանկարները, որոնք տվյալ դեպքում ներկայացվել են որպես ծաղրանկարներ: Ծաղրանկարները հանդիսանում են ազատ արտահայտվելու առանձնահատուկ եղանակներից մեկը և որպես այդպիսին գտնվում են ազատ խոսքի պաշտպանության տակ, սակայն հողվածների բովանդակային մասում փաստական տվյալների բացակայությունը առարկայազուրկ էր դարձնում կազմակերպության ատրիբուտների և նրա ղեկավարի պրովոկացիոն տեսքով պատկերումը ծաղրանկարներում: Արդյունքում, ծաղրանկարների մատուցման նման եղանակը կարող էր վիրավորել կրոնական կազմակերպության անդամների կրոնական զգացմունքները:

#### 4. Եզրահանգում

- Հաշվի առնելով, որ կրոնական կազմակերպության հասցեին ուղղված դատողությունները զուրկ էին փաստական հիմքերից, նման պայմաններում հնարավոր չէ վիճահարույց արտահայտությունները որակել որպես բարեխիղճ դատողություններ (fair comment): Ավելին, հողվածի ընդհանուր համատեքստը և դրանում նաև աղանդ բառի շարունակաբար և հետևողականորեն օգտագործումը լրատվանյութը վերածում է կրոնական ատելություն սերմանող կամ հրահրող խոսքի:
- Խորհուրդը գտնում է, որ գործի փաստերը միանգամայն հնարավորություն են տալիս սույն վեճը լուծել արտադատական իրավակարգավորման եղանակներով և կողմերին կոչ է անում օգտվել այդ հնարավորությունից:



## Կ Ա Ր Ծ Ի Ը 8.

Ջրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Արթուր Գրիգորյանի հայցի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թ. մարտի 7-ին կայացրած վճռի վերաբերյալ

Ջրապարակված է 30.05.2012թ.-ին

## 1. Փաստերը

2012 թվականի մարտի 7-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը «Յրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Արթուր Գրիգորյանի կողմից բերված հայցի շրջանակներում կայացրել է վճիռ, որում արտահայտել է իրավական դիրքորոշումներ մի շարք խնդրահարույց հարցերի առնչությամբ, որոնք ներկայումս հանդիսանում են տարբեր երկրներում լրագրողական համայնքի քննարկման առարկա: Խոսքը վերաբերում է սոցիալական ցանցերից դեպի ավանդական ՁԼՄ-ների դաշտ հորդող տեղեկատվության պաշտպանվածության շրջանակներին այնպիսի հանգամանքներում, երբ արդի պայմանների ներքո մեդիա տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ էլեկտրոնային մեդիան ակտիվ կերպով զուգամիտվում է տպագիր մամուլի հետ: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Խորհուրդն իր նախաձեռնությամբ ներկայացնում է իր նկատառումները դատարանի արտահայտած դիրքորոշումների վերաբերյալ:

Նշված գործով հայցապահանջը բերվել էր լրատվամիջոցի էլեկտրոնային կայքում հրապարակված հոդվածին ի պատասխան՝ մի խումբ ընթերցողների կողմից կատարված վեց մեկնաբանությունների հիմքով (այսուհետ՝ քոմենթներ), որոնցում, ըստ հայցվորի, հնչել էին վիրավորական և զրպարտող բնույթի արտահայտություններ: Քանի որ մեկնաբանություններ կատարած անձինք հայտնի չէին, հայցապահանջը բերվել էր լրատվամիջոցի դեմ՝ անկախ այն հանգամանքից, որ վիճահարույց արտահայտությունները լրատվամիջոցինը չէին:

Իր որոշման պատճառաբանական մասում դատարանը սահմանել է, որ քանի որ հայցվորը մինչև դատարան դիմելը լրատվամիջոցին չի ներկայացրել մեկնաբանությունները ջնջելու և հեռացնելու մասին պահանջ, լրատվամիջոցը չէր կարող կրել այլ անձանց հեղինակած քոմենթները հեռացնելու պարտականություն, քանի որ այդպիսով կսահմանափակեր իր ընթերցողների ազատ արտահայտվելու իրավունքը, որը խոսքի ազատության այնպիսի միջամտություն է, որն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակարգում: Շարունակելով իր եզրահանգումները՝ դատարանը գտել է, որ քանի որ քոմենթների հեղինակներն այլ անձինք են, իսկ լրատվամիջոցը սոսկ տրամադրել էր ֆորում այդ քոմենթների համար, ինչպես նաև այն, որ լրատվամիջոցը մի որոշ ժամանակ հետո ջնջել ու հեռացրել էր նշված քոմենթները, լրատվամիջոցի կողմից վիրավորելու կամ զրպարտելու դիտավորություն առկա չէր:

## 2. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը ողջունում է սույն գործով դատարանի կայացրած վճիռը, քանի որ դատարանի վերոնշյալ մոտեցումը նկատելիորեն ընդլայնում է էլեկտրոնային լրատվամիջոցների պաշտպանվածության շրջանակները: Միևնույն ժամանակ խորհուրդը գտնում է, որ ցանկալի կլիներ, որ դատարանն իր որոշմամբ անդրադառնար հարցի մյուս կարևոր կողմերին ևս: Այսպես, միջազգային իրավունքի և պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ լրատվամիջոցի պատասխանատվության հարցը լուծելիս դատարանները և կարգավորող իրավական նորմերը գնահատող հատկանիշներ են համարում նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսին են լրատվական գործունեությունը իրականացնողի կողմից քոմենթների մասին իրազեկված լինելու և քոմենթների դաշտը որոշակիորեն վերահսկելու հանգամանքները: Այլ կերպ ասած, կարևոր է հաշվի առնելը, թե արդյոք լրատվություն տարածողը որոշակիորեն կառավարում է իր նորությունների պորտալի վրա տեղադրված քո-

մենքների հոսքը: Այնպիսի փաստական հանգամանքներ, ինչպիսին են, օրինակ, լրատվամիջոցի կողմից բանալի բառերի միջոցով որոնողական համակարգերի կիրառումը, ընթերցողներին վիրավորական կամ զրպարտող բնույթի քոմենթները ընդգծելու հնարավորության տրամադրելը, լրատվություն տարածողի կողմից հրապարակման ենթակա քոմենթների նախորոք ընտրությունը (այլ կերպ՝ որոշակի խմբագրական գործողությունների կատարումը), հանդիսանում են գնահատող հատկանիշներ լրատվամիջոցի կողմից քոմենթների պորտալը որոշակիորեն կառավարելու փաստը հաստատված համարելու համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսանում լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվության հարցը լուծելիս: Բոլոր դեպքերում, գնահատման առարկա պետք է հանդիսանա ոչ միայն այն հանգամանքը, թե արդյոք քոմենթների հեղինակը լրատվություն տարածողն է, թե ոչ, այլ նաև, թե արդյոք քոմենթների դաշտի կառավարումը լրատվամիջոցի կողմից զուտ մեխանիկական և պասիվ բնույթի է, թե՛ ոչ: Եթե լրատվամիջոցն իրականացնում է գործուն և ակտիվ բնույթի վերահսկողություն, ապա այս հանգամանքը կարող է հարց բարձրացնել լրատվամիջոցի պատասխանատվության մասին:

Տվյալ դեպքում թեև դատարանը հաշվի է առել այն փաստը, որ մինչև դատարան դիմելը հայցվորը վիճահարույց քոմենթները հեռացնելու պահանջով լրատվամիջոցին չէր դիմել և հետևաբար լրատվամիջոցը իրազեկված չի եղել իր հարթակում վիրավորական և զրպարտող բնույթի քոմենթների առկայության մասին, այդուհանդերձ, դատարանը բոլորովին քննության առարկա չի դարձրել վերը նշված երկրորդ հանգամանքի առկայությունը՝ թե որքանով էր լրատվամիջոցը կառավարում (վերահսկում) քոմենթների հոսքը իր էլեկտրոնային էջում: Խորհուրդը գտնում է, որ դատական ստուգման նման շրջանակները չեն ապահովում արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն: Ավելին, նման իրավակարգավորումը հակասում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ կետին, համաձայն որի՝ եթե տեղեկատվության աղբյուրը հայտնի չէ, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը: Տվյալ դեպքում քոմենթների հեղինակները հայտնի չէին, սակայն այնքանով, որքանով այդ քոմենթները հրապարակայնորեն տարածվել են ընկերության տրամադրած միջավայրից, ընկերությունը, թեև անկախ իր կամքից, դառնում է իրավահարաբերության սուբյեկտ:

Այս առումով Խորհուրդը համաձայն չէ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ դիրքորոշման հետ դատական քննության ընթացքում, համաձայն որի ընկերությունը որևէ պարտականություն չի կրում իր էջում հրապարակված այլոց մեկնաբանությունների համար, քանի դեռ դրանք հոսում են սոցիալական ցանցերից և չեն պատկանում բովանդակություն արտադրողին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ: Յուրաքանչյուր ոք ազատ խոսքի իրավունք ձեռք բերելու հետ միասին ձեռք է բերում նաև որոշակի պարտականություններ: Իրավունք և պարտականություն հասկացությունները քայլում են ձեռք ձեռքի տված: Այս ձևաչափը շարունակում է մնալ անփոփոխ՝ նույնիսկ մեդիա տեխնոլոգիաների սրընթաց զարգացման արդի ժամանակաշրջանում: Հետևաբար, զուտ այն հանգամանքը, որ լրատվամիջոցը տրամադրել է տեխնիկական հարթակ այլոց մեկնաբանությունների համար, լրատվամիջոցին չի ազատում իր պարտականություններից և պարտավորություններից:

Խորհուրդը գտնում է, որ վերը շարադրված իրավակարգավորմամբ առաջնորդվելիս կապահովվի հանրային և անհատական շահերի, արտահայտվելու ազատության և անձի արժանապատվության իրավունքների միջև ողջամիտ հավասարակաշռություն:

Չափի առնելով նշվածը, Խորհուրդը.

- գտնում է, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 997 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև էլեկտրոնային լրատվամիջոցների հարթակից տարածվող «քոմենթների» առնչությամբ,
- Կոչ է անում բոլոր ՁԼՄ-ներին իրականացնել ընթերցողների մեկնաբանությունների մոդերացիա՝ ազատ արտահայտվելու իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ներքո:
- Կոչ է անում էլեկտրոնային լրատվամիջոցներին մշակել և իրենց էլեկտրոնային էջում տեղադրել մոդերացիայի կանոններ, որպեսզի դրանք տեսանելի լինեն ընթերցողներին և այդպիսով ապահովվի մոդերացիայի կանոնների կիրառման հստակություն և թափանցիկություն:

## Կ Ա Ր Ծ Ի Ը 9.

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակունքի  
խորհրդի նախագահ և իրավապաշտպան  
Լևոն Բարսեղյանի դեմ «Մինաս  
Ավետիսյան» մշակութային բարեգործական  
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի  
նախագահ Արման Ավետիսյանի  
դատական հայցի վերաբերյալ

Հրատարակված է 07.06.2012թ.-ին

## 1. Փաստերը

2011 թվականի օգոստոսի 9-ին «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանը դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ և իրավապաշտպան Լևոն Բարսեղյանի՝ պահանջելով հրապարակայնորեն ներողություն խնդրել [www.asparez.am](http://www.asparez.am) կայքում հրապարակված վիրավորող և զրպարտող բնույթի հրապարակումների համար: Պահանջել է նաև փոխհատուցել 2 մլն դրամ՝ վիրավորանքի եւ զրպարտության համար, և 200.000 դրամ՝ դատական ծախսերի դիմաց:

Ըստ գործի փաստերի, երեք վիճահարույց հոդվածները հրապարակվել են հետևյալ հերթականությամբ. «Կան բաներ, որ չեն ներվում» վերնագրով հոդվածը հրապարակվել է 11.06.2011թ.-ին, «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» վերնագրով հոդվածը հրապարակվել է 15.06.2011թ.-ին և վերջին «Ընտանեկան կապալին էին հարվածելու» վերնագրով հոդվածը հրապարակվել է 16/06/2011թ.-ին: 23/06/2011թ.-ին Արման Ավետիսյանը նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին՝ պահանջելով տպագրել հերքում կամ հրապարակել իր նամակի բովանդակությունը՝ որպես պատասխան: Լևոն Բարսեղյանը Ա. Ավետիսյանի ուղարկած տեքստը հրապարակել է 30/06/2011թ: 04.08.2011թ.-ին Արման Ավետիսյանը հայցադիմումով դիմել է դատարան, որը մուտքագրվել է 09.08.2011թ: Պատասխանողը, ի թիվս այլ պնդումների, դատաքննության ընթացքում դատարանին է ներկայացրել «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» դիմում՝ պնդելով, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է 23.07.2011թ.-ին, մինչդեռ հայցը ներկայացվել է 04.08.2011թ.-ին:

## 2. Եզրահանգում

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով առկա են հայցային վաղեմություն կիրառելու նախապայմաններ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի ներքո, որը նշում է հետևյալը.

«Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում»:

Գործի փաստերից ակնհայտորեն պարզ է, որ հայցվորը վիճահարույց հոդվածների մասին իմացել է առնվազն 23.06.2011թ.-ին, երբ վերջինս նամակով դիմել է Լևոն Բարսեղյանին՝ հերքման կամ պատասխանի պահանջով: Հրապարակային դատաքննության ընթացքում հայցվորն ընդունել է այս փաստը: Հետևաբար, հայցվորը դատական հայցը պետք է ներկայացրած լիներ նամակի ամսաթվից հետո մեկ ամսվա ընթացքում՝ մինչև 23.07.2011թ.-ը, մինչդեռ դատական հայցը ներկայացվել է 04.08.2011թ.-ին:

Նման հանգամանքներում հայցվորը չի կարող օգտվել 1087.1 հոդվածի 13-րդ մասով սահմանված հայցային վաղեմության վեցամսյա ժամկետի պաշտպանությունից, քանի որ այդ դրույթով իրականում սահմանված է հայցային վաղեմության ոչ թե երկու, այլ մեկ ժամկետ՝ բաղկացած երկու տարրից: Առաջին տարրով սահմանված ժամկետի խախտումը առ ոչինչ է դարձնում երկրորդ տարրով սահմանված ժամկե-

տի կիրառությունը, քանի որ դրանք գործում են որպես մեկ ամբողջություն: Այսինքն, եթե անձը բաց է թողել հայցային վաղեմության առաջին ժամկետը՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացվելու հետո մեկ ամսվա ընթացքում դատարան դիմելու հնարավորությունը, ապա չի կարող հիմնվել երկրորդ՝ վիրավորանքի կամ զրպարտության պահից հետո վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու ժամկետի վրա: Անթույլատրելի է նաև պնդելը, որ դատական ավելի լայն պաշտպանություն սահմանելու առումով կարելի է հիմնվել միայն երկրորդ ժամկետի վրա: Հակառակ դեպքում օրենսդիրը կսահմաներ մեկ ընդհանուր ժամկետ՝ վեց ամիս՝ առաջարկելով ավելի պարզ իրավակարգավորում: Մինչդեռ օրենսդիրը, նպատակ ունենալով մեծացնել լրատվամիջոցների պաշտպանությունը դատական հայցերից, սահմանել է սահմանափակ ժամկետով առաջնային պայման՝ մեկ ամիս վիրավորանքի կամ զրպարտության մասին հրապարակման հայտնի դառնալու պահից հետո: Երկրորդ ժամկետը (6-ամսյա ժամկետը) ածանցյալ է առաջին ժամկետին և այն անկախ կիրառություն չունի: Դա երևում է թեկուզ տեքստի տառացի մեկնաբանությունից, որտեղ երկու նախադասությունները միմյանցից բաժանվում են ոչ թե «կամ», այլ «սակայն» շաղկապով, այսինքն՝ օրենսդիրը սահմանում է ոչ թե առաջնային իրավակարգավորումից այլընտրանքային, այլ ածանցվող իրավակարգավորում:

Ցավոք, այս խնդրին հստակորեն չի անդրադարձել ՀՀ Վճռաբեկ դատարանը իր թիվ ԵԿԴ/2293/02/10 վճռում, որում, ելնելով 1087.1 հոդվածի հիմքով միատեսակ դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունից, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Այս խնդրին չի անդրադարձել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր հայտնի ՍԴՈ-997 որոշումով: Այդուհանդերձ, նույնիսկ նման հանգամանքներում, ելնելով 1087.1 հոդվածի 13-րդ մասի դրույթների տառացի մեկնաբանությունից, Խորհուրդը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման՝ ժամկետանց լինելու հիմքով:

## Կ Ա Ր Ծ Ի Զ 10.

Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման վերաբերյալ

Հրապարակված է 26.06.2012թ.-ին



## 1. Փաստերը

2012 թվականի ապրիլի 27-ին ՀՀ վճռաբեկ դատարանը, իրականացնելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով իր լիազորությունները, կայացրել է նախադեպային որոշում, որում արտահայտել է իրավական դիրքորոշումներ վիրավորանքի և զրպարտության գործերով դատական պրակտիկայի մի շարք խնդրահարույց հարցերի առնչությամբ: Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1087.1 հոդվածի բազմաթիվ դրույթների կիրառությունը՝ այդպիսով ձգտելով ապահովել միասնական դատական պրակտիկա:

Խորհուրդը ողջունում է Վճռաբեկ դատարանի որոշումը՝ գտնելով, որ ընդհանուր առմամբ որոշումը իրավակարգավորման առաջադեմ եղանակներ է առաջադրում: Որոշմամբ մեկնաբանվել ու հստակեցվել են վիրավորելու և զրպարտելու հիմքով ծագող իրավահարաբերություններում շահագրգիռ կողմերի՝ վնաս պատճառող և տուժող անձանց շրջանակները, սահմանվել են գնահատող չափորոշիչներ՝ պարզելու համար արտահայտության վիրավորական կամ զրպարտող բնույթի լինելը, մեկնաբանվել են «իրապարակային արտահայտություն» և «հանրային գերակա շահ» հասկացությունները, մեկնաբանվել են հոդվածի 5-րդ մասում տեղ գտած մի շարք ընդհանուր բնույթի արտահայտություններ, որոնք հանդիսանում են լրագրողական պաշտպանական համակարգեր: Մենք գտնում ենք, որ նշված մեկնաբանությունները կարևոր են ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված միատեսակ դատական պրակտիկա ապահովելու համար:

Հանդգլած ենք, որ Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիրավորանքը և զրպարտությունը կարգավորող դրույթների վերաբերյալ հետագա մեկնաբանությունները կնպաստեն դատական պրակտիկայի առավել կատարելագործմանը: Խորհուրդը միևնույն ժամանակ մտահոգված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ և 9-րդ մասերում ներառված «տեղեկատվության աղբյուր» հասկացությունը մեկնաբանելիս դատարանի կողմից արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներով: Կարծում ենք, որ այդ դիրքորոշումները, հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթները և հատուկ կարգավիճակը, կարող են բացասաբար անդրադառնալ լրագրող-լրագրողական աղբյուր հարաբերությունների վրա, որի արդյունքում կվտանգվի լրատվամիջոցների ազատությունը իրենց աղբյուրներից օգտվելիս՝ հետևաբար նաև լրատվամիջոցների կողմից տեղեկատվության ազատ տարածման իրավունքը: Նշված դրույթներում դատարանը սահմանել է, որ տեղեկատվության աղբյուրներ են ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող այնպիսի «հեղինակներ» կամ «լրատվական գործակալություններ», «որոնք տարբեր միջոցներով հրապարակում են տեղեկատվություն»:

Այնուհետև մեկնաբանելով «միջոցներ» հասկացությունը՝ դատարանը սահմանել է, որ այդպիսիք են «անձի հրապարակային ելույթները», «պաշտոնական փաստաթղթերը», «հեղինակային ստեղծագործությունները»: Շարունակելով մեկնաբանել՝ դատարանը նշել է, որ նույնիսկ եթե տեղեկատվություն տարածողը վերարտադրել է աղբյուրից ստացված տեղեկությունը բառացիորեն կամ բարեխիղճ կերպով, վերջինս չի կարող ազատվել պատասխանատվությունից, եթե «հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում տեղեկատվության աղբյուր... 1087.1 հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն»: Հաշվի

առնելով, ինչպես նշվեց վերևում, որ հեղինակ են հանդիսանում միայն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր միայն հստակ սահմանված միջոցներով են հրապարակում տեղեկատվությունը (հրապարակային ելույթ, պաշտոնական փաստաթուղթ, հեղինակային ստեղծագործություն), ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ լրագրողական աղբյուրը տեղեկությունը հրապարակել է որևէ այլ եղանակով, կասկածի տակ է նման անձի՝ որպես հեղինակ հանդիսանալու հնարավորությունը: Այսպիսով, նշված մեկնաբանությունները չափազանց նեղացնում են «տեղեկատվության աղբյուրի» ընտրությունը, որի վրա լրատվամիջոցը կարող է հիմնվել՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելով Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ գործի հիմքում ընկած փաստերի վրա՝ վճռաբեկ դատարանը սահմանել է, որ թեև լրատվամիջոցը բացահայտել էր իր աղբյուրը՝ հեղինակին, ով հանդիսանում էր ոմն Անտոն Առակելովը և ով հայտնել էր լրատվամիջոցին Թաթուլ Մանասերյանի նկատմամբ ոստիկանության կողմից քրեական գործ հարուցված լինելու մասին, այդուհանդերձ, դատարանը որոշել է, որ վերջինս չէր կարող համարվել տեղեկատվության աղբյուր ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով, քանի որ «չի հանդիսանում տեղեկատվության տարածման որևէ միջոցի հեղինակ կամ լրատվական գործունեություն իրականացնող»: Այնուհետև, Վճռաբեկ դատարանը ընդհանրացված եզրահանգում է կատարել, որ այնպիսի անձի հրապարակած զրպարտող կամ վիրավորող տեղեկությանը հղում կատարելը, ով չի հանդիսանում տեղեկատվության աղբյուր, չի կարող համարվել տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

## 2. Եզրահանգում

Խորհուրդը մտահոգված է վերը նշված զարգացումներով, քանի որ նրանց հետևանքով ներմուծվում են պատշաճ և ոչ պատշաճ աղբյուր և դրանից բխող օրինական և ոչ օրինական լրատվական աղբյուր հասկացություններ և սահմանափակվում են այն աղբյուրների շրջանակները, որոնցից կարող են օգտվել լրատվամիջոցները:

Նման մոտեցումը նաև հակասում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի մասին» Թիվ (2000)7 հանձնարարականին, որի համաձայն տեղեկատվության աղբյուր է հանդիսանում «լրագրողին տեղեկություն տրամադրող ցանկացած անձ»: Նույն Հանձնարարականի բացատրական մասում, որում մեկնաբանվում են Հանձնարարականի բոլոր սկզբունքները, վերը նշված սկզբունքը մեկնաբանելիս նշվում է, որ լրագրողներին պետք է հնարավորություն տրվի ստանալ տեղեկություններ «բոլոր տեսակի աղբյուրներից» և այդ պատճառով «անհրաժեշտ է այդ տերմինը լայն մեկնաբանել» ազգային օրենսդրությունում կամ պրակտիկայում:

Առաջնորդվելով վերը նշվածով՝ Խորհուրդը անհրաժեշտ է գտնում համապատասխան նախադեպային դիրքորոշումների վերամշակումը:

## Կ Ա Ր Ծ Ի Զ 11.

Գևորգ Չայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի ՓԲԸ» գործով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ

Չրապարակված է 04.07.2012թ.-ին

## 1. Փաստերը

Գևորգ Յայրապետյանը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից 25.10.2010թ.-ին դատապարտվել է ազատազրկման՝ պետական դավաճանության հիմքով: Մինչ մեղադրական դատավճռի ուժի մեջ մտնելը՝ 2010 թվականի նոյեմբերի 14-ից 21-ի ժամանակահատվածում «Կենտրոն» հեռուստաընկերությունը եթեր է հեռարձակել «Յետաքննություն» խորագրով հաղորդաշար, որի ընթացքում ներկայացվել են քրեական գործի վերաբերյալ հանգամանքներ, մասնավորապես, որ մեղադրյալը, ունենալով նյութական շահագրգռվածություն, պետական գաղտնիք կազմող և հակահայկական քարոզչության համար նյութեր պարունակող տեղեկություններ է տրամադրել հակառակորդ երկրին, ինչի դիմաց ակնկալել է վարձատրություն: Նշված տեղեկությունները տարածվել են որպես հաստատված հանգամանքներ՝ փաստի մասին հայտարարությունների տեսքով, այլ ոչ թե որպես նախաքննական կամ դատական մարմնի ենթադրություն կամ կասկած:

Հաղորդման հեռարձակման պահի դրությամբ առաջին աստիճանի դատարանի դատավճիռը դեռ ուժի մեջ մտած չի եղել, քանի որ բողոքարկման ժամկետը դեռ չէր լրացել. հեռարձակումը տեղի է ունեցել 2010թ. նոյեմբերի 14-ից 21-ը, իսկ դատավճիռը հրապարակվել է 25.10.2010թ.-ը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, առաջին աստիճանի մեղադրական դատավճիռը ուժի մեջ է մտնում և դառնում վերջնական մեկ ամսվա ընթացքում՝ եթե վերաքննիչ բողոք չի բերվել: Ինչպես հետագայում ցույց են տվել փաստերը, հեռարձակման պահին մեղադրյալի պաշտպանը պատրաստում էր վերաքննիչ բողոք:

Մեղադրյալի պաշտպան Սեդա Սաֆարյանը առանձին դատական վարույթի շրջանակներում դիմել է դատարան ընդդեմ «Կենտրոն» հեռուստաընկերության՝ հայցելով իրավական պաշտպանություն հեռուստաընկերության կողմից անմեղության կանխավարկածի խախտման, ինչպես նաև վիրավորող և զրպարտող բնույթի տեղեկությունների տարածման համար: Հեռուստաընկերությունը դատարանում նշել է, որ «Յետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում հեռուստաընկերությունը տարածել է մի տեղեկատվություն, որը հեռուստաընկերությանը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությունը և, հետևաբար, հեռուստաընկերությունը պետք է ազատվի պատասխանատվությունից Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, քանի որ հանդիսանում է աղբյուրից ստացված տեղեկությունների բարեխիղճ վերարտադրող: Առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները հաստատված հանգամանք են համարել, որ «պատասխանող Ընկերությունը հրապարակել է բացառապես քրեական գործի նյութերում և դատարանի դատավճռում շարադրված տեղեկություններ և հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին, ներկայացրել է բացառապես այն եղելությունը, ինչն արտահայտված է քրեական գործի նյութերում՝ չկատարելով որևէ սեփական հետևություն և չարտահայտելով որևէ անձնական կարծիք, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ եթերում չի հնչել որևէ տեղեկություն, որն արտահայտված չլիներ նախաքննական նյութերում»: Նման հիմքերով դատարանները գտել են, որ հեռուստաընկերությունը օգտվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պաշտպանությունից, համաձայն որի լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է տվյալ տեղեկատվության տարածման համար պատասխանատ-

վությունից, եթե դա՝ հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին: Սույն հիմքով դատարանները լրատվամիջոցին ազատել են պատասխանատվությունից և մերժել հայցապահանջը:

Ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածի խախտման հիմքով բերված պահանջին, դատարանը սահմանել է, որ նման պահանջն անհիմն է, քան որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում անմեղության կանխավարկածի խախտման դիմաց իրավական պաշտպանության միջոց սահմանված չէ և ոչ էլ ՀՀ իրավական համակարգը կազմող իրավական որևէ ակտով կամ օրենքով է նախատեսված քաղաքացիական իրավունքների պաշտպանության նման եղանակ: Հետևաբար, դատարանը որոշել է, որ անմեղության կանխավարկածի խախտման փաստն արձանագրելու հայցվորի պահանջը չի բխում ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթներից, զուրկ է իրավական և օրենսդրական հիմքից և ենթակա է մերժման:

## 2. Եզրահանգում

Խորհուրդը համաձայն է դատարանի այն դիրքորոշման հետ, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը օգտվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասի պաշտպանությունից (բարեխիղճ վերարտադրող) և հետևաբար պետք է ազատվի պատասխանատվությունից: Այդուհանդերձ, Խորհուրդը սույն հարցը դիտարկում է լրագրողական էթիկայի տեսանկյունից: Անկախ այն հանգամանքից, որ լրատվամիջոցը գործում էր օրենսդրությամբ ընձեռած պաշտպանության շրջանակներում, լրատվամիջոցը չէր կարող չիմանալ, որ քանի դեռ բացակայում է անձի մեղքի մասին օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, մեղքի մասին ցանկացած փաստացի հայտարարություն անմեղության կանխավարկածի խախտում է: Անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքը պարտավոր են պահպանել ոչ միայն քրեական դատավարության մարմինները, այլ նաև յուրաքանչյուր ոք և հատկապես լրատվամիջոցները՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ դերը և առաքելությունը ժողովրդավարության կայացման գործում: «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեի թիվ (2003)13 Հանձնարարականի 2-րդ սկզբունքում նշված է, որ «անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Հետևաբար, լրատվամիջոցների կողմից ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկատվություն կարող է տարածվել կամ հաղորդվել միայն այն դեպքում, եթե դա չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը»: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ հեռուստաընկերությունը բարեխիղճորեն վերարտադրել է վստահելի աղբյուրից ստացված տեղեկատվությունը, նա պարտավոր էր լրատվանյութը հեռարձակելիս հարգել մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Սա բխում է, ի թիվս այլի, նաև այն հանգամանքից, որ անկախ օրենսդրական կարգավորման առկայությունից, լրատվամիջոցները բազմիցս հայտարարել են, որ նախընտրում են իրենց գործունեությունը ծավալել ինքնակարգավորման մեխանիզմների պայմաններում, օրինակ, լրագրողական վարքականոցների շրջանակներում:

## Կ Ա Ր Ծ Ի Ք 12.

«Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի դեմ  
«Գլենդել Ջիլզ» ՓԲԸ-ի հայցի հիման վրա  
դատական գործի վերաբերյալ

Ջրապարակված է 26.07.2012թ.-ին

## 1. Փաստերը

«Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից հրապարակվող զանգվածային լրատվության միջոցի «Ժամանակ» օրաթերթի 26.08.2010թ. թիվ 136 համարում տպագրվել է «\$1000 լռության դիմաց» խորագրով հոդվածը հետևյալ բովանդակությամբ.

*«Լավատեղյակ աղբյուրներից հայտնի դարձավ, որ «Գլենդել Դիլզ» կազմակերպության Գյունրիի ներկայացուցիչները Գյունրիում իրենց կառուցած Մուշ-2 թաղամասի շենքերից մեկի ինքնափլուզումից հետո փորձել են ամեն գնով համոզել բնակիչներին, որպեսզի նրանք կատարվածի մասին տեղյակ չպահեն լրատվամիջոցներին: Մեր աղբյուրը, որ չցանկացավ ներկայանալ, տեղեկացրեց թե, բնակիչներին «Գլենդել Դիլզն» առձեռն առաջարկել է 1000 դոլար գումար, ինչպես նաև խոստացել արագ վերանորոգել բնակարանը, միայն թե այդ թեման չհայտնվի ՋԼՄ-ներում, իսկ հակառակ դեպքում սպառնացել, որ չի վերանորոգի բնակարանը: Տուժած բնակիչները, սակայն, հրաժարվել են «Գլենդել Դիլզի» հետ ստվեռային գործարքից»:*

«Գլենդել Դիլզ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Հայցվոր) 23.09.2010թ. դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Պատասխանող) հերքելու «Ժամանակ» օրաթերթում հրապարակված հոդվածում Հայցվորի գործարար համբավն արատավորող տեղեկությունները և Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում, ինչպես նաև 500.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանին վճարված գումար:

Հայցվորը գտել է, որ լրատվամիջոցի հրապարակած տեղեկատվությունը մտացածին է, չի համապատասխանում իրականությանը և հանդիսանում է զրպարտություն, այն է՝ Հայցվորի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելը, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Հայցվորը պնդել է, որ տեղեկությունը տարածվել է Հայցվորի գործարար համբավն արատավորելու նպատակով, նկատի ունենալով հատկապես իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների բնույթն ու բովանդակությունը, մասնավորապես այն, որ նշված ապատեղեկատվության տարածումը չէր կարող ուղղված լինել այլ անձանց, այս դեպքում՝ բնակիչների, կամ հանրության իրավունքների պաշտպանությանը կամ ուղղված լիներ հանրային այլ շահերի պաշտպանությանը:

Պատասխանողը՝ վկայակոչելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, նշել է որ լրագրողը «ինքնափլուզում» բառն օգտագործել է որպես գնահատող դատողություն, որն ունեցել է կոնկրետ առարկայական դրսևորում: Դատաքննության ժամանակ լրագրողն իր ցուցմունքում պարզաբանել է «ինքնափլուզում» բառի օգտագործման նպատակը՝ նշելով, որ այդ բառն օգտագործվել է իր կողմից ներկայացնելու համար, որ առաստաղը փլվել է առանց որևէ կողմնակի միջամտության: Այսինքն, լրագրողը Մուշ-2 թաղամասի շենքի բնակիչների հետ ունեցած հարցազրույցից և դեպքի վայրը՝ Անժիկ Մելիքյանին պատկանող բնակարանը տեսնելուց հետո եղած փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում որպես լրագրողի կողմից արված գնահատող դատողություն հոդվածում տպագրել է «ինքնափլուզում» բառը, ինչը ոչ թե Հայցվորի հեղինակությանն ու պատվին վնաս պատ-

ճառելու, այլ հանրությանը տեղի ունեցածի վերաբերյալ իրազեկելու նպատակ է հետապնդել:

30.01.2012թ. դատարանը կայացրել է վճիռ՝ մասնակի բավարարելով հայցը և Պատասխանողին պարտավորեցնելով հերքելու «Ժամանակ» օրաթերթի 2010թ. օգոստոսի 26-ի թիվ 136 համարում հրապարակված «\$1000 լռության դիմաց» խորագրով հոդվածում Հայցվորի գործարար համբավն արատավորող (զրպարտող) տեղեկությունները: Միաժամանակ դատարանը որոշել է լրատվամիջոցից հօգուտ Հայցվորի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար:

Դատարանի հունվարի 30-ին կայացրած վճիռը 2012 թ. մայիսի 2-ին բողոքարկվել է «Սկիզբ Մեդիա» ՍՊԸ-ի կողմից: 2012 թ. հունիսի 14-ին վերաքննիչ բողոքը մերժվել է ամբողջությամբ՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

## **2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը**

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել է «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի դեմ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հայցի հիման վրա դատական գործը եւ հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## **3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները**

Սույն եզրակացության համար հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011թ. նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը և ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը:

## **4. Վիճարկվող գործի իրավական վերլուծությունը**

### Հարցի հանրային նշանակությունը

ՀՀ սահմանադրական դատարանը քննության առարկա դարձնելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը՝ գտել է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց: ՍԴ-ն արձանագրել է, որ հանրային շահի գերակայության տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք հասարակության տեղեկացված լինելու շահը գերակա է եղել տեղեկություն հայտնած անձի վրա դրված պարտականության ու պատասխա-



նատվության համենատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մանուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» («watchdog») իր գործառույթը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ Դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի «անհետաձգելի հասարակական պահանջի» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը հավասարակշռված և բարեխղճորեն՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության:

Սույն գործով դատարանի որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանն իր իրավական դիրքորոշման մեջ արձանագրել է, որ պատասխանող կողմը ինքն է փաստել, որ Հայցվորն իր գործունեության արդյունքում հանրային մեծ ճանաչում է ձեռք բերել և գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում, իսկ դատաքննությամբ ձեռք բերված փաստերի համաձայն՝ դատարանը հաստատված է համարել, որ Հայցվորի կողմից Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի շինարարական աշխատանքների ընթացքում տեղ են գտել որոշակի թերություններ: Բացի այդ, հանրահայտ է, որ Հայցվորը Գյումրի քաղաքում և Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում իրականացնում է մեծածավալ շինարարություն, որի որակի վերաբերյալ տեղեկատվությունն ակնհայտորեն վերաբերում է հասարակության լայն շրջանակների, իսկ տվյալ դեպքում հարցը կարևորվում է նաև աղետի գոտում շինարարական թերությունների նկատմամբ բնակչության մոտ ձևավորված զգայուն դիրքորոշման հանգամանքով:

Հետևաբար Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում տեղի ունեցած դեպքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումն ունի հանրային նշանակություն: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որևէ ապացույց այն մասին, որ շենքերից մեկն ինքնափլուզվել է, լրատվամիջոցը չի ներկայացրել դատարան, և որի հուրը գտնում է, որ Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի շինարարական աշխատանքների ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ հրապարակումը չի կարող ամբողջությամբ դիտվել որպես բարեխղճորեն ներկայացված:

#### Լրատվամիջոցի մոտ դիտավորության առկայությունը

Համաձայն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1577(2007) բանաձևի՝ հանրային շահից բխող հայտարարությունները, եթե նույնիսկ ապացուցվում է դրանց ոչ ճշմարիտ լինելը, չպետք է լինեն պատժելի, եթե դրանք կատարվել են առանց դրանց ոչ հավաստի լինելու փաստի իմացության, առանց վնաս պատճառելու դիտավորության և դրանց ճշմարտացիության ստուգման համար համապատասխան ջանքեր են գործադրվել: ՀՀ սահմանադրական դատարանը եզրահանգել է նաև, որ զրպարտության բնորոշ գծերից է նաև դիտավորությամբ, գիտակցաբար ոչ հավաստի ու անձի արժանապատվությունը վիրավորող փաստի (կամ փաստական տվյալների) տարածումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ այդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոց-

ներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված ու բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: Այլ կերպ՝ առկա է դիտավորության կանխավարկածը:

Սույն գործով դատարանի որոշման համաձայն՝ Պատասխանողն իր իրավական դիրքորոշման մեջ նշել է, որ լրագրողը, հարցազրույց վերցնելով բնակիչներից, ողջամտորեն միջոցներ է ձեռնարկել ստուգելու փաստի իսկությունը, նոր միայն տպագրել է հոդվածը: Ի պատասխան Հայցվորի այն դիրքորոշմանը, որ պատասխանող կողմը պետք է Հայցվորից ճշգրտեր բնակիչներին առաջարկված գումարի չափը, նոր միայն տպեր հոդվածը՝ Պատասխանողը գտնում է, որ տվյալ պարագայում դա ողջամիտ պահանջ է, քանի որ առաջարկությունը Հայցվորի կողմից բնակիչներին բանավոր կարգով է կատարվել, հետևաբար, որևէ երաշխիք չկար, որ հայցվորները ճիշտ տեղեկատվություն կտրամադրեին լրագրողին, ինչպես նաև նյութը պահանջում էր օպերատիվ հրապարակում, իսկ հարցում կատարելու և դրա պատասխանը ստանալուց հետո նյութը կկորցներ իր արդիականությունը:

Խորհուրդը գտնում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների թվում Դատարանը կարող էր դիտարկել նաև այն միջոցները, որոնք ձեռնարկել է Պատասխանողը՝ պարզելու դատարանի կողմից մատնանշված փաստերի ճշմարտությունը և հիմնավորվածությունը, քանի որ դիտավորության բացակայության դեպքում հանրային շահից բխող նույնիսկ ճշմարտությանը չհամապատասխանող հրապարակումները չեն կարող պատժելի լինել, որը էական նշանակություն ուներ սույն գործի լուծման համար: Այդ կապակցությամբ, մասնավորապես, նպատակահարմար էր պարզել, թե արդյոք դիտավորության բացակայության վերաբերյալ Պատասխանողի կողմից ներկայացված փաստերը (տվյալ դեպքում՝ շահագրգիռ անձանց հետ հարցազրույցները) ողջամտորեն կարող են համարվել բավարար, որպեսզի մինչև հոդվածը հրապարակելը պարզվեր դատարանի կողմից մատնանշված փաստերի ճշմարտությունը և հիմնավորվածությունը: Մինչդեռ, դատարանը համարել է, որ առանձին քաղաքացիների՝ ձայնագրություններում արված արտահայտությունները որևէ ապացուցողական նշանակություն չունեն և դրանք հանել է ապացույցների կազմից:

### Յերբման պահանջի կատարումը

Հայցվորը թիվ 894-27.08.10 գրությամբ առաջարկել է Պատասխանողին հերքել հրապարակված ապատեղեկատվությունը և դրանով արտադատական կարգով վերականգնել Հայցվորի խախտված իրավունքները և ազատությունները: Պատասխանողը 01.09.2010թ-ին լույս տեսած «Ժամանակ» օրաթերթում հրապարակել է Հայցվորի ուղարկած գրությունը: Սակայն, Հայցվորը գտել է, որ նշված գրության ուղղակի հրապարակումը չի կարող դիտվել որպես հերքում՝ նկատի ունենալով, որ հերքումը ոչ թե հերքում պահանջողի պահանջի ֆորմալ հրապարակման փաստն է, այլ հերքման բովանդակությունը հերքողի կողմից իր անունից հրապարակումն է: Իսկ խնդրո առարկա դեպքում, Հայցվորի կարծիքով, «Ժամանակ» օրաթերթը ոչ թե ընդունել և հերքել է իր կողմից հրապարակված ապատեղեկատվությունը, այլ հրապարակել է Հայցվորի կողմից հերքում պահանջելու գրությունը:

Հայցվորի կողմից Պատասխանողին ուղղված 894-27.08.10 գրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայցվորն այդ գրությամբ Պատասխանողից պահանջել է հրապարակայնորեն ներողություն խնդրել ինչպես իր բոլոր աշխատակիցներից և

հաճախորդներից, այնպես էլ՝ Գյումրու Մուշ-2 թաղամասի բնակիչներից:

Խորհուրդն արձանագրում է, որ Հայցվորի կողմից ներկայացված հերքման տեքստում տեղ են գտել արտահայտություններ, որոնք ոչ մի կերպ չեն կարող դիտարկվել որպես՝ Հայցվորի իրավունքները խախտող փաստացի անճշտությունների հերքում: Ավելին, այդ արտահայտություններն, ըստ էության, դրդել են պատասխանողին դրա կապակցությամբ հրապարակել «Դեռ համարձակվում են խոսել» հոդվածը, որը տվյալ իրավիճակում էլ ավելի է սրել իրավիճակն ու անխուսափելի դարձրել հարցի դատական քննությունը: Մինչդեռ, կողմերի՝ միմյանց նկատմամբ ավելի հարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքում հնարավոր էր նաև խնդիրը լուծել համանման գործերում առավել նախընտրելի՝ հաշտության տարբերակով:

#### Դրամական փոխհատուցման համաչափությունը

Արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար:

Խնդրի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գումարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններից ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր (օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացված հարկային հաշվետվությունները), հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով:

Հայցվորը խնդրել է Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել 2.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում: Դատարանը գտել է, որ պատասխանող լրատվամիջոցից պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում՝ հաշվի առնելով զրպարտության եղանակը, տարածման շրջանակը, ինչպես նաև Պատասխանողի գույքային դրությունը:

Հաշվի առնելով, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգումները, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով նախատեսված միջոցը, այն է՝ զրպարտություն համարվող տեղեկությունն հրապարակած լրատվության միջոցով հրապարակայնորեն՝ զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելը, սույն գործով կիրառելը միանգամայն բավարար միջոց էր, առավել ևս, որ Հայցվորի գործարար համբավին հասցված ոչ նյութական վնասի առկայության փաստը ինչպես Հայցվորի կողմից, այնպես էլ՝ որևէ այլ կերպ չի ապացուցվել: Խորհուրդը նաև արձանագրում է, որ տվյալ դեպքում դատարանի կողմից նշանակված փոխհատուցման գումարի՝ 200.000 ՀՀ դրամ և Հայցվորի գործարար համբավին հասցված վնասի չափերի համարժեքությունը որևէ ձևով հիմնավորված չէ:

## 5. Եզրահանգում

### Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է.

- 1) Լրատվամիջոցի կողմից տեղեկատվության հրապարակումն ուներ հանրային նշանակություն և դրա տեղեկատվության բացահայտումն արդարացված էր: Սակայն, հրապարակված նյութը չի կարող համարվել լիովին բարեխղճորեն և հավասարակշռված ներկայացված:
- 2) Նպատակահարմար էր սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ դիտարկել նաև այն միջոցները, որոնք ձեռնարկել է լրատվամիջոցը՝ պարզելու դատարանի կողմից մատնանշված փաստերի ճշմարտությունը և հիմնավորվածությունը, քանի որ լրատվամիջոցի կողմից դիտավորության բացակայության դեպքում հանրային շահից բխող նույնիսկ ճշմարտությանը չհամապատասխանող հրապարակումները չեն կարող պատժելի լինել,
- 3) սույն գործի լուծման համար զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելը միանգամայն բավարար էր պատճառված վնասը փոխհատուցելու համար,
- 4) Հայցվորի կողմից 27.08.2010թ. լրատվամիջոցին ներկայացված հերքման տեքստում տեղ են գտել արտահայտություններ, որոնք ոչ մի կերպ չեն կարող դիտարկվել որպես՝ Հայցվորի իրավունքները խախտող փաստացի անճշտությունների հերքում: Լրատվամիջոցներին ներկայացվող հերքման և պատասխանի տեքստերը պետք է վերաբերեն միայն հերքման և/կամ պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին և չպարունակեն վիրավորական արտահայտչաձևեր: Դրանք պետք է համապատասխանեն «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հերքմանը և պատասխանին ներկայացվող պահանջներին:

## **Կ Ա Ր Ծ Ի Բ 13.**

«Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի դեմ Մուրադ Ասրյանի դատական հայցի վերաբերյալ

Չրապարակված է 14.08.2012թ.-ին

## 1. Փաստերը

Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱԴԴ/0231/02/11 քաղաքացիական գործն ըստ հայցի Մուրադ Արարատի Ասրյանի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող) պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության պահանջի մասին:

2011 թվականի փետրվարի 4-ին Պատասխանողը «news.am» ինտերնետային կայքի միջոցով հրապարակել է «Յերթական դատական հայցն անկախ լրատվամիջոցի դեմ: Անգրագիտության կատարյալ օրինակ» հոդվածը: Հոդվածում հրապարակվել են տեղեկություններ, որոնք, Հայցվորի կարծիքով, իրենց մեջ պարունակում են նրա հասցեին ներկայացված վիրավորանք: Ըստ հայցադիմումի, այդ տեղեկությունները մասնավորապես հետևյալն են՝

- *«Ընդ որում, դատարանը վարույթ է ընդունել մի հայց, որն ապշեցնում է իր անգրագիտությամբ և օրենքի խախտումներով»,*
- *«Էդիկ Ավետիսյանը ստիպված էր ժամանակ տրամադրել հայցվորի՝ Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանին շտկելու հայցի ակնհայտ անգրագիտությունը»,*
- *«Դիտարկումն, ի դեպ, անսպասելի էր Մուրադ Ասրյանի համար և վերջինս ողջամիտ որևէ բացատրություն չկարողացավ գտնել: Դատավոր Էդիկ Ավետիսյանը մի կերպ «հուշեց-բացատրեց» փաստաբանին, որ նա միջնորդություն ներկայացնի և դատարանից ժամանակ խնդրի՝ հայցում պատշաճ պատասխանողի անունը նշելու համար»:*

Հայցվորը հայցադիմումում նշել է, որ, նա, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ լինելով, ունի որոշակի ընկալելի դիրք հասարակությունում, ինչը պարտավորեցնում է ունենալ անբասիր վարքագիծ և օրինակելի կեցվածք, այնինչ Պատասխանողի կողմից հոդվածում տարածած տեղեկություններն ընթերցողներին հաղորդում են ապատեղեկատվություն, որն իր մեջ պարունակում է զրպարտություն՝ վտանգելով Հայցվորի, որպես Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամի նկատմամբ հասարակական վերաբերմունքի օբյեկտիվ դրսևորումը: Հայցվորը նաև գտնում է, որ Պատասխանողը չի ձեռնարկել աղեկվատ և արդյունավետ միջոցներ տեղեկատվության իսկությունը և իրականությանը համապատասխանելը ստուգելու ուղղությամբ նախքան հոդվածի հրապարակումը՝ այլապես հոդվածը չէր հրապարակվի, քանի որ տեղեկատվությունը ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը:

Հաշվի առնելով այն փաստը, որ հոդվածի մեջ տեղ գտած տեղեկատվությունը պարունակում է զրպարտություն և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 19-ին մասը և 1087.1-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 12-րդ մասերը՝ Հայցվորը խնդրել է դատարանին հրապարակայնորեն «news.am» կայքում վճռի հրապարակումից հետո 3 օրվա ընթացքում պահանջել Պատասխանողից հրապարակել դրանց վերաբերյալ Հայցվորի պատասխանը, ինչպես նաև սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել Հայցվորին:

Հայցվորը դատարան է ներկայացրել նաև միջնորդություն՝ փոխելու հայցի առար-

կան: Միջնորդության մեջ մասնավորապես նշված է, որ «հոդվածը լույս չէր տեսնի, եթե Հայցվորը որպես Հայաստանի Առիթմոլոգիական Սրտաբանական Կենտրոն ՄՊԸ-ի ներկայացուցիչ հայցադիմում չներկայացներ ընդդեմ Պատասխանողի», «հոդվածը իր մեջ պարունակում է 2 (երկու) լուսանկար: Պատասխանողի ներկայացուցիչների լուսանկարը Հայցվորի լուսանկարից տարբերվում է, մեղմ ասած», «հոդվածը սկսած 04 փետրվարի 2011թ.-ից մինչև միջնորդության ներկայացնելը տեղադրված է Պատասխանողի news.am կայքի էջում»:

Եզրահանգելով, որ հոդվածի նպատակը իրեն նվաստացնելն է՝ Հայցվորը փոխել է հայցային պահանջի չափը՝ հրապարակայնորեն «news.am» կայքում վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 3 օրվա ընթացքում պահանջել Պատասխանողից հրապարակել հոդվածի վերաբերյալ Հայցվորի պատասխանը, ինչպես նաև բռնագանձել հօգուտ Հայցվորի մեկական միլիոն դրամ որպես վիրավորանքի և գրպարտության համար փոխհատուցման գումարներ:

2011 թվականի մարտի 4-ին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն ընդունել է որոշում Հայցվորի ներկայացրած հայցադիմումը՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության պահանջի մասին և կից փաստաթղթերը վերադարձնել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2011 թվականի մարտի 29-ի որոշմամբ՝ դատարանի 04.03.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Հայցվորի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2011 թվականի մայիսի 25-ի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0231/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.03.2011 թվականի «վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Հայցվորի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2011 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ դատարանի 04.03.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Հայցվորի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0231/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.07.2011 թվականի որոշման դեմ Հայցվորի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

## **2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը**

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը գրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումն է՝ խորհուրդը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել է ԵԱԴԴ/0231/02/11 քաղաքացիական գործով իր տրամադրության տակ գտնվող նյութերը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

### 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

Սույն եզրակացության համար հիմք են ձևավորել Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, ինչպես նաև ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը:

### 4. Վիճարկվող գործի իրավական վերլուծությունը

Հարցի նախապատմությունն սկսվում է 2010թ. նոյեմբերի 23-ից, երբ «news.am» ինտերնետային կայքում հրապարակվել է «Սրտի արատով հիվանդին արիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «ֆռեազրել» են ու այլ սարք տեղադրել» վերտառությամբ հոդված: Ըստ այդ հոդվածի՝ «խմբագրություն դիմած ընթերցողներից մեկը՝ Զ. Կաթրջյանը, պատմել է, որ Հայաստանի արիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում ստորաբար խաբել են իրեն և 10 տարի շահագործման ժամկետով էլեկտրոկարդիոխթանիչի փոխարեն վիրահատության ընթացքում տեղադրել են նույն ֆիրմայի, սակայն արդեն 6-7 տարի պիտանելիության ժամկետով մեկ այլ սարք»: Հայաստանի արիթմոլոգիական սրտաբանական կենտրոնն էլ, համարելով, որ «news.am»-ում հրապարակված հոդվածը վնասում է իր գործարար համբավը, հայց է ներկայացրել դատարան՝ լրատվամիջոցից պահանջելով 2 միլիոն ՀՀ դրամ: Որպես կենտրոնի ներկայացուցիչ դատարան հայցադիմում է ներկայացրել Հայցվորը:

2011թ. փետրվարի 4-ին «news.am» կայքում հրապարակվել է «Հերթական դատական հայցը անկախ լրատվամիջոցի դեմ. անգրագիտության կատարյալ օրինակ» հոդվածը: Այդ հոդվածում Հայցվորին ուղղված մասնավորապես հետևյալ արտահայտությունները հետազայում հիմք են դարձել Հայցվորի կողմից դատարան դիմելու համար՝

- «*փետրվարի 4-ին կայացել է «news.am» լրատվական գործակալության դեմ ներկայացված դատական հայցով նախնական նիստը: Սակայն այն շատ արագ ավարտվել է, քանի որ դատավոր Էդիկ Ավետիսյանը ստիպված էր ժամանակ տրամադրել հայցվորի՝ Հայաստանի արիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի ներկայացուցիչ Մուրադ Ասրյանին՝ շտկելու հայցի ակնհայտ անգրագիտությունը*»,
- «*հայցը ներկայացվել է իրավաբանական անձ չհանդիսացող կայքի, այլ ոչ թե հիմնադիր «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի դեմ, մինչդեռ իրավաբանական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողն անգամ գիտե, որ նման բացթողումը, մեղմ ասած, հարիր չէ իրեն հարգող իրավաբանին*»,
- «*Հայցում փաստացի ներգրավված չէ պատասխանող, որովհետև պատասխանող կարող է լինել միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, մինչդեռ հայցը ներկայացված է կայքէջի դեմ*»,
- «*Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հրապարակման համար, քանի որ տարածել է անձի կատարած հայտարարությունը, իսկ դա չի կարող որակվել պատվի, արժանապատվության և գործարար համբավի դեմ կատարված ոտնձգություն*»,



- «Հայցուն նախ չի նշվել պատշաճ պատասխանողը, ներկայացվել է պահանջ 2 միլիոն դրամի չափով, բայց պետական տուրք է ներկայացվել 4 հազար դրամի չափով, այնինչ պետք է ներկայացվեր պետտուրք առնվազն 48 հազար դրամի չափով»:

Այդպիսով,

Խորհուրդն արձանագրում է, որ «news.am»-ի հոդվածում Հայցվորի հասցեին հնչեցված արտահայտությունները հիմնականում պայմանավորված են եղել այն հանգամանքով, որ Հայցվորը Կենտրոնի շահերի պաշտպանությանն ուղղված հայցադիմունքը թերի կամ խախտումներով է ներկայացրել դատարան:

Հայցադիմունքը խախտումներով ներկայացնելու մասին է վկայում նաև Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.03.2011 թվականի որոշումը, որի համաձայն Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմունքը և կից փաստաթղթերը վերադարձվել են: Հայցադիմունքը վերադարձնելու պատճառը եղել է այն, որ հայցով ներկայացվել է երկու պահանջ՝ Պատասխանողից պահանջվել է հրապարակել Հայցվորի պատասխանը և վերջինիս վճարել փոխհատուցում: Մինչդեռ, Հայցվորը վճարել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ոչ գույքային մեկ պահանջի համար նախատեսված պետական տուրք՝ 4000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ պետք է վճարեր մեկ հայցադիմունքում միացված երկու պահանջների համար: Մասնավորապես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գույքային պահանջով հայցադիմունքների համար պետական տուրքը գանձվում է հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից: Հետևաբար, հայցվորը պետք է վճարեր նաև նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի 2 տոկոսի չափով պետական տուրքի գումար: Սակայն Հայցվորը չի վճարել օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և դատարան չի ներկայացրել չվճարված պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որն էլ հիմք է եղել հայցադիմունքը վերադարձնելու համար:

Հայցվորը՝ հայցադիմունքը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որը վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ մասի իրավանորմը՝ եկել է այն եզրահանգման, որ զրպարտություն համարվող փաստացի տվյալները հերքելու և (կամ) դրանց վերաբերյալ իր պատասխանը հրապարակելու վերաբերյալ պահանջն իրենից ներկայացնում է ոչ գույքային պահանջ, իսկ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելու պահանջը գույքային պահանջ է: Հետևաբար, ըստ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ առաջին ատյանի դատարանն իրավացիորեն վերադարձրել է հայցադիմունքը, քանի որ պետական տուրքի գումարը վճարվել է միայն ոչ գույքային պահանջի համար, իսկ գույքային, այն է՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով հատուցում վճարելու մասով Հայցվորը պետական տուրք չի վճարել: Ուստի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն առաջին ատյանի դատարանի՝ հայցադիմունքը վերադարձնելու մասին որոշումը թողել է անփոփոխ: Այնուհետև, Հայցվորը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը քննարկելով բողոք բերած անձի հիմնավորու-

մը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտել է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման, քանի որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Այդպիսով, առաջին ատյանի դատարանի որոշմամբ, որն անփոփոխ է թողնվել ՀՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ, իսկ վերջինս էլ չի բեկանվել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, փաստացիորեն հաստատվել է այն հանգամանքը, որ Հայցվորի կողմից ներկայացված՝ Կենտրոնի շահերի պաշտպանությանն ուղղված հայցադիմումում առկա են խախտումներ:

Համաձայն լինելով հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ դատարանների վերոգրյալ որոշումների հետ՝ Խորհուրդը միաժամանակ արձանագրում է, որ Հայցվորը հայցադիմումն այդ տեսքով ներկայացնելու համար ունեցել է սկզբունքային դիրքորոշում: Վերաքննիչ բողոքի հիմնավորումներում Հայցվորը մասնավորապես նշել է, որ «թեև անձին պատճառված բարոյական վնասը կարող է որոշվել կոնկրետ դրամական գումարով, այնուամենայնիվ օրենքով դա դիտարկվում է որպես ոչ գույքային վնաս, և պետական տուրքը պետք է գանձվի ոչ գույքային պահանջի մասով», և «ինքն իրականում ներկայացրել է մեկ պահանջ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության մասին»: Իսկ պատասխանի հրապարակումը և փոխհատուցումը, ինքնուրույն պահանջներ չեն: Այսինքն, Հայցվորը համոզված է եղել, որ տվյալ դեպքում իր պահանջը ոչ գույքային է, ուստի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն մուծել է բազային տուրքի քառապատիկի չափով պետական տուրք (4000 ՀՀ դրամ):

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ հոդվածով ակնհայտորեն նսեմացվում են Հայցվորի մասնագիտական կարողությունները. «news.am»-ը կարող էր մինչև հոդվածի հրապարակումը Հայցվորից պարզաբանում խնդրել: Տեղեկանալով Հայցվորի սկզբունքային դիրքորոշմանը՝ «news.am»-ն, ամենայն հավանականությամբ, ձեռնպահ կմնար Հայցվորի իրավական գիտելիքները գնահատելուց:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ՝ Հայցադիմումը վերադարձնելը, հոդվածի 1-ին մասում նշված են 8 դեպք, երբ դատավորը վերադարձնում է հայցադիմումը: Այդ դեպքերից են նաև այն դեպքերը, երբ չեն պահպանվել նույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները (92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ մնան միջնորդությունը մերժվել է (92-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը: Այդպիսով, նշված, ինչպես նաև օրենսգրքով նախատեսված մյուս հիմքերով հայցադիմումը վերադարձնելու և արձանագրված խախտումները վերացնելուց հետո՝ հայցադիմումն ընդունելու գործընթացն օրենքով դիտվում է որպես բնականոն դատավարական ընթացակարգ:

Յետևաբար, Խորհուրդը գտնում է, որ հայցադիմումը վերադարձնելու և այն կրկին ընդունելու՝ օրենքով նախատեսված բնականոն ընթացակարգի կիրառումը, չպետք է դիտվեր որպես գործընթացում ներգրավված անձի մասնագիտական գիտելիքները գնահատելու շարժառիթ:

Ինչ վերաբերում է հայցը «news.am»-ի դեմ հարուցելու իրավաչափությանը, ապա պետք է առաջին հերթին նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել: «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին պարբերության համաձայն՝ «news.am»-ը ցանցային լրատվության միջոց է, քանի որ այն տարածվում է հանրային հեռահաղորդակցության ցանցով՝ որպես որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի և լրատվություն ներառող տեղեկատվական պաշար: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն լրատվության միջոցը կարող է տարածվել միայն իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող լրատվական գործունեություն իրականացնողի անունից:

Յետևաբար, Խորհուրդը գտնում է, որ մինչև դատարան դիմելը նպատակահարմար էր պարզել, թե «news.am»-ը ո՞ր իրավաբանական կամ ֆիզիկական անձի անունից է տարածվում (տվյալ դեպքում՝ «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի) և այնուհետև՝ նրա դեմ հայց հարուցվեր:

Սակայն, միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «news.am» կայքում այդ լրատվության միջոցը տարածող իրավաբանական անձի անվանումը նշված չէ, որը «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի խախտում է, ըստ որի՝ նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի յուրաքանչյուր թողարկում պետք է ներառի նաև լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման (կամ իրավաբանական անձի անունից գործող նրա առանձնացված ստորաբաժանման հաշվառման) վկայականի համարը, տրման օրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաև պետական գրանցման վկայականի համարը և տրման օրը):

Ցանցային լրատվության միջոցը թողարկվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երրորդ պարբերության իմաստով նյութական կրիչ համարվող էլեկտրոնային փաստաթղթով, որը «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկություն կամ հաղորդագրություն է: «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ ցանցային լրատվության միջոցը, որպես էլեկտրոնային փաստաթուղթ, ներկայացվում է արտաքին ձևով, որը էլեկտրոնային փաստաթղթի վերարտադրման արդյունքն է ցուցասարքի (դիսփլեյի) էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա՝ տեսողական դիտման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով:

Յետևաբար, Խորհուրդը գտնում է, որ ցանցային լրատվության միջոցը (տվյալ դեպ-

քում՝ «news.am»-ը) նյութական կրիչով (էլեկտրոնային փաստաթղթով) թողարկվող լրատվության միջոց է, որի վրա նույնպես տարածվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը: Սակայն, Խորհուրդը նաև արձանագրում է, որ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը՝ ցանցային լրատվության միջոցների վրա տարածվելու առումով հստակեցման կարիք ունի, քանի որ ցանցային լրատվության միջոցների՝ «նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոց» լինելու հանգամանքը կարող է վերագրյալից բացի, այլ մեկնաբանությունների տեղիք տալ: Բացի այդ նշված հոդվածի 1-ին մասում թվարկված որոշակի պահանջներ, օրինակ՝ «տվյալ թողարկման օրինակների ընդհանուր քանակը» ցանցային լրատվության միջոցների համար կիրառելի չեն:

Խորհուրդը սույն եզրակացությամբ նպատակահարմար է համարում նաև մասամբ անդրադառնալ թիվ ԵԿԴ/2707/02/10 և ԵԿԴ 0392/02/11 դատական գործերին, քանի որ դրանք որոշակիորեն փոխկապակցված են սույն գործին: 01.12.2010թ. «Առավոտ» օրաթերթում հրապարակված «Իսկ ո՞ւր մնաց հիպոկրատի երդումը» վերնագրով հոդվածի հիման վրա 2010 թվականի դեկտեմբերի 21-ին Կենտրոնը դիմել է դատարան՝ ընդդեմ «Առավոտ» օրաթերթի՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության պահանջով (գործ ԵԿԴ/2707/02/10): Դատարանում Կենտրոնի շահերը կրկին ներկայացրել է Հայցվորը: Կենտրոնի աշխատանքների վերաբերյալ հոդվածում հրապարակված տեղեկությունները գրեթե համանման են «news.am»-ում հրապարակված «Սրտի արատով հիվանդին արիթմոլոգիական սրտաբանական կենտրոնում «ֆռաացրել» են ու այլ սարք տեղադրել» հոդվածում հրապարակվածները: Թերևս այդ նմանությունն է եղել պատճառը, որ «Առավոտ» օրաթերթի 2011թ. փետրվարի 5-ի համարում, ինչպես նաև նույն օրը «aravot.am» կայքում հրապարակվել է ««Առավոտին», news.am-ին դատում են նույն բանի համար հոդվածը, որը հիմք է եղել Հայցվորի համար դիմելու դատարան՝ ընդդեմ «Առավոտ» օրաթերթի՝ պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության պահանջով (գործ ԵԿԴ 0392/02/11): Հատկանշական է, որ «Առավոտ» օրաթերթի դեմ ուղղված երկու գործերն էլ ավարտվել են հաշտության համաձայնությամբ, ընդ որում՝

- 1) **առաջին դեպքում** «Առավոտ» օրաթերթն ընդունել է, որ «01.12.2010թ. հրապարակված «Իսկ ո՞ւր մնաց հիպոկրատի երդումը» վերնագրով հոդվածի մեջ ներկայացվել է չճշտված տեղեկատվություն: Արդյունքում, հոդվածն արատավորել է Կենտրոնի գործարար համբավը, աշխատակազմի և տնօրեն Սմբատ Ջամայանի պատիվն ու արժանապատվությունը»: Բացի այդ, օրաթերթը, մինչ հաշտության համաձայնությունը հաստատվելը, տպագրել է հերքում և Կենտրոնի պատասխանը:
- 2) **Երկրորդ դեպքում** օրաթերթը պարտավորվել է հրապարակել հերքում, որտեղ մասնավորապես նշված է, որ ««Առավոտին», news.am-ին դատում են նույն բանի համար» հոդվածը «գրված էր միակողմանի, քանի որ չէր ներկայացվել դատական վեճում ներգրավված կողմերից մեկի հայցվոր՝ փաստաբան Սուրադ Ասրյանի դիրքորոշումը, ավելին, հայցի վերաբերյալ արտահայտված լրագրողի կարծիքը արատավորել է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, ինչի կապակցությամբ խմբագրությունը հայցում է փաստաբանի ներողամտությունը»:

3) Այդպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ սույն գործին համանման դեպքում Հայցվորի (նրա ներկայացրած անձի) և մեկ այլ լրատվամիջոցի՝ «Առավոտ» օրաթերթի միջև կայացել է հաշտության համաձայնություն, ընդ որում՝ տվյալ դեպքում լրատվամիջոցն ընդունել է, որ իր նույնաբովանդակ հրապարակմամբ արտավորել է Հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:

Հետևաբար, Խորհուրդը սույն գործով նույնպես նախընտրելի է համարում կողմերի միջև հաշտության կայացման տարբերակը: Հաշտության տարբերակի՝ դատաքննության ընթացքում նախընտրելիության մասին շեշտել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ դատարանները քննարկվող հարցի վերաբերյալ գործեր քննելիս նախ պետք է ջանքեր գործադրեն գործը հաշտությամբ լուծելու ուղղությամբ (տես՝ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի որոշումը):

Միաժամանակ Խորհուրդը գտնում է, որ կողմերի՝ հաշտության հասնելու անհնարինության դեպքում, հայցը նպատակահարմար է բավարարել մասամբ՝ «news.am»-ում հրապարակելով հոդվածի վերաբերյալ հերքումը և (կամ) Հայցվորի պատասխանը:

## 5. Եզրահանգում

### Հաշվի առնելով վերոգրյալը Խորհուրդը գտնում է.

- հաշվի առնելով, որ հոդվածով ակնհայտորեն նսեմացվում են Հայցվորի մասնագիտական կարողությունները, «news.am»-ը կարող էր մինչև այն հրապարակելը Հայցվորից պարզաբանում խնդրել: Տեղեկանալով Հայցվորի սկզբունքային դիրքորոշմանը՝ «news.am»-ն ամենայն հավանականությամբ ձեռնպահ կմնար նրա իրավական գիտելիքները գնահատելուց:
- հայցադիմումը վերադարձնելու և այն կրկին ընդունելու՝ օրենքով նախատեսված բնականոն ընթացակարգի կիրառումը չպետք է դիտվեր որպես գործընթացում ներգրավված անձի մասնագիտական գիտելիքները գնահատելու շարժառիթ,
- մինչև դատարան դիմելը նպատակահարմար էր պարզել, թե «news.am»-ը որ իրավաբանական կամ ֆիզիկական անձի անունից է տարածվում (տվյալ դեպքում՝ «Մեդիա Կոնսալտ» ՍՊԸ-ի) և այնուհետև՝ նրա դեմ հայց հարուցվեր: Սակայն, միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «news.am» կայքում այդ լրատվության միջոցը տարածող իրավաբանական անձի անվանումը նշված չէ, որը «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի խախտում է,
- Խորհուրդը սույն գործով նախընտրելի է համարում կողմերի միջև հաշտության կայացման տարբերակը:
- Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ կողմերի՝ հաշտության հասնելու անհնարինության դեպքում, հայցը նպատակահարմար է բավարարել մասամբ՝ «news.am»-ում հրապարակելով հոդվածի վերաբերյալ հերքումը և (կամ) Հայցվորի պատասխանը:

## Հայտարարություն 14.

«Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի Խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգունենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթերի դատական գործով դատարանի կայացրած վճռի վերաբերյալ

Հրատարակված է 14.08.2012թ.-ին

**2012**թ. հուլիսի 31-ին, դռնբաց դատական նիստում, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է վճիռ ըստ հայցի «Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի Խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանի ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգունենտի նեդելի վ Արմենիի» շաբաթաթերթերի՝ ի դեմս լրատվական գործունեություն իրականացնող «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության՝ պատիվն ու արժանապատվությունը, բարի համբավը արատավորող տեղեկությունները հերքելու և ներողություն խնդրելու պարտավորեցնելու պահանջի հիմքով:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը սույն թվականի մայիսի 11-ին անդրադարձել է այս դատական վեճին՝ իր տարածած եզրահանգման մեջ նշելով, որ կրոնական կազմակերպության հասցեին ուղղված պատասխանող լրատվամիջոցների հայտարարությունները զուրկ էին փաստական հիմքերից և որպես այդպիսին վիճահարույց հայտարարությունները հնարավոր չէր որակել որպես բարեխիղճ դատողություններ (fair comment):

Խորհուրդը նաև գտել էր, որ հոդվածի ընդհանուր համատեքստը, ընդհուպ մինչև «աղանդ» բառի շարունակաբար և հետևողականորեն օգտագործումը, լրատվական խոսքը վերածել էին կրոնական ատելություն սերմանող կամ հրահրող խոսքի:

Խորհուրդը խորապես անհանգստացած է դատարանի վճռով, քանի որ դատարանը չի ապահովել դատական ստուգման ամբողջական և արդյունավետ շրջանակներ: Դատարանը ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ իր առջև ունենալով, ինչպես դատարանն է նշել, կրոնական կազմակերպության և նրա ղեկավարի գործունեությունը լուսաբանելու և քննադատելու և այդ կերպ հասարակության շրջանում արձագանքներ առաջացնելու նպատակ, որն ինքնին իրավաչափ նպատակ է, լրատվամիջոցը պատրաստել է լրատվական նյութ՝ ամբողջությամբ և անվերապահորեն հիմնվելով երրորդ անձի հրապարակային հայտարարության վրա՝ առանց իր սեփական քննությունը կատարելու: Ինչպես բազմիցս նշվել է, թեև լրագրության նման եղանակը ինքնին չի հակասում օրենքի ֆորմալ պահանջներին, լրագրողական էթիկայի և պատասխանատու լրագրության տեսանկյունից լրագրության նման եղանակը խնդրահարույց է: Կոմվենցիայի կիրառությունը ստուգելու նպատակով դատական ստուգում իրականացնելիս դատարանը պետք է պարզեր, թե արդյոք լրագրողը վիճահարույց նյութը հրապարակելուց առաջ բարեխիղճ կերպով կատարել է իր սեփական քննությունը, և այդ իմաստով արդյոք կարելի էր ասել տվյալ հանգամանքների ներքո, որ լրագրողը ազատված էր իր հայտարարությունների փաստական հանգամանքները ստուգելու լրագրողական պարտականությունից:

Ի վերջո, նշելով պատասխանատու լրագրության մասին, Խորհուրդը նկատի ունի ոչ թե իրավական, այլ սոցիալական և մասնագիտական պատասխանատվության շրջանակները, որից առաջինը ենթադրում է, որ լրագրողը պետք է չափազանց մեծ զգուշություն ցուցաբերի, երբ լրատվական նյութն առնչվում է հասարակության բոլոր անդամների սոցիալական արժեքներին՝ այդ թվում ոչ միայն այլոց արտահայտվելու և հասարակական հետաքրքրություն ներկայացնող դեպքերի մասին քննադատական կարծիքներ հնչեցնելու ազատությունը, այլ նաև յուրաքանչյուրի կրոնական հանգումունքների նկատմամբ հարգանքի իրավունքը, իսկ երկրորդը՝ ճշգրիտ և անաչառ լրատվություն տարածելու լրագրողի մասնագիտական պարտքը:

## Կ Ա Ր Ծ Ի Զ 15.

«Երևանի պետական համալսարան»  
պետական ոչ առևտրային  
կազմակերպությունը և Արա Գաբուլայան  
ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրելյան  
Եղիազարյանի դատական  
գործի վերաբերյալ

Յրապարակված է 05.09.2012թ.-ին



## 1. Փաստերը

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ԵՊՀ) և Արա Գաբուլայանը 2011թ.-ի հունիսի 11-ին հայցադիմում են ներկայացրել ք. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրեկան Եղիազարյանի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման, հրապարակայնորեն ներողություն խնդրելուն և հերքման պարտավորեցնելու պահանջի մասին:

2012թ.-ի հոկտեմբերի 22-ին պատասխանող Սիրակ Եղիազարյանը մասնակցել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ընդունելության քննություններին, հանձնել քրեական իրավունք առարկայի քննությունը, սակայն նրա գրավոր աշխատանքն անբավարար է գնահատվել: «Բանաձև»-ի կողմից պատրաստվող և Հ1 հեռուստաալիքով հեռարձակվող «Ականատես» հաղորդաշարի 2011թ.-ի մայիսի 28-ի հաղորդման ժամանակ քննարկվել է վերոնշյալ դեպքը, որի ժամանակ Սիրակ Եղիազարյանի, ինչպես նաև հաղորդավարի և իրավաբան փորձագետի կողմից թույլ են տրվել մի շարք արտահայտություններ, որոնք, ըստ հայցվորների՝ արատավորում են ԵՊՀ-ի, Իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի և դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր Արա Գաբուլայանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, վիրավորանք և զրպարտություն են:

Հայցվորներ ԵՊՀ և Արա Գաբուլայանը դատական կարգով վիճարկել են «Ականատես» հաղորդաշարի՝ 2011թ.-ի մայիսի 28-ի թողարկման վերնագիրը՝ «Իրավագետ իրավախախտը» և հաղորդման ընթացքում հեռարձակված մի շարք արտահայտություններ:

2011թ.-ի հունիսի 11-ին ԵՊՀ-ն և Արա Գաբուլայանը հայցադիմումով դիմել են դատարան՝ խնդրելով պատասխանողներ «Բանաձև»-ին և Սիրեկան Եղիազարյանին պարտավորեցնել:

- «Ականատես» հաղորդաշարի՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող հաղորդման ընթացքում հրապարակային, բանավոր ներողություն խնդրել ԵՊՀ-ից և քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուլայանից՝ տեղադրելով այդ տեսանյութը նաև հաղորդաշարի ինտերնետային կայքում և [www.youtube.com](http://www.youtube.com): Սակայն, այս հայցապահանջը փոխվել է, քանի որ «Ականատես»-ն այլևս չի հեռարձակվում Հ1-ով: Ուստի, հայցվորները խնդրել են դատարանին պարտավորեցնել պատասխանողներին հրապարակային ներողություն խնդրել ԵՊՀ-ից և քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուլայանից Հ1-ով հեռարձակվող մեկ այլ հաղորդմամբ:
- «Բանաձև»-ի կայքի առաջին էջում, երևացող վայրում, ինչպես նաև <http://akanates.banadzev.com> ինտերնետային կայքի սկզբի և 28.05.2011թ.-ի հաղորդման էջերում, երևացող վայրում հրապարակել դատարանի վճիռը՝ նշումով. «Ք. Երևան, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է «Բանաձև» ՍՊԸ-ին և Սիրակ Եղիազարյանին ներողություն խնդրել Երևանի պետական համալսարանից և ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Արա Գաբուլայանից «Իրավախախտ իրա-

վագետը» հաղորդման ընթացքում հասցված վիրավորանքի և զրպարտության համար: Ներկայացվում է դատարանի վճռի ամբողջական տեքստը»:

Նշենք, որ «Բանաձև»-ի հավաստմամբ՝ հայցվորները նամակով ներկայացրել են հերքման տեքստ և պահանջել են հրապարակել այն: «Բանաձև»-ի նախագահ Արտակ Ալեքսանյանի հաղորդմամբ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերում «Ականատես» հաղորդման շրջանակներում «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հեռարձակվել է հերքման տեքստը, ինչպես նաև էկրանին ցուցադրվել է տեքստի թղթային տարբերակը: Պատասխանողի ենթադրությամբ՝ հայցվոր կողմը հնարավոր է բաց է թողել հերքում պարունակող հաղորդումը, ինչի պատճառով էլ դիմել է դատարան:

Հայցվոր Արա Գաբուզյանի ներկայացմամբ՝ հերքման տեքստը հրապարակելու օրվա և ժամի վերաբերյալ ձեռք է բերվել համաձայնություն, սակայն «Բանաձև»-ը հերքումը հրապարակել է ոչ պայմանավորված ժամանակ, ինչի արդյունքում շատ քիչ մարդ է տեսել հերքում պարունակող հաղորդումը, չեն տեսել նաև հայցվորները: Հետևաբար, հայցվորները համաձայն չեն հերքման ձևի պատշաճության հետ: Արա Գաբուզյանի հավաստմամբ՝ պատշաճ հերքում հրապարակելու դեպքում իրենք հայցից կիրառարկեին: Բացի այդ, պատասխանող կողմը չի ներկայացել դատարան, և գործը քննվել է առանց պատասխանող կողմի ներկայության:

## 2. Եզրահանգում

Փաստերը գնահատելիս Խորհուրդը հաշվի է առնում, որ ժողովրդավարական հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա խաղաղ կերպով արտահայտելու իր գաղափարները պետության և հասարակության համար կարևոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության ոլորտում տեղ գտած իրադարձությունների և երևույթների վերաբերյալ՝ անկախ այդ գաղափարների բացասականության աստիճանից:

Խորհուրդը հաշվի է առնում, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է խոսքի ազատության իրավունքի իրավական պաշտպանության բարձր չափանիշ, այն է, որ յուրաքանչյուր դեպքում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի միջամտության անհրաժեշտության հարցը պետք է գնահատվի ելնելով այն սկզբունքից, թե արդյոք միջամտության համար առկա է հասարակական սուր պահանջ և թե արդյոք նման միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Խորհուրդը հաշվի է առնում զանգվածային լրատվության միջոցների դերը ժողովրդավարական հասարակությունում և ՁԼՄ-ների առաքելությունը քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում պահել հասարակական նշանակություն ունեցող ոլորտները և երևույթները, հաշվի է առնում, որ կրթության ոլորտը պետության ներքին քաղաքականության կարևորագույն ոլորտներից մեկն է և ունի հանրային նշանակություն: Այս առումով իր դիրքորոշումն է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ «Սանդեյ Թայմս»-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում՝ նշելով, որ լրատվամիջոցների պարտականությունները չեն սահմանափակվում միայն փաստերի պարզ ներկայացմամբ, այլ, որ լրատվամիջոցը նաև մեկնաբանի փաստերն ու իրադարձությունները, իրազեկի հանրությանը և նպաստի հանրային նշանակության հարցերի քննարկմանը:

Խորհուրդը նաև հաշվի է առնում, որ վերոնշյալի հետ մեկտեղ ՄԻԵԴ-ը նշում է, որ լրատվամիջոցներն ունեն պարտականություն տրամադրելու հանրային նշանակության տեղեկություններ և գաղափարներ, չնայած նրան, որ լրատվամիջոցը չպետք է անցնի այլ անձանց հեղինակության պաշտպանության համար նախանշված սահմանները :

### **Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգման.**

1. Դիտարկելով հաղորդման ողջ բովանդակությունը լրագրողական վարքագծի տեսանկյունից՝ Խորհուրդը գտնում է, որ հաղորդման ընթացքում խախտված են բարեխիղճ և պատասխանատու լրագրության՝ բազմակարծության և հավասարակշռված լրատվության տրամադրման սկզբունքը:

Մասնավորապես, հաղորդման ընթացքում ԵՊՀ-ի և դասախոս Արա Գաբուզյանի հասցեին հնչած սուր քննադատությունը զուգակցվել է այնպիսի արտահայտություններով, տեսակետներով և կարծիքներով, որոնք կարող էին արատավորել անձի պատիվը և արժանապատվությունը: Նման պարագայում տեղեկատվության տարածումը պետք է կատարվեր հավասարակշռված, այսինքն պետք է ապահովվեր, որպեսզի եթերում հնչեին նաև ԵՊՀ-ի ներկայացուցչի և Արա Գաբուզյանի դիրքորոշումները, կարծիքները քննարկվող նյութի վերաբերյալ, մինչդեռ հաղորդման կազմակերպիչները ոչ միայն նման հնարավորություն չեն ընձեռել, այլ նաև միջոցներ չեն ձեռնարկել նշված հնարավորության ապահովման համար:

2. Մինչ դատարան դիմելը երկու կողմերի միջև ձեռք է բերվել բանավոր պայմանավորվածություն հերքման տեքստի հրապարակման օրվա և ժամի վերաբերյալ, սակայն պատասխանող կողմը, խախտելով պայմանավորվածությունը, այն հեռարձակել է մեկ այլ օր:

Խորհուրդը գտնում է, որ հերքումը չի համապատասխանում «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված պայմաններին, ուստի կողմը չի ապահովել համարժեք՝ հետևաբար նաև արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն: Նման հանգամանքներում միանգամայն հասկանալի է, թե ինչու հայցվոր կողմին չի բավարարել հերքման հրապարակումը և նա դիմել է դատարան:

3. Հայցվորները որևէ ֆինանսական փոխհատուցում չեն պահանջել: Տեղեկատվական վեճերի Խորհուրդը ողջունում է վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ գործերով դատական հայց ներկայացնելու դեպքում այս մոտեցումը՝ անկախ դատարանի վերջնական վճռից:

## Կ Ա Ր Ծ Ի Ը 16.

«Մեկ Ազգ» կուսակցության դեմ Դանիել Իրաննիսյանի, Բայանդուր Պողոսյանի և Ջասմիկ Սինոնյանի կողմից ներկայացված հայցի հիման վրա դատարանի՝ 28.06.2012թ-ին կայացրած վճռի վերաբերյալ

Ջրապարակված է 07.09.2012թ.-ին

## 1. Փաստերը

Քաղաքացիական ակտիվիստներ Դանիել Իոաննիսյանը, Բայանդուր Պողոսյանը, Հասմիկ Սիմոնյանը հայցադիմում են ներկայացրել դատարան ընդդեմ «Մեկ ազգ» կուսակցության՝ պատասխանող կազմակերպությունից հայցվորների պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորելու համար գումարի բռնագանձման, ինչպես նաև հրապարակային ներողություն խնդրելու պահանջի մասին:

Հայցադիմումի համար հիմք են եղել «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքի՝ facebook սոցիալական ցանցում հայցվորների մասին տարածած տեղեկությունները:

Դանիել Իոաննիսյանի մասին ասվել է հետևյալը.

- *«համասեռամուլների պաշտպան է, ով դատապարտում է «Մեկ ազգ» դաշինքի պայքարը ընդդեմ համասեռամուլության...Սա Րաֆֆի Հովհաննիսյանի երիտ. թևի անդամ է... ակտիվ անդամ... ճանաչեք հայեր, թե ովքեր են տուրք տալիս անբարո բարքերին...ծեր արևմտամետ լևոնական ու Րաֆֆիական ճամբարը կուղարկեն գրողի ծոցը...ծեր անբարո գաղափարների հետ...միայն զորեղ Հայաստան, միայն Հայ Առաքելական եկեղեցի...Այս խեղկատակը նույնիսկ ազգությամբ հայ չէ...»:*

Բայանդուր Պողոսյանի մասին ասվել է.

- *«Այս գաղափարական վիժվածքը լևոնական երիտ. թևի, առանց համասեռամուլների չի պատկերացնում Հայաստանն ու քարկոծում է «Մեկ ազգի» պայքարը համասեռամուլության դեմ...»:*

Հասմիկ Սիմոնյանի մասին դաշինքը հայտարարել է.

- *«այս տիկինը, դատապարտելով մեկ ազգի դաշինքի պայքարը ընդդեմ համասեռամուլության երևույթի, մեկ բան է փաստում, որ ինքը սեռական հեղափոխության վառ կողմնակից է ու Հայաստանը միայն պատկերացնում է համասեռամուլների հոծ բանակի ներքո»:*

## 2. Եզրահանգում

Սա առաջին դատական նախադեպն է Հայաստանի Հանրապետության ներպետական պրակտիկայում, երբ դատարանը քննության է առել սոցիալական ցանցում տարածված տեղեկատվության իրավաչափության հարցը: Այս իմաստով կարելի է ասել, որ դատարանի որոշումը նախադեպային բնույթ ունենալով՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն երկար ժամանակ է, ինչ ընթանում են հանրային քննարկումներ, թե արդյոք ազատ արտահայտվելու իրավունքը սոցիալական ցանցերում պետք է կարգավորվի այնպես, ինչպես սովորական հանրային միջավայրում:

- Այս առումով Խորհուրդը գտնում է, որ սոցիալական ցանցերը վաղուց դադարել են փակ միջավայր լինելուց, քանի որ բազմաթիվ խողովակներով օգտատերերը հաղորդակցվում և ինֆորմացիա են փոխանակում հանրային դաշտում գործող սուբյեկտների հետ: Այս առումով թե՛ իր իրավական, և թե՛ սոցիալական հետևանքներով որևէ տարբերություն չկա երկու այնպիսի երևույթների միջև, երբ մի դեպքում անձն իր բողոքի արտահայտումը կատարում է իր անձնական էջի ստատուսում տեղադրված հայտարարությամբ, իսկ մեկ այլ դեպքում, օրինակ, բողոքն արտահայտում է նույն հայտարարությունը պաստառի վրա փակցնելով և

քաղաքի բանուկ միջավայրում պարզելով: Երկու դեպքում էլ տեղեկությունը հասանելի է բոլորին: Ընդ որում, հենց այս նոր չափորոշիչն է կիրառել դատարանը սույն գործով՝ որոշելու համար, թե արդյոք տեղեկատվությունը ունեցել է հրապարակային բնույթ: Վկայակոչելով արդեն նախադեպային իրավունքով կայուն հաստատված «երրորդ անձի» չափորոշիչը՝ դատարանը միևնույն ժամանակ ներմուծել է «հասանելի է բոլորին» չափորոշիչը, որը, կարծում ենք, ավելի նպատակահարմար կիրառություն կարող է ունենալ համացանցում տարածվող տեղեկատվության առումով: Խորհուրդը ողջունում է դատարանի վերը նշված եզրահանգումները:

- Խնդրո առարկա արտահայտություններից դատարանը արատավորելու նպատակով կատարված վիրավորական արտահայտություններ է համարել միայն Դանիել Իոաննիսյանի հասցեին ուղղված «խեղկատակ» և Բայանդուր Պողոսյանի հասցեին ուղղված «զաղափարական վիժվածք» արտահայտությունները: Նշված արտահայտությունները, որոնք տվյալ համատեքստում օգտագործվել են որպես զնահատող դատողություններ, տարբեր համատեքստերում կարող են ստանալ տարբեր նրբերանգներ: Տվյալ համատեքստում դատարանը դրանք համարել է օբյեկտիվորեն արատավորող և վիրավորական՝ իր ներքին համոզման հիման վրա: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Խորհուրդը ձեռնպահ է մնում զնահատելուց, թե արդյոք տվյալ համատեքստում նշված արտահայտություններն արատավորող բնույթի վիրավորական արտահայտություններ էին, թե՛ ոչ:
- Ինչ վերաբերում է մնացած ընդարձակ արտահայտություններին, ապա դատարանը դրանք չի համարել ո՛չ վիրավորական, և ո՛չ էլ զրպարտող բնույթի, քանի որ դատարանը գտել է, որ դրանք վերացական արտահայտություններ են, այսինքն՝ օբյեկտիվորեն արատավորող բնույթի արտահայտություններ չեն: Ըստ դատարանի՝ որևէ կուսակցության պատկանելը, կամ որևէ մեկի պաշտպան լինելը, կամ զաղափարներ կրելը կամ տարածելը, ազգությամբ հայ չլինելը կամ այդ մասին տեղեկատվություն տարածելը, նույնիսկ իրականությանը չհամապատասխանող, իրականում չեն կարող արատավորել անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Խորհուրդը ողջունում է նման դիրքորոշումը, քանի որ դա ապահովում է քաղաքական խոսքի պաշտպանության լայն շրջանակներ:
- Կարծում ենք՝ դատարանի կողմից ողջամիտ մոտեցում է դրսևորվել նաև արդարացի փոխհատուցման հարցը լուծելիս: Նախ, հետևելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին, մասնավորապես, որ փոխհատուցման չափ սահմանելու յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի վիրավորանք և զրպարտանք կատարած անձի ֆինանսական վիճակը և բացառվի փոխհատուցման այնպիսի չափերի և ձևերի սահմանումը, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ պատասխանող կողմի համար, դատարանը բավարարել է ոչ-մյութական վճարի դիմաց փոխհատուցման պահանջը, որը կազմում էր խորհրդանշանական 10-ական դրամ յուրաքանչյուր հայցվորի համար: Այս առումով Խորհուրդը կրկին նկատում է, որ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի կիրառման հարցում նկատվում է հետևողականության դրսևորում:
- Ինչ վերաբերում է դատական ծախսերին, ապա այս պահանջն ամբողջությամբ մերժվել է, քանի որ հայցվորները չեն կարողացել փաստաթղթային հիմքերով հիմնավորել, որ այդպիսի ծախսեր իրականում կատարվել են: Այս առումով Խոր-

հուրդը ձեռնպահ է մնում որևէ կարծիք հայտնելուց, քանի որ այդ հայցը գտնվում է դատարանի հայեցողության տիրույթում: Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության եղանակին, ապա այս առումով դատարանը պարտավորեցրել է պատասխանող կազմակերպությանը ներողություն խնդրել հայցվորներից [www.facebook.com](http://www.facebook.com) համացանցային կայքում ներողության տեքստը տեղադրելու միջոցով: Կարծում ենք, որ տվյալ հանգամանքների ներքո դատարանը կարողացել է արդարացիորեն փոխհավասարակշռել կողմերի շահերը:

### 3. Առաջարկություն

Հաշվի առնելով, որ սույն գործը ՀՀ դատարանների կողմից քննված առաջին դատական գործն է ինտերնետում ազատ արտահայտվելու իրավունքի մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ այս թեման հայկական ինտերնետ միջավայրում ձեռք է բերում մեծ արդիականություն՝ Խորհուրդը գտնում է, որ հասունացել է պահը, որպեսզի լայնորեն քննարկվեն այդ միջավայրում ինքնակարգավորման նորմերի ընդունման և կիրառման հարցերը, և այդ նպատակով բոլոր հետաքրքրված ակտիվ օգտագործողներին հրավիրում է բանավեճի:

## Կ Ա Ր Ծ Ի Զ 17.

Հայկ Բաբուխանյանի և «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի կողմից ընդդեմ «Խմբագիր» ՍՊԸ-ի և Լրագրող Էդիկ Անդրեասյանի՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջի հիմքով դատավարության վերաբերյալ

Հրապարակված է 18.09.2012թ.-ին



## 1. Փաստերը

Պատասխանող «Խմբագիր» ՍՊԸ-ի կողմից հրատարակվող [www.report.am](http://www.report.am) էլեկտրոնային լրատվական կայքում 31.08.2010 թվականին տպագրվել է ««Իրավունքի» իրավունքը Հայկ Բաբուխանյանի թրի ծայրին է» վերնագրով ընդարձակ հոդված, որը հեղինակել է լրագրող Էդիկ Անդրեասյանը: 11.11.2010թ.-ին դիմելով դատարան՝ հայցվորը հայտնել է, որ հոդվածն ամբողջությամբ պարունակում է վիրավորական և զրպարտող բնույթի արտահայտություններ, որոնցում շարադրված փաստերը չեն համապատասխանում իրականությանը և դատարանից պահանջել է պարտավորեցնել լրատվական ընկերությանը և լրագրողին՝ հերքելու հրատարակված արատավորող և զրպարտող բնույթի տեղեկությունները, ներողություն խնդրել հայցվորներից, ամբողջությամբ հրապարակել դատարանի վճիռը նույն լրատվամիջոցով: Այնուհետև, ավելացնելով հայցային պահանջի չափը, հայցել է յուրաքանչյուր պատասխանողին առանձին-առանձին պարտավորեցնել վճարել 1 մլն դրամ վիրավորանքի և 2 մլն դրամ զրպարտության համար՝ ընդհանուր առմամբ 6 մլն դրամ:

27.02.2012թ.-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը ամբողջությամբ մերժել է հայցապահանջը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի հիմքով, որը սահմանում է, որ անձը կարող է նշված հոդվածի հիմքով հայց ներկայացնել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին իրեն հայտնի դառնալու պահից հետո մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Տվյալ դեպքում դատարանը պատճառաբանել է, որ հայցվորն իր հայցապահանջում կամ բանավոր դատալսումների ժամանակ որևէ փաստարկ չի ներկայացրել այն մասին, որ 31.08.2010թ.-ին տպագրված հոդվածի մասին իրեն հայտնի է դարձել ավելի ուշ, քան տպագրված նյութի օրը, ինչի պատճառով էլ հայցվոր կողմը դատարան է դիմել 11.11.2010թ.-ին՝ այդպիսով բաց թողնելով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասով նախատեսված մեկ ամսյա ժամկետը: Հայցը մերժելու հետ մեկտեղ առաջին ատյանի դատարանը որոշել է հայցվորներից բռնագանձել 236.000 ՀՀ դրամ՝ որպես չվճարված պետական տուրքի փոխհատուցում: Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի վճիռը և իր հերթին որոշելով հայցվորներից բռնագանձել 390 000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար չվճարված պետական տուրքի գումար, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը՝ փաստորեն մերժելով բողոքի ընդունելիության մասին հարցը: Վճռաբեկ դատարանի 25.07.2012թ. որոշմամբ սույն գործով դատավարությունն ավարտվել է:

## 2. Եզրահանգում

Մինչև Վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. նախադեպային որոշումը դատարանները Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ հոդվածը կիրառում էին տարաբնույթ մեկնաբանությամբ՝ վիրավորանքի և զրպարտության գործերով հայցային վաղեմության հարցը լուծելիս ստեղծելով իրավական անորոշություն և խառնաշփոթ: Օրինակ, թիվ ԵԿԴ/1708/02/10 գործով (Սուսաննա Բաղդասարյանն ընդդեմ «Հայք» թերթի խմբագրության) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը սահմանել էր հայցային վաղեմության երեք տարվա ժամկետ և այդ հիմքով ընդունել էր հոդվածի հրատարակումից 2 տարի, 6 ամիս և 11 օր հետո բերված հայցապահանջը՝ Քաղաքացիական օրենսգրքի 332-րդ

հողվածի հիմքով: Իսկ թիվ ԵԿԴ/2479/02/10 գործով (Բելա և Սեդրակ Քոչարյաններն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի) առաջին ատյանի դատարանը սահմանել էր հայցային վաղեմության վեցամսյա ժամկետ՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ կետի իմաստից բխեցնելով բացարձակ կանոն, համաձայն որի՝ հայցային վաղեմության ժամկետը որոշելիս անհրաժեշտ էր ընտրել հողվածով սահմանված երկու ժամկետներից առավելագույնը՝ վեց ամսվա ժամկետը:

Իր թիվ 9 որոշման մեջ Խորհուրդն արդեն հայտնել է իր դիրքորոշումը նշված խնդրի առնչությամբ՝ հայտարարելով, որ 1087.1 հոդվածի 13-րդ կետով իրականում սահմանվում է հայցային վաղեմության ոչ թե երկու, այլ մեկ ժամկետ՝ բաղկացած երկու տարրերից, որոնք, սակայն, գործում են որպես մեկ ամբողջություն: Այսինքն, եթե անձը բաց է թողել հայցային վաղեմության առաջին ժամկետը՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում դատարան դիմելու հնարավորությունը, ապա անձը չի կարող դրա փոխարեն հիմնվել երկրորդ՝ վիրավորանքի կամ զրպարտության պահից հետո վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու ժամկետի վրա: Իր այդ եզրահանգման մեջ Խորհուրդը նաև նշել էր, որ անթույլատրելի է պնդելը, թե դատական ավելի լայն պաշտպանություն սահմանելու առումով կարելի է հիմնվել միայն երկրորդ ժամկետի վրա:

Ի հակադրություն վերը շարադրված հակասական զարգացումների, որոնք երկար ժամանակ իրավաբանների և լրագրողական համայնքի մտահոգության առարկա էին, Խորհուրդը գոհունակությամբ արձանագրում է, որ վերջին ամիսների ընթացքում նշված հողվածի կիրառության դատական պրակտիկան ձեռք է բերել միասնականություն՝ 1087.1 հոդվածի 13-րդ կետի միատեսակ կիրառմամբ: Մասնավորապես, սույն թվի հուլիսի 11-ին թիվ ՇԴ/1469/02/11 գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է հայցապահանջը՝ գտնելով, որ հայցվորը խախտել էր վիճահարույց հրապարակման մասին տեղյակ լինելուց հետո մեկ ամսվա ընթացքում հայցապահանջ ներկայացնելու 1087.1 հոդվածի 13-րդ կետի պահանջը՝ անկախ այն հանգամանքից, որ նույն հողվածով սահմանված վեց ամսվա ժամկետը դեռ չէր լրացել:

Դատարանը մեկնաբանել է, որ *«անհրաժեշտ է վերը նշված երկու ժամկետների միաժամանակյա առկայությունը՝ նախ վիրավորանքի կամ զրպարտության մասին հայցվորի իմանալու պահից չպետք է անցած լինի մեկ ամսից ավել ժամանակ, և վիրավորանքի կամ զրպարտության պահից չպետք է անցած լինի վեց ամսից ավել ժամանակ»* (նույնանման եզրահանգման Խորհուրդը հանգել էր նաև իր թիվ 9 որոշման մեջ): Սույն գործով իրենց որոշումներում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները նույնպես կատարել են նույնանման եզրահանգումներ՝ մերժելով մեկ ամսվա ընթացքում դատարան դիմելու պահանջի խախտումով բերված հայցապահանջն այնպիսի հանգամանքի առկայության դեպքում, երբ դատարան դիմելու օրվա դրությամբ վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիսը դեռ չի լրացել: Կարևոր է նաև նշել, որ տվյալ դեպքում վերաքննիչ դատարանն իր եզրահանգման համար վկայակոչել է վճռաբեկ դատարանի 27.04.2012թ. նախադեպային որոշման մեջ շարադրված եզրահանգումները հայցային վաղեմության ժամկետի վերաբերյալ, որտեղ Վճռաբեկ դատարանը կատարել էր հետևյալ եզրահանգումը.

«Օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմել բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ զրպարտության պահից

վեց ամիսը լրանալը՝ դրանում ներառելով նաև զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Անհրաժեշտ է նաև նշել, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին վեց ամիսը լրանալուց հետո, բաց է թողնվում հայցային վաղեմության ժամկետը»:

Հիմք ընդունելով վերը շարադրված դատական ակտերը, Խորհուրդը գտնում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ կետի կիրառման առումով վերջապես ձևավորվել է կայուն հաստատված դատական պրակտիկա:

Խորհուրդը նաև նկատում է, որ հայցապահանջը մերժելիս առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները որոշում են կայացրել հայցվորներից բռնագանձել բավականին շոշափելի գումար՝ 236.000 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարանում չվճարված պետական տուրքի փոխհատուցում և 390.000 ՀՀ դրամ՝ վերաքննիչ բողոքի համար չվճարված պետական տուրքի գումար, միասին՝ 626.000 ՀՀ դրամ, որը կազմում է հայցի գումարային պահանջի ավելի քան 10%-ը: Դատարանի որոշումը պայմանավորված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, համաձայն որի հայցապահանջի մերժվելու դեպքում առաջին ատյանի դատարան ներկայացրած դիմումի դիմաց հայցվորներից գանձվում է գույքային պահանջի 2 տոկոսի չափով պետական տուրք, իսկ վերաքննիչ բողոքի դիմաց՝ գույքային պահանջի 3 տոկոսի չափով պետական տուրք: Խորհուրդը գտնում է, որ օրենսդրության նման պահանջը՝ վիրավորանքի և զրպարտության գործերի իմաստով, նպաստում է, որպեսզի քաղաքացիները զերծ մնան անհարկի և անհեռանկարային գանգատներից, որոնցում բերվում են ոչնչով չարդարացված գումարային մեծ պահանջներ:

## Կ Ա Ր Ծ Ի Զ 18.

«Իջևան ստուդիա» ՍՊԸ-ի և լրագրող  
Նաիրա Խաչիկյանի դեմ «Իջևանի ճՇՇ»  
ՓԲԸ -ի հայցի հիման վրա դատական  
գործի վերաբերյալ

Յրապարակված է 03.10.2012թ.-ին

## 1. Փաստերը

Հայկական երկրորդ հեռուստաալիքի եթերով հեռարձակվող «Լրաբեր» լրատվական ծրագրով 21.06.2011 թվականին հեռարձակվել է «Որտե՞ղ են քանդված սալաքարերը» վերնագրով տեսանյութ, որը պատրաստվել էր Իջևանի հեռուստաընկերության կողմից: Տեսանյութը վերաբերում էր «Իջևանի ճՇՇ» ՓԲ ընկերության կողմից Իջևան քաղաքի մի շարք փողոցների վերանորոգման աշխատանքներին: Տեսանյութում քննադատության է ենթարկվել ընկերությունը առանց համապատասխան թույլտվություն և համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Իջևան քաղաքի Իջևանյան փողոցի սալահատիկները քանդելու համար, որի արդյունքում փողոցը անանցանելի է դարձել մարդկանց և տրանսպորտի համար:

Մասնավորապես, հնչել են հետևյալ արտահայտությունները.

- *«գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջևանի ճանշին ձեռնարկություն»,*
- *«երևի մասնագիտական որակի ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ»,*
- *«քանդել ու սալահատիկը ծածուկ վաճառել է»,*
- *«Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են»,*
- *«Մետաղագործների փողոցի 36 միլիոն դրամի ծախսման ու մսխման աշխատանքների մասին են բարձրաձայնում բնակիչները հորդառատ անձրևներից հետո»:*

27.06.2011թ.-ին Իջևանի հեռուստատեսությունը հեռարձակել է «Սալիկները՝ ապահով հանգրվանում» վերնագրով լրատվական տեսանյութը, որտեղ «Իջևանի ճՇՇ» ՓԲԸ-ի տնօրենի և այլ աշխատակիցների կողմից պարզաբանումներ են տրվել ներկայացված տեղեկությունների կապակցությամբ:

Ընկերությունը 19/07/2011թ.-ին դիմել է դատարան ընդդեմ Իջևանի հեռուստաընկերության և տեսանյութը պատրաստած լրագրող Նաիրա Խաչիկյանի՝ գործարար համբավը ոտնահարելու հետևանքով ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և 3.000.000 դրամ գույքային և ոչ գույքային վնասի դիմաց փոխհատուցում (այդ թվում 200.000 դրամը փաստաբանին վճարված վարձավճարի և 64.000 դրամ պետական տուրքը միասին՝ որպես դատական ծախս) պատասխանողներից համապարտության կարգով գանձելու համար:

Դատաքննության ընթացքում հայցվոր ընկերությունը պնդել է, որ վերը նշված վիրավորական ու զրպարտող արտահայտությունները վնասել են այլ սուբյեկտների հետ իրենց գործարար հարաբերությունները: Պարզաբանելով իր հայցապահանջը՝ հայցվորները հայտնել են, որ այդ արտահայտություններից առաջին երկուսը վիրավորական, իսկ մնացած երեքը՝ զրպարտող բնույթ ունեն: Պատասխանող կողմն էլ պնդել է, որ լրատվության միջոցով բարձրաձայնվել են հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ՝ հանրային վայրի վերանորոգման աշխատանքների թերությունների մասին: Պատասխանողները նշել են նաև, որ 27.06.2011թ.-ի հաղորդման ժամանակ հայցվոր ընկերության տնօրենը և այլ աշխատակիցներ հնարավորություն են ստացել ելույթ ունենալ և ներկայացնել իրենց պարզաբանումներն ու տեսակետները, որից հետևում է, որ հայցվոր ընկերությունը ստացել է հերքման և պա-

տասխանի հնարավորություն և, հետևաբար, չի կարող հայցել իրավական պաշտպանության այլ միջոցներ, տվյալ դեպքում գումարային փոխհատուցում՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 10-րդ մասի համաձայն:

Դատարանը իր 27/04/2012թ.-ի վճռում եզրահանգել է, որ առաջին երկու արտահայտությունները՝ «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջևանի ճանշին ձեռնարկություն» և «մասնագիտական որակների ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ» իրենց բնույթով գնահատողական դատողություններ են, որոնք վիրավորական չեն կարող համարվել: Թեև լրագրողը ընտրել է չափազանցություններ, սակայն այդպիսի ոճով արտահայտել է կարծիք, որն ինքնին արատավորող բնույթի չէ: Մնացած արտահայտությունները գնահատելով որպես փաստի մասին հայտարարություններ՝ դատարանը եզրահանգել է, որ «սալահատիկը քանդել և ծածուկ վաճառել են», «Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են» և «36 միլիոն դրամի ծախսման ու մսխման» արտահայտությունները որպես փաստական տվյալներ չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են կազմակերպության գործարար համբավը: Այդ հիմքով դատարանը սահմանել է, որ հեռուստարձկերությունը վնաս է հասցրել հայցվոր ընկերության գործարար համբավին՝ հեռարձակելով զրպարտող բնույթի տեղեկատվություն: Փոխհատուցման չափը որոշելիս դատարանը եզրահանգել է, որ հայցվոր ընկերության կրած վնասը մասամբ փոխհատուցվել է այն հանգամանքով, որ վերջինս հնարավորություն է ստացել իր տեսակետները ներկայացնել 27.06.2011թ.-ին Իջևանի հեռուստատեսությամբ հեռարձակված «Սալիկները՝ ապահով հանգրվանում» հաղորդումով և այդ հիմքով փոխհատուցման չափը նվազեցրել է՝ սահմանելով 50.000 դրամ:

Վերաքննիչ դատարանը ամբողջությամբ բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկել է առաջին ատյանի դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննություն կատարելու համար: Հիմնվելով Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. նախադեպի վրա՝ իր որոշումը դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ.

«Գնահատման առարկա պետք է դառնա օգտագործված միջոցի կամ եղանակի՝ տեղեկատվության արագ և համընդհանուր տարածման հարցը... զանգվածային լրատվության միջոցներով կատարված հրապարակումների տարածումը շատ ավելի արագ է, քան եթե հրապարակումն արվեր անձանց փոքրաթիվ խմբի շրջանակում: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև տեղեկատվությունը տարածելու շրջանակը: Զանգվածային լրատվության միջոցները, որոնք գործում են տեղական մակարդակում (մարզ, քաղաք), ունեն ավելի փոքր տարածման շրջանակ, քան հանրապետության ամբողջ տարածքով հեռարձակվող և տարածվող լրատվամիջոցները:

Նյութական փոխհատուցում նշանակելու դեպքում անհրաժեշտ է, որ դատարանները մեծ ուշադրություն դարձնեն փոխհատուցվող գումարի չափի սահմանմանը, պատասխանողներից պահանջեն նրանց եկամուտների վերաբերյալ պետական իրավասու մարմիններին ներկայացված ֆինանսական և այլ փաստաթղթեր... հակառակ դեպքում մեծ չափով փոխհատուցումները կարող են ծանր հետևանքներ ունենալ վերջիններիս բնականոն գործունեությունը շարունակելու առումով:

...Տվյալ դեպքում անհասկանալի է, թե ինչ հանգամանքներ հաշվի առնելով է դատարանը հանգել այն հետևության, որ փոխհատուցման չափը պետք է լինի 50.000 ՀՀ դրամ այն պայմաններում, երբ հայկական երկրորդ հեռուստաընկերությունը եթեր է հեռարձակվում ամբողջ հանրապետությունում, այսինքն՝ ամբողջ հանրապետությունով գործունեություն ծավալող ընկերության մասին հնչեցված արատավորող տեղեկությունները տարածվել են այդ ընկերության հետ գործարար կապերի մեջ գտնվող անձանց ամբողջ շրջանակում:

Գործում առկա չէ Նաիրա Խաչիկյանի գույքային դրույթունը հաստատող որևէ վերաբերելի ապացույց...որի հիման վրա դատարանը հնարավորություն կունենար պարզել պատասխանողի գույքային դրույթունը և ըստ այդմ էլ սահմանել հնչեցված վիրավորանքին և զրպարտությանը համարժեք փոխհատուցման ողջամիտ չափ: Դատարանն ինքն է արձանագրել այն փաստը, որ պատասխանողի գույքային դրույթան վերաբերյալ որևէ ապացույց առկա չէ, սակայն, այդուհանդերձ, որպես փոխհատուցման չափ սահմանել է 50.000 ՀՀ դրամ»:

Վերաքննիչ դատարանը նաև կասկած է հայտնել, թե արդյոք 27.06.2011թ.-ին հեռարձակված հեռուստաընկերության երկրորդ թողարկումը կարելի է ընդունել որպես պատասխանողի կողմից կատարված հերքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորն ինքն է փորձել հերքել իր մասին տարածված տեղեկությունները, մինչդեռ հերքումը որպես այդպիսին պետք է տա տեղեկություններ տարածած անձը, այլ ոչ թե նա, ում մասին տարածել են տեղեկությունները: Այս հիմքով վերաքննիչ դատարանը պահանջել է նոր դատաքննության ընթացքում քննության առարկա դարձնել նաև այն հարցը, թե արդյոք հայցվորը մինչ դատական պաշտպանությունը դիմել է պատասխանողներին հերքելու իրենց հրապարակած տեղեկություններն այն նույն եղանակներով, ինչով որ տեղի է ունեցել տեղեկությունների տարածումը:

## 2. Եզրահանգում

- Լրատվական նյութն ամբողջությամբ վերաբերում է մի խնդրի, որը ներկայացնում է հանրային հետաքրքրություն. քաղաքային համայնքին պատկանող տարածքի նորոգման աշխատանքների որակին և այդ աշխատանքների ընթացքում ենթադրաբար տեղ գտած չարաշահումներին: Լրատվական նյութի իրավաչափության՝ նման ելակետային պայմաններով հանդերձ, դատական ստուգում իրականացնելիս դատարանների կողմից անկասկած պահանջվում է հաշվի առնել մամուլի «հսկող շան» գործառույթները ժողովրդավարության պայմաններում, որի միջոցով քաղաքացիներն իրականացնում են հանրային վերահսկողություն պետական մարմինների նկատմամբ: Իր այս գործառույթներն իրականացնելիս մամուլն իրավունք ունի ներկայացնել իր սուբյեկտիվ գնահատականները և դրանցում օգտագործել սուր քննադատություն և արտահայտման չափազանցված եղանակներ: Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի, լրագրողների այս իրավունքը սահմանափակվում է այնտեղ, երբ «էլ հնարավոր չէ փաստարկել, որ իրենք իրենց ներդրումն են կատարում հասարակության համար կարևոր հարցերի բաց հանրային քննարկմանը»: Սա կարելի է համարել այն բաժանարար գիծը, որով պատասխանատու լրագրությունը տարանջատվում է ոչ պատասխանատու լրագրությունից:

Տվյալ դեպքում լրատվամիջոցը նպատակ է հետապնդել հանրության ուշադրությունը իրավիճակի համայնքի միջոցներով քաղաքային համայնքում վերանորոգման աշխատանքների ընթացքում ենթադրաբար տեղ գտած չարաշահումների

վրա և այդ առումով հրահրել հանրային բաց բանավեճ: Դա անելիս լրագրողը կատարել է սուր հարցադրումներ և իր կողմից մատնանշված փաստերի վերաբերյալ տվել է չափազանցված որակումներ: Այս ամենը միանգամայն տեղավորվում է ժողովրդավարության պայմաններում մամուլի գործառույթների շրջանակների մեջ և լրատվամիջոցը չի կարող պատասխանատվության ենթարկվել չարաշահումների մասին ահազանգ բարձրացնելու համար՝ նույնիսկ եթե դա արվել է լրագրողական չափազանցություններով: Այս ամենը հաշվի է առնվել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից վիճահարույց արտահայտություններից առաջինի և երկրորդի առնչությամբ: Դատարանները «գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջևանի ճանշին ձեռնարկություն» և «երևի մասնագիտական որակի ու անաչառության պակասն է, որ ծնել է նման հետևանքներ» արտահայտությունները համարել են գնահատող դատողություններ, որոնք թեև չափազանցված են, սակայն ի վերջո ծառայում են հանրային շահին, ինքնին արատավորող չեն և որպես գնահատող դատողություններ ապացուցման ենթակա չեն: Նման մոտեցումը միանգամայն ողջունելի է:

- Բոլորովին այլ մոտեցում է ցուցաբերվել մնացած երեք արտահայտությունների նկատմամբ, որոնք դատարանը դիտել է որպես փաստի մասին հայտարարություններ («քանդել ու սալահատիկը ծածուկ վաճառել է», «Իջևանի ճանշինի թեթև ձեռքով վաճառվել են» և «Մետաղագործների փողոցի 36 միլիոն դրամի ծախսման ու մսխման աշխատանքների մասին են բարձրաձայնում բնակիչները հորդառատ անձրևներից հետո»): Խորհուրդը նույնպես գտնում է, որ նշված արտահայտությունները փաստի մասին հայտարարություններ են և, հետևաբար, ենթարկվում են այլ իրավակարգավորման՝ դրանք ենթակա են ապացուցման: Այս հանգամանքը պետք է պարտավորեցնի լրագրողներին դրսևորել հատուկ զգուցումներ և ջանասիրություն:

Խորհուրդը նախկինում արձանագրել է, որ հաճախ փաստի մասին հայտարարություն կատարելիս լրագրողները բավարար ուշադրություն կան խնամք չեն դրսևորում, որպեսզի իրենց անձը բավարար չափով տարանջատեն ուրիշի հեղինակած փաստացի հայտարարությունից, որի պատճառով ցանկացած օբյեկտիվ ընթերցողի մոտ ստեղծվում է տպավորություն, որ հայտարարության հեղինակը լրագրողն է, այլ ոչ թե այլ աղբյուր, որից օգտվել է լրագրողը: Նման հանգամանքներում հայտարարությունը վերագրվում է փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձին, որն էլ ի վերջո պատասխանատվություն է կրում դրա ճշմարտացիության ապացուցման համար: Եթե փաստերը ստուգելը լրագրողի սովորական պարտականությունն է, ապա խիստ ծանրակշիռ հանգամանքների առկայություն է պահանջվում, որպեսզի լրագրողը ազատվի դրանց համար պատասխանատվությունից: Նման հանգամանքների առկայությունը կախված է զրպարտող հայտարարության բնույթից և աստիճանից, տարածման եղանակից և թե ինչ աստիճանի վստահություն էր ներշնչում տվյալ պահին լրատվամիջոցի համար իր աղբյուրը: Վերաբերելի հատկանիշ է նաև անմեղության կանխավարկածը: Բոլոր դեպքերում, որքան լուրջ է զրպարտող հայտարարությունների բնույթը և դրա հնարավոր իրավական կամ ոչ իրավական (օրինակ՝ սոցիալական) հետևանքը անձի վրա, այնքան ավելի մեծ զգուշություն է պահանջվում ցուցաբերել փաստերի մասին հայտարարություն կատարելիս: Այս իմաստով տարածված հայտարարության համար սահմանված պատասխանատվությունը և



հայտարարության հնարավոր բացասական հետևանքները պետք է գտնվեն համաչափության մեջ:

Տվյալ դեպքում փաստացի հայտարարությունները պարունակում էին մեղադրանքներ շինարարական նյութերի և գումարների յուրացման մասին: Նման հայտարարությունները կարող են հանգեցնել անձի քրեական հետապնդմանը և պատասխանատվությանը, ինչպես նաև ընկերության գործարար համբավը վնասելուն: Պատասխանող լրատվամիջոցը և լրագրողը որևէ ապացույց չեն ներկայացրել հայտարարությունները հիմնավորելու համար, միայն հայտարարել են, որ նշված հայտարարությունները «նկարահանման ժամանակ ժողովրդից լսված խոսքեր են»:

Խորհուրդը գտնում է, որ վիճահարույց հայտարարությունները չափազանց լուրջ և արատավորող բնույթի էին, որպեսզի դրանց հիմքում ընկած փաստերը հիմնավորվեին նման անորոշ վկայություններով: Հետևաբար չի դրսևորվել անհրաժեշտ բարեխղճություն հայտարարության հիմքում ընկած փաստերը ստուգելու ուղղությամբ:

Նույն համատեքստում է Խորհուրդը դիտում նաև այն հանգամանքը, որ հայտարարությունը տարածվել էր մի քանի անգամ` Հայկական երկրորդ և «Երկիր Մեդիա» հեռուստաալիքներով, որոնք հեռարձակվում են ամբողջ հանրապետության տարածքում: Լրատվության տարածումը նման միջոցներով շատ ավելի ընդգրկում է ներգործության առումով, քան ՁԼՄ-ների այլ տեսակներով:

- Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ առաջին ատյանի դատարանը փոխհատուցման չափը որոշելիս գնահատման չէր արժանացրել այն հանգամանքը, որ տեղեկատվությունը տարածվել էր հանրապետության ողջ տարածքով հեռարձակվող հեռուստատեսությամբ, ինչպես նաև, որ առաջին ատյանի դատարանը գնահատման չէր արժանացրել պատասխանողների գույքային դրությունը, ապա Խորհուրդը, սկզբունքորեն համաձայն լինելով Վերաքննիչ դատարանի մոտեցումների հետ, առայժմ ձեռնպահ է մնում այս առումով կարծիք հայտնելուց, քանի որ նշված երկու հիմքերով դատական քննությունը դեռ գտնվում է ընթացքի մեջ:
- Ինչ վերաբերում է պատասխանողի դիրքորոշմանը, որ հեռուստաընկերության 27.06.2011թ.-ի երկրորդ թողարկումը կարելի է ընդունել որպես պատասխանողի կողմից կատարված հերքում և, հետևաբար, հայցվորը չէր կարող հայցել դատական պաշտպանություն, ապա այս առումով Խորհուրդը համամիտ է Վերաքննիչ դատարանի մոտեցման հետ, համաձայն որի առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելիս հրահանգել է գործի նոր քննության ընթացքում պարզել, թե արդյոք հայցվոր ընկերությունը մինչ դատական պաշտպանությունը դիմել է պատասխանողներին հերքելու իրենց հրապարակած տեղեկություններն այն նույն եղանակներով, ինչով որ տեղի է ունեցել տեղեկությունների տարածումը: Խորհուրդը գտնում է, որ այս հարցի պարզաբանումը գործով նոր դատաքննության ընթացքում կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ գործի ելքի վրա:
- Խորհուրդը գնահատում է նաև այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանը նկատելիորեն նվազեցրել է լրատվամիջոցի դեմ սահմանված դրամական փոխհատուցման չափը այն հիմնավորմամբ, որ հայցվորների կողմից հեռուստա-

տեսությամբ ելույթ ունենալու և իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորությամբ մասամբ վերականգնվել է նրանց խախտված իրավունքը: Գնահատելի է նաև այն հանգամանքը, որ դատական ակտը բեկանելիս Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել առաջին ատյանի դատարանի բացթողումը, ըստ որի վերջինս առանց հայցվորից կրած վնասի վերաբերյալ որևէ ապացույց պահանջելու, բացառապես իր ներքին համոզման հիման վրա սահմանել է հայցվոր ընկերության կրած վնասի չափը: Դատարանը գործով նոր քննության շրջանակներում հրահանգել է քննության առարկա դարձնել նաև այդ հանգամանքը:

## **Կ Ա Ր Ծ Ի Զ 19.**

«Խնմբագիր» ՄՊԸ-ի («report.am»), Էդիկ Անդրեասյանի և Աբել Միքայելյանի դեմ  
Չայկ Բաբուխանյանի դատական  
հայցի վերաբերյալ

Չրապարակված է 10.10.2012թ.-ին

## 1. Փաստերը

2011 թ.-ի մարտի 25-ին «Ուրբաթ» ակումբ «Խմբագիր» ՍՊ ընկերության կողմից [www.report.am](http://www.report.am) էլեկտրոնային լրատվական միջոցով հրապարակվել է «Երբ զոռով հուշում են անհուշելին» վերնագրով նյութը (այսուհետ՝ Յոդված), որի հեղինակն է Էդիկ Անդրեասյանը, և այդ նյութից բխող նույն կայքում հրապարակված տարբեր անհայտ անձանց կողմից արված հրապարակումներ (մեկնաբանություններ):

Համարելով, որ Յոդվածը և արված մեկնաբանությունները պարունակում են վիրավորական արտահայտություններ՝ Հայկ Բորիսի Բաբուխանյանը (այսուհետ՝ Հայցվոր) 2011 թ.-ի ապրիլի 21-ին դատարան ներկայացրած հայցով խնդրել է պարտավորեցնել «Խմբագիր» ՍՊ ընկերությանը, Էդիկ Անդրեասյանին և Աբել Միքայելյանին նույն լրատվական միջոցով հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից՝ համաձայն դատարանի կողմից սահմանված ձևի, ինչպես նաև պարտավորեցնել պատասխանող ընկերությանն ամբողջությամբ հրապարակել դատարանի վճիռը լրատվության նույն միջոցով՝ [www.report.am](http://www.report.am) կայքում, որտեղ հրապարակվել է նյութը և նյութի վերաբերյալ կարծիքները, միաժամանակ խնդրել է լուծել դատական ծախսերի բախշման հարցը: Գործի նախապատրաստական քննության ընթացքում Հայցվորը կատարել է հայցապահանջի լրացում՝ ներկայացնելով վիրավորանքի դիմաց նաև 1.000.000 ՀՀ դրամ փոխհատուցման գումարի բռնագանձման պահանջ:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Ա. Մելքունյան), քննելով ԵԿԴ/0790/02/11 քաղաքացիական գործը, 2012 թ.-ի մարտի 12-ի վճռով ամբողջությամբ մերժել է հայցը՝ անհիմն լինելու հիմքով:

## 2. Եզրահանգում

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.04.2011 թվականի որոշմամբ բավարարվել է Հայցվորի միջնորդությունը և հայցի ապահովման նպատակով՝ պատասխանողներ՝ «Խմբագիր» ՍՊԸ-ին, Էդիկ Անդրեասյանին և Աբել Միքայելյանին արգելվել է Հայցվորի վերաբերյալ տպագրել որևէ նյութ [www.report.am](http://www.report.am) լրատվական միջոցում և այլ անձանց կողմից տեղադրել դրա հիման վրա որևէ մեկնաբանություն կամ թույլատրել տեղադրել որևէ մեկնաբանություն, տպագրել կամ տպագրած մեկնաբանությունն այդ լրատվական միջոցում պահպանել, որը կպարունակի Հայցվորի պատվի, արժանապատվության և գործարար համբավի վերաբերյալ վիրավորանք և (կամ) զրպարտող արտահայտություններ:

Դատարանն առաջնորդվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով, որի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներից է պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը: Թեև ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված չէ այն գործողությունների ցանկը, որոնց կատարումը դատարանի կողմից կարող է արգելվել՝ որպես հայցի ապահովման միջոց, սակայն Խորհուրդը գտնում է, որ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը՝ հայցի ապահովման միջոցը կարող է կիրառվել միայն այնպիսի գործողության նկատմամբ, որն իրավաչափ է կամ օրենքով արգելված չէ, իսկ սույն գործով դատարանն արգելել է կատարել այնպիսի գործողություն, որի կատարման համար օրենքով նախատեսված է պատասխանատվություն: Դա գրեթե նույնն է ինչ-

պես, օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով կամ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարելը՝ դատարանի որոշմամբ արգելելը (օրինակ՝ դատարանի որոշմամբ հանցագործություն կատարելն արգելելը), այն դեպքում, երբ համապատասխան օրենքներով նախատեսված է ինչպես տվյալ արարքը որակելու, այնպես էլ՝ դրա կատարման համար պատասխանատվության ենթարկելու հստակ ընթացակարգեր:

Ինչպես նաև, հաշվի առնելով, որ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու մի շարք իրավունքներ և ազատություններ, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար, Խորհուրդը գտնում է, որ դատարանն իր որոշմամբ չէր կարող սահմանափակել խոսքի ազատությունը (ինչը փաստացի արել է տվյալ գործի քննության ընթացքում՝ բավարարելով Հայցվորի միջնորդությունը), քանի որ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատությունը կարող է այդ հոդվածով նախատեսված հիմքերով սահմանափակվել բացառապես օրենքով:

Բացի այդ, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ արգելվում է՝

1) գրաքննությունը,

2) որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ:

Այդպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ դատարանը, բավարարելով Հայցվորի միջնորդությունը, ըստ էության կիրառել է գրաքննություն, ինչպես նաև լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ որոշակի տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանք, որոնք արգելված են «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ որոշ խիստ առանձնահատուկ հանգամանքների ներքո օբյեկտիվորեն կարող է հիմնավոր և անհրաժեշտ պահանջ առաջանալ, որպեսզի մինչև գործով դատական քննության ավարտը կասեցվի վիճահարույց տեղեկատվության հետագա հրապարակումը: Սակայն, նման սահմանափակում նախ պետք է հստակորեն սահմանված լինի օրենքով, երկրորդ, նման սահմանափակումը պետք է ունենա խիստ նեղ շրջանակներ:

Այս իմաստով Խորհուրդը հարում է «Արտիկլ 19» իրավապաշտպան հեղինակավոր կազմակերպության կարծիքին, ըստ որի դատական արգելանքի կիրառումը պետք է

կատարվի ստորև նշված երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- **առաջին**, հայցվորը պետք է հիմնավորի, որ տեղեկատվության հետագա հրապարակումը կհանգեցնի անվերականգնելի կորուստների, որը հնարավոր չի լինի վերականգնել հետագայում կայացվելիք բարենպաստ դատական ակտով,
- **երկրորդ**, հայցվորը կարող է առանց մեծ ջանքերի ցույց տալ, ինչպես նաև ապացուցել, որ հայտարարությունն ակնհայտորեն զրպարտող բնույթի է և այդ իմաստով ցանկացած պաշտպանություն անիմաստ է:

Ինչ վերաբերում է կայքում հրապարակված անստորագիր նյութերին, որոնք, Հայցվորի կարծիքով, նույնպես կրում են վիրավորանք, ապա Դատարանն արձանագրել է, որ այդ մասով Հայցվորի պահանջները ևս հիմնավոր չեն, քանի որ տվյալ դեպքում չստորագրված և անանուն նյութերում պարունակվող արտահայտությունները դատարանը դիտում է որպես հասարակության անդամների գնահատող դատողության արդյունք, քանի որ գնահատող դատողության առկայության փաստը հաստատված համարվելու համար առկա են բոլոր էական նախապայմանները, մասնավորապես՝ նյութի առկայության պարագայում հիշյալ անձինք արտահայտել են կարծիքներ՝ ունենալով որոշակի փաստական հանգամանք և բարի կամքի դրսևորում, որպիսին եղել է կայքում տպագրված նյութը:

Խնդրի կապակցությամբ դատարանը նաև արձանագրել է, որ լրատվամիջոցը չէր կարող նախքան Հայցվորի գրավոր կամ բանավոր դիմելը սահմանափակել իր իսկ ընթերցողների ազատ արտահայտվելու իրավունքը (օրինակ՝ մեկնաբանությունները ջնջել, հեռացնել), քանի որ այն կդիտվեր ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ուստի և լրատվամիջոցը չի կարող կրել պարտականություններ այլ անձանց կողմից թողնված մեկնաբանությունների համար, քանի որ, նախ՝ առկա չէ վերջինիս դիտավորությունը Հայցվորի հետ տեղի ունեցածի մեջ, ինչպես եւ արտահայտությունները տարածած անձանց պարզելն անհնար է, քանի որ վերջիններս հանդես են եկել իրենց ծածկանուններով և թողել են իրենց մեկնաբանություններն առկա նյութի վերաբերյալ: Բացի այդ, դատարանը նաև նշել է, որ նյութի վերաբերյալ անստորագիր անձանց կողմից թողնված արտահայտությունները սուբյեկտիվ գնահատականներ են՝ կարծիքներ, որոնք պայմանավորվել են հասարակական գերակա շահով՝ կապված հրապարակված նյութի հասարակական ու քաղաքական հատուկ նշանակությունից:

Համաձայնվելով Հոդվածի մեկնաբանությունների («comment»-ների) վերաբերյալ դատարանի եզրահանգումների հետ՝ Խորհուրդը նպատակահարմար է համարում նշել, որ «Հրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Արթուր Գրիգորյանի հայցի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի վերաբերյալ 2012 թ.-ի մայիսի 30-ին հրապարակած իր եզրակացությամբ Խորհուրդն արդեն անդրադարձել է «comment»-ների խնդրին և գտել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թ.-ի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև ցանցային լրատվամիջոցների հարթակից տարածվող «comment»-ների պարագայում: Այդ կապակցությամբ Խորհուրդը կրկին անգամ կոչ է անում՝

- զանգվածային լրատվության բոլոր միջոցներին իրականացնել ընթերցողների մեկնաբանությունների մոդերացիա՝ ազատ արտահայտվելու իրավունքի համարաճանաչ սկզբունքների ներքո:
- ցանցային լրատվամիջոցներին մշակել և իրենց ինտերնետային կայքերում տեղադրել մոդերացիայի կանոններ, որպեսզի դրանք տեսանելի լինեն ընթերցողներին, և այդպիսով՝ ապահովվի մոդերացիայի կանոնների կիրառման հստակություն և թափանցիկություն:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ այն խնդրին, որ պատասխանողի կարծիքով՝ «եթե հայցվորները գտնում են, որ վիճարկվող հոդվածով որևէ կերպ խախտվել են վերջիններիս իրավունքները, ապա նրանք պարտավոր էին «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում և կարգով պահանջել հերքելու տարածված տեղեկատվությունը: Հայցվորների կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրենց իրավունքներից չօգտվելու հանգամանքը ... զրկում է վերջիններիս նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունից»:

Քննարկվող գործով վճռի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդն արձանագրում է, որ դատարանը մանրամասն անդրադարձել է խնդրին՝ հիմնավորելով դրանց անհիմն լինելը:

Խորհուրդը, համաձայն լինելով դատարանի դիրքորոշմանը, արձանագրում է, որ պատասխանողի ներկայացուցչի այն պնդումը, որ Հայցվորների կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրենց իրավունքներից չօգտվելու հանգամանքը զրկում է նրանց նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունից կամ այլ կերպ ասած՝ անձը միայն հերքում պահանջելուց հետո կարող է դիմել դատարան պահանջը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, քանի որ մինչև դատարան դիմելը հերքում պահանջելն անձի իրավունքն է, այլ ոչ թե՝ պարտականությունը:

### **Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգման.**

1. պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը՝ հայցի ապահովման միջոցը կարող է կիրառվել միայն այնպիսի գործողության նկատմամբ, որն իրավաչափ է կամ օրենքով արգելված չէ, իսկ սույն գործով դատարանն արգելել է կատարել այնպիսի գործողություն, որի կատարման համար օրենքով նախատեսված է պատասխանատվություն:
2. դատարանն իր որոշմամբ չէր կարող սահմանափակել խոսքի ազատությունը, քանի որ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի եւ Մարդու իրավունքների և ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խոսքի ազատությունը կարող է այդ հոդվածով նախատեսված հիմքերով սահմանափակվել բացառապես օրենքով:
3. դատարանը, բավարարելով Հայցվորի միջնորդությունը, ըստ էության կիրառել է գրաքննություն, ինչպես նաև լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ որոշակի տեղեկատվություն տարածելուն կամ դա տարա-

ծելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանք, որոնք արգելված են «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

4. «Հրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Ա. Գրիգորյանի հայցի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի վերաբերյալ ՏՎԽ-ն իր եզրակացությամբ անդրադարձել է խնդրին և եկել եզրահանգումների, որոնք կիրառելի են նաև այս գործով:
5. պատասխանողի ներկայացուցչի այն պնդումը, որ Հայցվորների կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրենց իրավունքներից չօգտվելու հանգամանքը զրկում է նրանց նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորությունից կամ այլ կերպ ասած՝ անձը միայն հերքում պահանջելուց հետո կարող է դիմել դատարան, չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ըստ որի՝ մինչև դատարան դիմելը հերքում պահանջելն անձի իրավունքն է, այլ ոչ՝ պարտականությունը:



## Տեղեկատվական վեճերի խորհուրդ

**Շուշան Դոյրոյան** (խորհրդի քարտուղար)

Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

**Մանանա Ասլամազյան**

«Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

**Բորիս Նավասարդյան**

Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան**

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Արա Ղազարյան**

«Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

idc@gmail.com

<http://www.foi.am/hy/IDC/>





---

---

# **INFORMATION DISPUTES COUNCIL**

collection of opinions



Yerevan 2012

**Developed by:**

Shushan Doydoyan

Ara Ghazaryan

Gevorg Hayrapetyan



This publication is made possible by the support of the OSCE Office in Yerevan. The contents of this publication are the sole responsibility of the Information Disputes Council and Freedom of Information Center of Armenia, and do not necessarily reflect the views of OSCE Office in Yerevan.

# Contents

<b>FOREWORD</b> .....	<b>5</b>
<b>Thematic Categories of IDC Decisions</b> .....	<b>6</b>
<b>Opinion 1.</b> On the Court Case Filed by the RA Second President Robert Kocharyan vs. "Hraparak" Daily.....	<b>9</b>
<b>Opinion 2.</b> On the Court Case Filed by the Member of Parliament of the RA Tigran Arzaqantsyan vs. "Erkir" Daily.....	<b>10</b>
<b>Opinion 3.</b> On the Court Case Filed by the Member of the RA Parliament Tigran Arzaqantsyan vs. "Iravunk" Newspaper.....	<b>12</b>
<b>Opinion 4.</b> On the Court Case Filed for the Article "Seven out of Eight are in the List" Published in "Haykakan Zhamanak" Daily.....	<b>13</b>
<b>Opinion 5.</b> On the Article "Know the Pharaoh" Published in the "Chorrord Inqnishkhanutyun" Newspaper and its Website.....	<b>16</b>
<b>Opinion 6.</b> On the Court Case Filed by Citizen Gurgen Aghajanyan vs. "Zhoghovurd" ("People") Daily.....	<b>19</b>
<b>Opinion 7.</b> On the Lawsuit Filed by the Religious Organization "Word of Life" and the Head of Organization Arthur Simonyan vs. "Iravunk Hetaqnnutyun" and "Argumenti Nedeli v Armenii" Periodicals.....	<b>21</b>
<b>Opinion 8.</b> On the Court Case Filed by Attorney A. Grigoryan vs. "Hraparak" daily.....	<b>23</b>
<b>Opinion 9.</b> On the Lawsuit Filed by Arman Avetisyan vs Levon Barseghyan.....	<b>26</b>
<b>Opinion 10.</b> On the Verdict of the RA Court of Cassation on the Case Tatul Manaseryan vs "Skizb Media Kentron" LLC.....	<b>28</b>
<b>Opinion 11.</b> On the Verdict by the First Instance Court on the Case of Gevorg Hayrapetyan vs. "Multi Media Kentron TV" CJSC.....	<b>30</b>
<b>Opinion 12.</b> On the Court Case Based on the Lawsuit against "Skizb Media Kentron" LLC Filed by "Glendale Hills" CJSC.....	<b>33</b>

---

<b>Opinion 13.</b> On Murad Asryan vs "Media Consult" Ltd. Court Case.....	<b>39</b>
<b>Opinion 14.</b> On the Verdict on the Case of "Word of Life" and the Head of Organisation Arthur Simonyan vs. "Iravunk Hetaqnnutyun" and "Argumenti Nedeli v Armenii" Weeklies.....	<b>47</b>
<b>Opinion 15.</b> On the Court Case "Yerevan State University" State Non-Commercial Organization and Ara Gabuzyan vs "Banadzev" LTD and Sirekan Yeghiazaryan.....	<b>49</b>
<b>Opinion 16.</b> On the Court Case Filed by Daniel Ioannisyan, Bayandur Poghosyan and Hasmik Simonyan vs "Mek Azg" Party.....	<b>52</b>
<b>Opinion 17.</b> On the Court Case filed by Hayk Babukhanyan and "Iravunk Media" LTD vs "Khmbagir" LTD and Journalist Edik Andreyan.....	<b>55</b>
<b>Opinion 18.</b> On the Court Case Filed by "Ijevan Road Construction Enterprise" CJSC vs. "Ijevan Studio" Ltd and journalist Naira Khachikyan.....	<b>58</b>
<b>Opinion 19.</b> On the Court Case Filed by Hayk Babukhanyan vs "Khmbagir" Ltd. (report.am), Edik Andreyan and Abel Mikayelyan.....	<b>62</b>



# Foreword

**T**he Information Disputes Council was created in May 2010 as an extra-judicial body with an aim to strike a balance between the rights to free expression and information from the one hand and the right to protecting honour, dignity and secrecy of private life from the other. The main objective of the Information Disputes Council (hereinafter - IDC) is to protect freedom of expression, access to information, as well as the right to protecting honour and dignity and the right to personal life, by publishing opinions or statements in cases when judicial disputes occur while exercising these rights, in line with Armenian legislation, international legal acts and ethical norms.

Since its establishment till October 2012 the Council has published 19 opinions concerning court cases filed against the media. This Collection comprises all opinions published during 2011-2012, i.e. presents the result of the IDC's one year activity.

